



ԴՈԿՏ. ՅՈՎՀ. ԱՐԹԻՆԵԱՆ

Նախկին Բժիշկ Նաևսիի
Ներքին Բժիշկ Ֆրանս. Հիւանդանցին Կ. պոլոց

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏՈՒՆԿԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱՑԿԱՆ Ա. Յ.

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

LES PLANTES DE LA BIBLE

d'après la version Arménienne du Ve siècle
par le

DOCTEUR JOHANNES ARTIGNAN
médecin interne de l'Hôpital Français
de Constantinople



Tout droits réservés

Կ. ՊՈԼԵՏՈ
Տպարան՝ Խ. Խ. Ա. Յ. ԹԵՂԺԵՑՈՒՆ

1913

ДРУГИЕ ПРИЧАСТИЯ
какие есть в языке.
Всего 32 вида.
Чтобы познакомиться
с ними и употреблять
их в письме. Читай
14 главу. 1950

Մայր իմ,

Յիշտակիդ կը ձօնեմ այս երկու, բա-
ժանանանց խանելուսաւեալին առքիւ :

Քեզի հետ սորվեցայ կարդալ եւ սի-
րել Սր. Գիրքը, երբ դեռ փոքր էի, հօրո
մահուանեն յետոյ: Քու անհուն զորովդ
զօրավիզս եղաւ խանելերկու տարուան
պանդիսուրեանս օրերուն, եւ քու վիշտերդ
չաւելցնելու իղձս արգիլեց զիս փորձու-
թիւններէ միայնուրեանս մէջ:

19 *Մարտ* 1913

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏՈՒՆԿԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԱԾ

ՄԵՐ ՆԱԽՆԵՍԱՑ ԹԱՐԳԱՄԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՀԱԳՆԻ

Այս ծառի անունը յիշուած է Աստուածաշունչի մէջ երկու տեղ.

1. «Եւ առնուցուք ձեղ յաւուրն առաջնում պտուղս զգեղեցիկ ծառոց, կողերս յարմաւնեաց և ոստս ի տերեւախիտ ծառոց և յուռեաց և ոստս հազնեաց ի ձորոց :» Ղեւտ. իդ. 40:

2. «Հովանոցանան ընդ նովաւ ծառք մեծամեծք հանդերձ անտառօք և ձողք հազնւոյ :» Յովլք. կ. 17 :

Աստուածաշունչն զառ հազնիի յիշատակութիւնը կը գտնենք Խորենացւոյ «Յաղագս վարդավառին խորհրդոյ» ճառին մէջ, [Մատենագրութիւնք Խորենացւոյ էջ 330] ուր քերթողահայրը կ'ակնարկէ Ղեւտական զրքի իդ. 40 համարին :

Ղեւտացւոց զրքին մէջ Տէրը կը պատուիրէ Խորայելացւոց, եօթներորդ ամսոյն տասնեւհինգերորդ օրը, երբոր երկրին արդիւնքը բռվանդակուած են, կատարել տաղաւարահարաց տօնը ի յիշատակ իրենց եգիպտոսէ ելլելուն,

յորժամ տաղաւարներու մէջ բնակեցան . ու
այս տօնը կատարելու համար պէտք էր որ
իսրայէլի զաւակները արմաւենիի կողեր և
ուռիի ճիւղեր առնէին հետերնին , այսինքն
ուրախ լինէին , սակայն մաքուր և անքիծ ու-
րախութիւն մը քանի որ ուռենին Սուրբ Գրոց
մէջ “նշանակ է կուսութեան , անքութեան ,
քանզի անոր ծաղիկները , ջուրի մէջ հալեցու-
նելով երբ խմուին , կեանքը կը գերածնեն և
ցանկութիւնները կը մարեն ու երեսն յառաջ
կը բերեն կատարեալ ամլութիւն : Հոմերոս ալ
անոր վրայ խօսելով՝ (մարդկային) պտուզը
փնացնող կը կոչէ ուռենին :” (Photius in Pat-
rologie grecque de Migne. հատոր 103 , սիւ-
նակ 1,161) :

Եօթանասնից Յունական թարդմանութիւնը,
որմէ զարձուած է Հայերէնը , կ'աւելցնէ եւ
ուսս հազնեաց , այնու ունակուած , agnī ramos , ինչ
որ կը պակսի Երրայական բնազրին մէջ :

Եթէ ուռենին նշանակն էր ամբծութեան
Հրէից մէջ , ἄγνος 'ազնոսը , զոր թարդմանիչք
Հայացուցած , ըրած են հազնի , Յունաց մէջ
խորհրդանշանն էր զգաստութեան , ողջախո-
հութեան , “որ կը մարէ չար կիրքերը եթէ
անկէ ուտուի կամ նոյն իսկ իրրեւ անկողին
զործածուի , ու իր անունը դրուած է այդ հա-
մարին մէջ զգաստութիւն յիշեցնելու համար :”
(Théodore d'Antioche in Patrologie grecque de
Migne, հատ . 80, սիւնակ 341) :

Մանաւանդ որ հին Յոյները ունեին տօն

մը , Դեմետրի՝ հունձքի , երկրագործութեան , և
քաղաքակալութութեան դիցուհւոյն , տօնը որ
Հրէից Տաղաւարահարաց տօնին կը պատաս-
խանէր :

Դեմետրի խորհրդաւոր տօները կը կատար-
ուէին Ելեւսիսի մէջ աշնան քաղոցէն ու ձըմ-
րան ցանքէն յետոյ , Նոյեմբերին , և կը տեւէին
6 օր : Պղուտոն , Դեմետրի աղջիկը , Պէրսեփո-
նէն կ'առեւանդէ և կը տանի դժոխք հունձքի
ժամանակը . Դեմետր զանիկա կը վնտոէ ցան-
քի ատեն . Արամազդի միջնորդութեամբ կ'որոշ-
ուի որ Պէրսեփոնէ վեց ամիս դժոխքը
անցունէ Պղուտոնի հետ և վեց ամիս երկ-
րի վրայ Դեմետրի հետ (ասոնք կը նշանա-
կեն գարնան և աշնան արեւադարձները) :

Աթենացի կանայք մեծ հանդիսաւորու-
թեամբ կը մասնակցէին այս տօներուն և որ-
պէս զի ամբողջ տեւողութեանը զգաստ և մա-
քուր մնային , հագնիի տերեւներէ անկողիննե-
րու վրայ կը պառկէին :

Հագնին , ոչ միայն Յունաց , այլ նոյն իսկ
միջին դարու մէջ ի պատուի էր . վանքերու
բակերուն և պարտէզներուն մէջ տնկուած էր
ու միանձունք անոր ստուերին տակ կը ճառէ-
ին զգաստութեան վրայ (Méthode. Patrologie de
Migne հատ . 18. սիւնակ 34): Վարդապետները
իբրև պահապան սրբութեան և արդելիչ բղջա-
խոհութեան , հագնիի տերեւներէ դօտի կը
կապէին , փայտէն կը շինէին յուռութ , և կ'ու-
տէին սերմները :

Բերնարդինոս Ակորդինիոս արքան է . դարուն կը գրէ որ ջրթափութեան լաւ դարման է հազնիի տերեւներ դնել կերակուրին և ըմպելիքին մէջ և յաճախ ձեռքը պահել հազնիի փայտէ կոթով դանակլ մը :

Պղինիոս ալ կը գրէ թէ ցինի բոյնէ առնուած հազնիի շիւղ մը իրեւ յուռութ կը բուժէ վիզի ջիղերուն պրկումը :

* * *

Յովայ Խ . 17ին մէջ Հայերէն բնագիրը բոլորովին կը հետանայ միւս բնագիրներէն . Բեհնեմովդ գաղանին նկարագրութիւնն ընելով՝ կ'ըսէ . « Հովանոցանան ընդ նովաւ ծառք մեծամեծք հանդերձ անտառօք և ձողք հազնւոյ : »

Երրայական բնագիրը կը գրէ . « շուրջ պատին զնովաւ ուռիի հեղեղատի . , իսկ Ասորերէնն ունի ուրափէ՝ Տր նախա . » ագռաւք հովտին : » Յունական բնագիրներն առ հասարակ կը դնեն չկանուն աշխատ ագրի , ձոյլի դաշտին , և այս պարագան է որ Ալիշանը կը շփոթեցնէ Հայրուսակին մէջ և ըսել կու տայ իրեն . » Ար . Գրոց մէջ յիշուի տեղ տեղ , բայց բնագիրն և ուրիշ թարգմանութիւնք միշտ նոյն բան չեն դներ : »

Սակայն կան ուրիշ Յունական ձեռագիրներ որպէս Են Codex Alexandrinus A, Codex Bezae D որ կը դնեն այնու և ոչ այզու , ինչ որ ցոյց կու տայ թէ Հայերէն Աստուածաշունչը թարգմանուած է այս վերջին ձեռագիրներու վրայէն :

* * *



Հազնի .— *Vitex agnus castus* L.

Հազնի(*)—*Vitex agnus-castus* L. Gattilier—
ծառատունկ է աղաւիճներու տոհմէն , Մի-
ջերկրականի շրջափակ երկիրներու յատուկ ,
2-3 մէթր բարձրութեամբ . ոստերը շատ ճա-
պուկ են ուսենւոյ ճիւղերու նման : Տերեւները
ընդդիմադիր , բարդ են բազմամատն , 5-7 սրա-
ծայր երկայնելել տերեւներով , ինչպէս կանե-
փին տերեւները և ամբողջ են , այսինքն եղ-

(*) Քաջունիի բառարանը հազնի , peuplier ,
կր գնէ , ինչ որ սխալ է :

ըերը ատամն չունին : Ծաղիկները , երկշուրթն ,
անկանոն , կապոյտ , մանիչակագոյն , երբեմն
սպիտակագոյն , կը կազմնն անուշահոտ ող-
կոյդներ բազմածաղիկ , անկոթ , բնդդիմադիր
տերեւներու անութէն բարձրացող հասկի մը
երկայնութեամբ : Պտուղը , սեւուկ , մանր է ,
կորիղը չորս խորշ ունի միասներմ : Մանր սեր-
մնը կարմրուկ պղպնդի հատիկներու կը
նմանին :

* * *

Յայտնի է թէ թարդմանիչ հայրերը ազ-
նուսին Հայերէն բառը չէին դիտեր , կամ գու-
ցէ չէին ճանչնար տունկը որով շատ յաջողու-
թեամբ հայացուցին զայն և շինեցին հաղնի :
Սակայն մեր նախնեաց մատենագրութեանց
մէջ կը գտնենք կանկիուկ և խնկողկուզիկ ա-
նունները որոնք կը պատշաճին հաղնիին :

«Թուփի ինչ է (կանեփուկը) , կ'ըոէ եզնիկ ,
որոյ սերմն նորա դեղ է , և նոյն դարձեալ
կասեցուցիչ ցանկութեան : »

Մխիթար Գոշ իր Ա. առակին մէջ կը գրէ .
«Աղաղակէր երբեմն խնկողկուզիկ՝ թէ ես
պատճառ եմ սրբութեան քահանայից . և զոմն
ստգտանէր զծաղիկ , զի արժատ նորա տիբողի-
տականին է շարժող : Եւ զայս լուեալ քահա-
նայ ոմն չարչարեալ ի ցանկութենէ՝ և եղ զնա
ի հանդերձ իւր , և ինչ ոչ օգտեալ թշնամանէր
զինկածաղիկն իրեւ զսուտ ոք : Եւ նորա
դարձուած արարեալ ասաց . Զի ի հանդերձ քո
և ոչ ի սիրտ զիս եղիր , յաղագս որոյ ոչ ինչ
օգտեցար . . . : »

Գալիքանոսի բառերուն մէջ կը դանենք .
իմկատերեւ . Հապ-ըլ-ֆակտ , փանջանկուշտ .
այս վերջին անունները կը նշանակեն Արարե-
րէն և Պարսկերէն լեզուով Vitex agnus castus :

Ունինք նոյնպէս ճապկի որ կու տայ Յու-
նարէն Լիւզոս բառին իմաստը , այն է Հագնի :

* * *

Ալիչան Հայրուսակին մէջ հագներգութիւն
բառը հագնիէն կը հանէ .

«Հագներգութիւն կը նշանակէ , կ'ըսէ , ովու-
ցագնական կամ յաղթողական երդ զոր կ'ըս-
ուի թէ կ'երդէին ձեռուընին այս ծառիս ճիւ-
ղեր կամ զաւազան առած» (Էջ 345) . Ինչ որ
սխալ է :

Հագներգութիւն կը նշանակէ կցկտուր եր-
գեր իրար կարուած , հազուցուած . «Է մասն
քերթածացն . . . և ոգեալ է ի հագնելոյ կար-
կատուն բանս . . . »

(Եջմիածնայ ձեռագիր 1983^ա :

Հագներգութիւնն է Յունարէն Rhapsodie
«Ռաֆիչ , ուսիսիս բառէն , որ է կար և ոչ Բարիչ
ուսիսիս , զաւազան :

* * *

Հագնիի ծառ հանգիպեցանք այս տեղ Քաղ-
կեդոն Մօտայի պողոտային վրայ , պարտէզի
մը պատին կից . Անատոլուի երկաթուղիի գծին
երկու կողմը իզմիտի մօտ և Ատարազար Սա-
քարեզը թաղը , Տաճիկ գերեզմանատան մը
բոլորտիքը :

ՀԵՐՁԻ, ՍԼՈՑԻ

Հերձի Σχῖνος.— Schinus.— Lentisque.— Lentiscus Mathiolii comm. 109.— Lentiscus Vulgaris C. Bauh. Pen. 399. Tournefort Inst. 580.— Pistacia lentiscus L.— mastixbaum, mastixpistacia.—

ساقر آجى. شجرة المصطكي. ضرو

Աղոցի. Բալամուտ Աղածը.— Πλάνος. ἀγριοβάλανος. Ilex.— yeuse, chêne vert.— Quercus ilex, var. Quercus coccifera (chêne kermès).

Աստուածաշունչի երկրորդական թղթոց, Դանիէլի Գրքէն Շուշանայ պատմութեան մէջ միայն կը գտնուի հերձիի և սղոցիի յիշատակութիւնը :

Հրէից գերութեան ժամանակն էր ի Բարելոն, և Դարուն (Ն. Ք.). Խորացէլի ժողովուրդը, թէև զերի, իրաւունք ունէր ըստ Մովսիսական օրինաց կառավարուելու և ամէն տարի իր մէջէն կ'ընտրէր դատաւոր :

Երկու անառակ ծեր դատաւորներ կը զարնուին գեղեցիկ Շուշանին. ասիկա կինն էր Յովակիմ անուն հարուստ Հրեայի մը որուն ընդարձակ բուրաստանին մէջ կը կատարէին իրենց դատաստանները : Օր մը, մինչ Շուշան դարաստանին մէջ կը լոգանար, երկու ծերերն իրենց թաքստոցէն կ'ելլեն անոր առանձնութենին օգտուելու համար : Սակայն ի բաց մեր-

ժուելով՝ կը ջանան զրպարտել զինքը ժողովը դերդեան ծերերուն առջև ու մահուան զատապարտել ըստ Մովսիսական օրէնքին, երիտասարդի մը հետ գտնուած լինելու ամբաստանութեամբ :

Այդ միջոցին է որ տղայ մը, Դանիէլ, կը բողոքէ և կը հրամայէ զատել այդ երկուանզգամ ծերերը, հարցաքննելու համար զանոնք առանձինն . առաջինին կը հարցունէ .— Բայց եթէ տեսեր զգոսա, ընդ որո՞վ ծառով հասեր առ դոսա՝ մինչ խօսէին ընդ միմեանս :

Եւ նա ասէ ընդ Հերձեաւն : Ասէ Դանիէլ, Բարւոք ստեցեր ի քոյին գլուխդ . ահաւասիկ հրեշտակի Աստուծոյ առեալ հրաման, հերձց զքեզ ընդ մէջ :

Նոյն հարցումը կ'ուղղէ Դանիէլ երկրորդին, որ կը սպատասխանէ .— Ընդ սղոցեաւն: Ասէ ցնա Դանիէլ, Բարւոք ստեցեր և զու ի քոյին գլուխ, զի կայ աւասիկ հրեշտակ Աստուծոյ սուսեր մերկ ի ձեռին՝ սղոցել զքեզ ընդ մէջ :

* * *

Այս հատուածին մէջ բառախաղ մըն է որ կատարուած է հերձի, հերձանել և սղոցի, սղոցել բառերով . Յունարէնն ալ ունի զայս.— Նոյնու, ընդ հերձեաւն . . . σχίσει սε մέσոν . հերձցէ զքեզ ընդ մէջ :

‘Υπὸ ποῖνον ընդ սղոցեաւն, Πρίσαι σε մέσον . . . սղոցել զքեզ ընդ մէջ :

Լատինական Վուլգատան կը փորձէ նոյն

բանն ընել, բայց կը յաջողի միայն կիսովին.—
Sub schino... scindet te medium.— Sub primo,
... secet te medium.

Դանիէլի գրքին այս մասը Յունարէն միայն
գոյութիւն ունի ու կը նկատուի իրեւ երկ-
րորդականոն, քանզի երբեք գտնուած չէ անոր
Երրայեցերէն բնագիրը, եթէ գոյութիւն ունե-
ցած իսկ է, ու անկարելի կը նկատուի որ Եր-
րայեցերէնը թոյլատու ըլլայ այսպիսի բառա-
խաղի մը : Եթէ ենթադրենք որ բուն բնագիրը
Քաղցէարէն եղած ըլլայ, կարելի կ'ըլլայ դնել
հերձիի տեղ պիտուկայ (pistache = ֆըստըք) և
պըսակ (երկուքի բաժնել), ինչպէս որ կայ Ա-
սորերէն թարգմանութեան մը մէջ :

* * *

Հերձի և Սղոցի բառերը պարզապէս թարգ-
մանութիւններ են Հշենօս և Պօւնօս անուննե-
րուն, զի մեր հին զրականութեան մէջ ոչ ու-
րեք կը գտնենք զանոնք, սակայն այնպիսի
ճարտարութեամբ հայացուցուած են և ներ-
դաշնակ՝ որ կարելի չէ չսքանչանալ թարգմա-
նիչ հայրերուն վրայ. աննման վարպետներ,
որոնց ամբողջ երկը զլուխ գործոց մըն է :

* * *



Հերձին — *Pistacia Lentiscus* L.

Հերձին *Lentisque*, *Pistacia Lentiscus* L. այն ծառն է որ տարածուած է Միջերկրականի ծովեղերեայ երկիրներու բոլոր անջրդի վայրերուն մէջ. Քիոսի մէջ առատօրէն կայ, կը կոչուի Սաղրդ աղամը. անոր ծուռիկ ճիւղերէն կը քաղեն մազտաֆէ (mastic) կոչուած ուստինը զոր Արեւելքի մէջ կանայք կը գործածեն իրքեւ ծամոն, ծամելու ձիւթ:

Հերձին ծառատունկ է 1—3 մէթր բարձրութեամբ, ուստնային զօրաւոր և անախորժ հոտ ունի, տերեւները մշտատե (persistante) են 4—10 ծուածե, բթածայր տերեւիկներով, որ զոյգ բուռվ՝ ընդգիմադիր են, կարծր, վրան փայլուն, տակը գունատ և աղօտ. Տերեւներու կորիկը (pétiole) թեւաւոր է. ծաղիկները հոծ, հասկածե ողկոյզներ կը կազմեն մէկ կամ

երկու հատ, տերեւին անութէն ելած ու հաղիւ տերեւիկի մը երկայնութիւնը կ'ունենան, ծաղիկներու կոթը (pédicelle) շատ կարճ կ'ըլլայ. ծաղիկներուն բաժակն ունի 5 փերթ, իսկ էպենը՝ 3—4. թերթ չունին. 5 առէջ ունին բաժակին խորը կցուած, յատակէն իրար միացուած հինգ թելերով, խոշոր, չորսանկիւն կկչաններով. սերմնափակին ծիլը (style) շատ կարճ է, 3 դէպի ի դուրս դարձած սոսորդներով (stigmate):

Պտուղն է փոքրիկ, կլորիկ և սրածայր. նախ կարմիր կ'ըլլայ, յետոյ հասուննալով կը սկնայ:

Հերձին կը ծաղկի Ապրիլ-Մայիս ամիսներուն և պտուղը կը հասնի Հոկտեմբեր—Նոյեմբերին:

Իր ամէն մասերը պնդիչ են, պտուղէն կը հանեն իւղ մը որ իրը ձէթ կը գործածուի: «Նաքսիայ կղզիին մէջ» կ'ըսէ Tournefort I. 214, «հերձիի իւղ կը վառեն. հերձիները ահապին քանակութեամբ հատիկներ կու տան զորս տեղ մը կը լեցունեն ու քանի մը օր յետոյ կը սեղմեն, կը քամնն: Այս իւղը շատ լաւ է փորհարութեան, հոսումներու և խիթի համար», Սակայն հերձիին կարեւորագոյն արտադրութիւնն է Մազտաֆէն զոր կը հաւաքեն բունին և ճիւղերուն վրայ ճեղքեր բանալով Յուլիս ամիսին:

Մէկ ծառը 4-5 քիլոյ մազտաքէ կու տայ և Քիոս տարին 30-40,000 քիլոյ կ'արտածէ:

* *

Իսմայելացի վաճառականները Դաղաադէն եգիպտոս կը տանէին խունկի և ստաշխնի հետ ուսին, Երրայեցերէն սորի, որ է հերձիին ձիւթը, մազտաքէ. սորի միեւնոյն բառն է Արաբերէն զարու կամ տարոփ հետ, որ կը նշանակէ հերձի (Ծն. Լէ. 25):

* *

Հերձին և սղոցին անբաժան ընկերներ են ու միասին կը գտնուին Միջերկրականի երկիրներուն անտառաց մէջ: Սղոցին yeuse, chêne vert, Quercus ilex L. կաղնիի տեսակ մըն է որու տերեւները տեւական են (2-3 տարի) և կանաչ, chêne vert, աւելի թանձր ու փշոտ. իր բարլուտը (gland) անուշ է և Սպանիոյ, Ալճերիոյ մէջ իրրեւ շագանակ կ'ուտուի, 2-15 մէտր բարձրութիւն կ'ունենայ. մէկ տեսակը կայ նուազ բարձր, կէս մէտրէն մինչեւ երկու մէտր բարձրութեամբ, աւելի փոքր ու փշոտ տերեւներով որու բալուտին կծեպն (cupule) ալ փշոտ է և կը կոչուի quercus coccifera, chêne kermès, ասոր վրան կը բնակի որդան կարմիրը, տեսակ մը միջատ որ իրը գեղեցիկ կարմիր ներկ կը գործածուի: Իշխանաց կղզիներուն և Տաճկաստանի մէջ առատօրէն կը գտնուի սղոցի, բարամուտի ծառ:

Սղոցին կը նկատուի Երրայեցերէն ժիրզահ որ գործածուած է Եսայեայ իշ. 14ին մէջ ու-

րիշ ծառի անուններու հետ . Վուլզատան կը
թարգմանէ Առք . իսկ Ակիլայի Յունարէն թարգ-
մանութիւնը կը դնէ ձգրութանոց . Եօթանասնից
թարգմանութիւնը լոկ պետչ, բոլ , չամ ըսելով
կ'անցնի . իսկ Հայերէնն ունի . "ղայն փայտ
զոր եհատն, զսարոյն կամ զսօմն, զկաղնին
կամ զթեղօչն, զոր տնկեաց տէր և աճեցոյց ;
Այս վերջին հատուածին ուսումնասիրու-
թիւնը պիտի ընենք իր կարգին :

—



ա ունենածոց Հայուացու միջարք և աշխարհ
ու պատմութեաց Ա մեռաւոր ով մեռանի ոտ
տուն ունաշ մերայի շամ զառանու և ուզանուն
է մայն ժուառա կիրքութ . Լ ու օւշան . Յ Ա
և կիւառուն . Ն ամ տավութու պրկմաշն տայն
ով սուրէ ու վեհակ անու և առ տակ ուղարք
ուշան . Ո Ա ու Վ անուրա և այս քնն անի
ան պատմու Ա Տ առանձունիք մահթառանուն
ուշուն ուղամն . Շ պատմունիք այս անուն
ուշուն ու գուշուն այս ու , պատմանունիք պատ
մուն . Ո Ա ու Վ անուրա և առ խորքն մահթ
ուշուն ուշուն . Խ պատմունիք և Ո անուն ան
անուրա պատմուն ի ճայթ պատմուն Ջ պատմուն
Ա պատմուն . Ո անուրա ու վասուն անուրա քա
գանունիք . Ե պատմուն ով ուղամ պատմուն փա
թուածուն . Զ պատմունիք և Ե պատմուն

ԲԵՒԵԿՆԻ

Բեւեկնի.— Τερέβινθος.— térébinthe.— Pistacia Terebinthus L.— P. Atlantica Desf.— P. Palestina Bois.— T. vulgaris Cup.— *ar.* ماء العصارة بـ *nirf.* լամ կամ دن بـ بـ جـة الحـضـرـا بـ طـمـعـا *պարու.* دهن الرايـنج حـبـ الـبـطـمـ *պտուղը.* իւղը — چـيـلـاـفـوـجـ روـغـنـ رـاتـانـهـ

Բեւեկնին և հերձին իրարու շատ նման տունկեր են և բուն ուտուղղ պիստակին (Pistacia vera L.) հետ բեւեկնեաց տոհմին մէջ պիստակենիներու սեռը կը կազմեն, ունենալով երեքն ալ այդ սեռին յատուկ նկարագիրները. առանձին որձ և էզ ծաղիկներ ունին, հնգամաման բաժակով, անթերթ և 5 տոէչով. ծիլը շատ կարճ է, սոսորդները դուրս ծռած են, պտուղը (Drupe) մէկ կորիզ, մէկ ունդ ունի :

Բեւեկնին և հերձին այնչափ իրարու մօտ են որ յաճախ իրարու հետ շփոթուած են, երկուքն ալ կու տան ռետին : Երկուքն ալ ողկուզաւոր ծաղիկներ ունին բարդ տերեւներու անութէն ելած. երկուքին ալ փայտը լաւ վառելիք կ'ըլլայ :

Սակայն իրարմէ կը տարբերին անով որ հերձիին տերեւներուն բաժանումները զոյզ քիւով (pariennées) 4-10, են, տեւական. տերեւներու կոթիկը թեւաւոր է երկու կողմէն, ծաղիկները կարճ հասկեր կը կազմեն :



Բեռեկնիին. — *Pistacia Terebinthus* L..

Բեռեկնիին տերեւներուն բաժանումները, տերեւիկները՝ անզոյգ թիւով են, 5-11 հատ, ու ամեն տարի կը բափին, տերեւիկներու կոթը անթեւ է, ողկոյզները բարդ են, բազմամիշ եւ երկար, կը բողբոջին կողմնակի նախորդ տառան մատաղ ճիւղերուն վրայ և տերեւներուն չափ երկար կ'ըլլան։ Պտուղը բաւական փոքր է, կլոր, տափակ, նախ կարմիր, որ յետոյ հասուննալով, կը սեւնայ. պտուղին սուր ծայրը, փոխանակ հերձիի պտուղին նման, կոթին ուղղութեամբ ըլլալու, կը գտնուի շեղակի մէկ կողմ յարած։ Բեռեկնիի թթուաշ պտուղն ուտելի է, նուշը կու տայ ձէթ և իւր պնդի՛ կեղեւէն կը հանեն Քիոսի բեռեկն (Térebinthine de Chio) ըստած ուտինը։

Միջերկրականի շրջափակ երկիրներուն մէջ առատօրէն կը գտնուի բեւեկնի , ի Սուրբա , ի Պաղեստին : Պոլիս , Մօտայի ծովափին վրայ , կան բեւեկնիի խոշոր ծառեր (յերշէւթիչ) :

Հայաստանի մէջ շատ կայ վանայ ծովու հարաւակողման անտառներուն մէջ , Շատախու , Մոկաց գաւառները . Խիղանի , Գաւաշի , Ռստանի , Աղերդի կողմերը կը գտնուին բեւեկնիներ որոնք հաստ կ'ըլլան , թէւ ոչ բարձր , մինչեւ 10 մէտր :

Հայկական գաւառներու մէջ բեւեկնին կը կուռի բժմի , պտուղը բայց կամ բուսն որ նոյնն է արարական պուրճ և երրայական բուսնիւ անուններուն հետ :

Բամիին իւղը ծանօթ է Հայոց մէջ վանայ ձեր անուամբ . Սեպտեմբեր , Հոկտեմբեր ամիսներուն , երբ պտուղը հասունցած է , կը ժողվեն ու կը ծեծեն , յետոյ ամբողջութեամբ կ'եփեն . իր թեթեւ իւղն երեսը կ'ելլէ , այդ իւղով Շատախու կողմերը , ինչպէս ի Գաղթէդ , կը շինեն կանանչագոյն օճառ մը շատ աշուշահոտ որ կակուղցնող է և ձեռքի պատառուածներու համար լաւ . կը վառեն նոյնպէս այդ ձէթը :

Մայիս ամսուն , երբ ծաղիկը նոր թափած է եւ պտուղը թարմ ու կանաչ , երբ դեռ կորիզը չէ փայտացած , դիւղացիք անոր մանրահատիկ ողկոյզները կը ժողուեն ու աղջուր կը դնեն («Մանանայ» Արուանձտեանցի . էջ 162) : Վանական Վարդապետ իր հարցմանց մէջ կը յիշէ

պուտը Հայ Աղուանից և Սասնոյ կողմերը .
“Պայծառ կարմիր ծաղիկ ունի , կ’ըսէ , “Սաս-
նեցիք խակակութ ասեն , իսկ ձիթապտուղն
երը հասած լինի՝ ձէթ հանեն , սեւ լինի մրրա-
շատ . և թէ խակ կթեն՝ կարմիր և պարզ լի-
նի («Հայրուսակ» . էջ 537) :

Բամբիփ փայտը , կարմրագոյն , խիստ կարծր
է և դիմացկուն , անկէ կը շնուն Հայաստանի
մէջ հիւսնի գործիները :

Սուրբ Գրոց Երրայական բնագիրը կը դնէ
էլայ , որունշանակութեան մասին մեկնիչք հա-
մաձայն են իբրեւ բեւեկնի . սակայն եօթանաս-
նից թարգմանութիւնն ամէն տեղ նոյն բառը
չունի և այս դիւրութեամբ կը բացատրուի , եթէ
նկատենք որ յունական թարգմանութիւնը ե-
ղած չէ միանուագ . անոր այլեւայլ մասերը
տարբեր ժամանակներու մէջ կատարուած են
զանազան անձերու կողմէ . թարգմանիչք մի-
եւնոյն մեթոդին չեն հետեւած բնաւ . և միշտ
միեւնոյն Յունարէն բառերը չեն գործածած Եր-
րայական նոյն անուններուն փոխարէն :

Այսպէս էլայ թարգմանուած է 1) Տեօքիւնթօս
բեւեկնի (Ծն . 1Ե . 4 , Յես . Ի՞Դ . 26 , Ես . Ա .
30 , Զ . 13) . 2) ծզնէ , կաղնի (Ա . Թագ . ԺԷ . 19 ,
Բ . Թագ . ԺԲ . 9 , 10 , 14 , Գ . Թագ . ԺԳ . 14 ,
Ա . Մնաց . Ժ . 12) :

Դատ . Զ . 11 , 19ին մէջ վատիկանեան օրի-
նակն ունի բեւեկնի , իսկ Աղեքսանդրեան օրի-
նակը (Codex) կաղնի . այս վերջինն է որ
կը գտնենք Հայերէնին , ինչպես նաեւ Լատի-
նական Վուլգարային մէջ :

Հայերէն բնագիրը բաւական հաւատարմութեամբ կը հետեւի Յունականին այս բոլոր հատուածներուն մէջ :

Ա. Թագ գրքին մէջ կը յիշուի և մկ'կ—հա—կլայ (բւեկնի հովիար), հւն է որ Սաւուղ և իր զօրքը բանակեցան այլազգիներուն դէմ, ուն Դաւիթ յաղթեց Գողիաթին և և մկ'կ—հա—կլայ կը յիշուի երեք անդամ և երեք անդամուն ալ Յունական բնագիրը, որուն հետ նաեւ Հայերէնը, կը թարգմանէ տարրեր կերպով . Ժէ . Զին մէջ . «Եւ Սաւուղ և արք Իսրայէլի ժողովեցան և նոքա ի հովիտսն (’Են τῇ κοιλαδὶ αὐτοῖ) և ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլազգեացն : »

Ժէ . 19 . «Եւ Սաւուղ և ամենայն այր իսրայէլացի էին ի հովիտս կաղնւոյն (ծզն) պատերազմեալ ընդ այլազգիմն : »

ԻԱ . 9 . Աքիմելէք քահանան Գողիաթի սուրը տալով Դաւիթին կ'ըսէ, «Ահա սուսերն Գողիաթու այլազգւոյ Փղտացւոյ զոր սպաներ ի հովիտսն եղայ (’Եν τῇ κοιλαδὶ Ἡλᾶ) : Վուգատան այս երեք հատուածներուն մէջ հետեւելով Երրայականին, կը զնէ թեւեկնիի հովիտը (in valle terebinthi) :

Իսկ մարգարէութեանց մէջ երկու տեղ Եօթանասունք բնաւ հասկցած չեն կրայն և շփոթած են :

Այսպէս Ովսեայ գրքին մէջ (Դ. 13) կլայ (բւեկնի) թարգմանած են վարսաւոր ծառ ծննծոց տօռականութեան, երբ Մարգարէն Իսրայէլի անօրէ-

նութիւնները յիշելով՝ կ'ըսէ . «Ի զլուխս լեռանց զոհէին և ի վերայ բլրոց զենուին , ի ներքոյ կաղնեաց և կաղամախեաց և վարսաւոր ծառոց [էլայ] , զի հաճոյ թուէր հովանին : »

Իսկ Եղեկիէլի համապատասխան հատուածի մը մէջ բոլորովին կը ճապաղի Յունարէնը , երբ Երրայերէնը կը զործածէ Ըս-Ռաանան (ծառ մշտադալար) և էլայ (բեւեկնի) . և կը գոհանայ դնելով միայն ծննջու ծոսկօօ ծառ ստուերաւոր :

Հայերէնը այս հատուածին մէջ կը մօտենայ Երրայեցերէնին և կը դնէ ինչպէս Վուլգատան . «Ի ներքոյ ամենայն վարսաւոր ծառոց [ըս Ռաանան] և ի ներքոյ ամուր կաղնեաց [էլայ] : » Եղեկ . Զ . 13 :

Բեւեկնին Սր . Գրոց մէջ նշանակուած է նոյնպէս մէկ անգամ բուժնիմ բառով : Երբ Իսրայէլի որդիները կը պատրաստուէին վերադառնալ յԵգիպտոս Յովսէփին մօտ , Յակոր խորհուրդ կու տայ իր որդիներուն , նուէրներ տանիլ . «Առէք ի պտղոյ երկրիս յամանս ձեր , և տարայք առնն պատարազս . Ռետին [սորի] և մեղք և խունկս և ստաշխն և բեւեկն [բուժնիմ] և ընկոյզ : » (Մն . ԽԳ . 11) . Բուժնիմ յայտնապէս Արարական պուրմը , Ասորական թրտմօն , Հայերէն բժմին է յոգնակի ձեւով :

Մեկնիչք ոմանք կ'ընդունին որ բուժնիմն է պիստակ , քանի որ բեւեկնին և պիստակնին նոյնասեռ տունկեր են :

Երբ Մովսէս Քանանու երկիրը բաժնեց Իս-

բայէլի ցեղերուն, Գաղի տոհմին ինկաւ Բուտանիմ [բեւեկնիք] քաղաքը Գաղապու մէջ (Յես. Ճ. 26.:

* *

Հայերէն Աստուածաշունչը կը դնէ Բեւեկնի
Գ. Թագ. Ժթ. 4ին մէջ :

Եղիա Յեղաբելէն վախնալով կը փախչի .
“Եւ ինքն գնաց յանապատ աւուր միոյ ճանա-
պարն, և չոգաւ և նստաւ ընդ Բեւեկնեաւ :”
Այս հատուածին մէջ մեր բնագիրը բոլորովին
կը հեռանայ Երրայականէն և Յունականէն ու
կը սխալի Ասորականին հետեւելով :

Երրայական բնագիրը հոդ կը դնէ Ռորկւմ
[genet, գենիստայ] զոր եօթանասունք տառա-
դարձութեամբ կ'ընեն զաթմէն :

* *

Բեւեկնին, ինչպէս կաղնին և սօսին, արե-
ւելքի խոշոր և նուիրական ծառերէն մէկն է
և յիշատակի կոթող անապատին մէջ :

Երրահամու ժամանակ մեծ թուով թագա-
ւորներ կոռուի կը բռնուին և զիրար կը կոտո-
րեն մինչեւ Բեւեկնի ձորը որ կը դանուի անա-
պատին մէջ (Ծն. Ժ. 6): Յակոր իր կիներուն
օտարութի աստուածները և գինդերը բեւեկնիի
մը տակ ծածկեց ի Սիկիմ (Ծն. Լե. 4): Յեսու,
Երր Տիրոջը պատուիրանները գրեց, “առ վէմ
մի մեծ և կանգնեաց զնա ի ներքոյ բեւեկնոյն”

առաջի Տեառն :^ո (Յես. իԴ. 26): Սաւուղին
ոսկորները թաղուեցան բեւեկնիին [հլայ] տակ
ի Յարիս (Ա. Մշաց. Ժ. 12): Աքիսողոմ բե-
ւեկնիի [հլայ] ծառէ մը կախուեցաւ իր մա-
զերէն (Բ Թագ. Ժ. 10, 14) և Խորայէլի զա-
ւակները իրենց Տէր Աստուծմէն ուժացած՝
կաղնիներու, կաղամախներու և բեւեկնիներու
տակ պաշտօն կը մատուցանէին (Ովս. Դ. 13):



այս միտ և միջրած ոչունի մեծութեան
և մինչ միտեան մասունքու և ուսում դաշտ
ունի մետարածն ունի մասունք և մասունք և
այսուն նուն քանակու ունունուորդ
ուսում ով պաշտ և միքամու ով պատ ունու
ուն պատու ով որ պատ ունու ունու մեջ
մասունք ով պատու : Ե. Բա. Ե. Ե Անձունու
մասունք ունունու և ունունուուսու Անձունու
ուսում : (Ե. Ա. Ե. Ե) Անձունու և ունունու մաս ով
ունու ունունու ունունուուսուուր պատու : ով
մասունք ունունու և ամբ ունունուու և մեջ մի

Օ Ր Ա Վ

ՕՐԱՎ. — Գենիստայ. — Genista. — Genêt. — Genista Rœtam = Retama Rœtam Bois. — Var. Genêt d'Espagne = Spartium junceum L. = genista odorata Mœnch. = G. juncea Lamk. — **ԹՐՔ** طرْناغٍ. — **Արար** . رُنْ

Աստուածաշունչի Երրայտական բնադրին մէջ
Երեք տեղ (Դ Թագ. ԺԹ. 4-5. Յովք. I., 13.
Սաղ. Ճ. 4) կը յիշուի Ռորեմ բառը :

Ռորեմն է genêt, Գենիստայի, ~~ԹՐԱՎԻ~~ տեսակ մը զոր արարները կը կոչեն ոլրեկը ։
և զոր Բոււասիէ անուանած է Retama Rœtam,
հին բոււարաններու Genista Rœtam կոչածը :
ԹՐԱՎներու այս տեսակը սպիտակ ծաղիկներ
ունի անուշանու, որոնք զրեթէ լերկ անտերեւ
ծղօտներու վերեւ անկոթ փունջեր կը կազմնն :
Անապատին ծառատունելներէն մէկն է և ա-
ռատօրէն կը գտնուի Սինայի թերակղղիին,
Յուղայի անապատին, Պաղեստինի մէջ մինչև
Մեսեալ Ծովու ափերը . 3-4 մէտր բարձրու-
թին կ'ունենայ և բաւական հսկանի կու տայ
ծառայելու համար իրբեւ ապաստան :

«Այժմու Արարները անապատին մէջ իրենց
գնացքի միջոցին, գենիստայի պուրակներ կը
փնտուն իրենց վրանները հաստատելու համար,
որովհետեւ անապատին ամէնէն մնծ տունկերն

անոնք են՝ (Trochon, géographie biblique, dans La Sainte Bible·Paris, 1894, հատ. Բ. էջ 683] : Սինայի անապատին մէջ Արարակարը անոր փայտէն և մանաւանդ արմատէն կը շինեն ածուխ զոր մինչեւ այսօր կը բերեն Եղիպտոս ծախելու : Իրն-էլ Բայթար կ'ըսէ նոյն իսկ թէ Ռըթէմի արմատները կը գործածուէին Արարական բժշկութեան մէջ (Notes et extraits des manuscrits de la Bibl. Nationale. T. XXV, part. I. p. 169.) :

Պաղեստինի մէջ կ'աճի նոյնպէս գենիստացի, որուից տեսակ մը, լիննէի Spar-tium junceumը, որ սովորաբար Սպանիական Գենիստայ անունով ծանօթ է . Նախորդին տեսակէն է և Սպանիոյ մէջ Ռեբաւմա (*) անունը կու տան անոր :

Սպանիական գենիստան 1-3 մէտր բարձրութեամբ թուփեր կը կազմէ, պարտէզներու մէջ իրր զարդ կը մշակեն իր անուշահոտ դեղին ծաղիկներուն և մշտադալար ճիւղերուն համար, անասուններուն իրրեւ խոտ ալ կը գործածուի և իր թելուտ կեղեւէն կը շինեն չուան և հիւսուածներ :

* * *

Գենիստանները թիթեռնակերպ (papillonaceous) տունկերու մէջ կարեւոր սեռ մը կը կազմն իրենց ցից կնիւնածեւ (junciforme) ման-

(*) Արարական բառերն Սպաներէնի մէջ, մացորդներն են Մաւրիտանական տիրապետութեան ի Սպանիա :

բիկ տերեւներով ու խռով ծաղիկներով որոնց
առէջները միացեալ են և պարկուճը (gousse)
միախորշ է : Եօթանասունէ աւելի տեսակները
կան հին աշխարհի մէջ , մէկ տեսակը ծանօթ է
ներկարարներու գենիսայ genista tinctoria L.
անունով , դեղին ներկ կու տայ . իսկ ուրիշ տե-



Բժ Հիւ ցւայ

(~~Օ~~ Genista Scoparia Lamk.)

սակ մը կ'ըլլայ աւել , genêt à balais, genista scoparia Lamk. այս վերջին տեսակէն կը հանուն spartéine ըսուած դեղը որ սրտի կանոնաւորող է :

* * *

Երրայական բնագիրը երեք տեղ ունի ոռքեմ
բառը .

1) Եղիս Յեղաբելէն վախնալով կը փախչի
Քորէր: «Եւ ինքը գնաց անապատին մէջ օրուան
մը ճանապարհ և եկաւ նստաւ ոռքեմի մը
տակ . . . և քունը տարաւ ու ննջեց ոռքեմին
տակ» (Դ Թագ. ԺԹ. 4-5):

2) Յովիր իր վիճակին դառնութիւնը ցոյց
տալու համար կ'ըսէ թէ ամէնէն յետինները
կը ծիծաղին վրան , այնպիսիները՝ զորս արօ-
տական շուներուն հաւասար կը նկատէր ինքը ,
ու կը խօսի Հօրանի սովատանջ մարդոց մասին
որ ոռքեմներու լեղի արմատներով սնանելու
ստիպուած էին :

Իրաւ է որ այս վերջին խմաստին վրայ մեկ-
նիչք համաձայն չեն և Գեսենիոս [Thesaurus
էջ 1317] Լահիւան փոխանակ «իրենց սնունդը»
թարգմանելու , պէտք է իմանալ , կ'ըսէ , «տաք-
նալու համար : » Որով Յովիր . 1. . 4 կ'ըլլայ ,
«որոնք կը քաղէին խարչափուն բանջարներ
մացառներէն և ռոքեններու արմատներ տաք-
նալու համար : »

3) Դաւիթ նենդաւոր լեզուին վրայ խօսե-
լով՝ կը նմանցունէ զայն հզօրին նետերուն ո-
րոնք ոռքեմի վառ ածուխներով միսուած ,
սրուած են :

* * *

Եօթանասունք և անոնց հետ զրեթէ բոլոր
թարգմանիչք չեն հասկցած թէ ինչ է ոռրեմը :

Գ. Թագ. Ժթ. 4-5 ին մէջ Հայերէն բը-
նաղիրը կ'ըսէ . «Եւ ինքն գնաց յանապատ ա-
ւուր միոյ ճանապարհ և չոգաւ և նստաւ ընդ
բեւեկնեաւ [ոռրեմ] ... Եւ ի քուն եմուտ և
ննջեաց ընդ տեկովն [Ռորեմ] : Այս հատուածին
մէջ Եօթանասունք առաջին տեղը տառադար-
ձութեամբ դրած են ոարմեն [ջաթւեն] , իսկ երկ-
րորդ տեղը վիւտոն [Փուծոն] , տունկ : Հայերէնը
թէեւ կը պահէ Յունարէնին տունկ բառըն
բայց չասկնալով ոարմեն , կը դնէ ըստ Ասո-
րական թարգմանութեան բեւեկնի : Արդարեւ
Payne Smith իր Thesaurus Syriacus Ասո-
րերէն բառագրքին մէջ խօսելով ոռրեմին
վրայ , կը յիշէ Բար Բահլուլ Ասորիին ըսածը .
Բայտո հիօ [բեւեկնի մը] լ'երրուա [Երրայեցերէն]
Ռորեմ հատ [ոռթէմ մը (կը կոչուի)] :

Ակիլայի Յունարէն թարգմանութիւնն ունի
ոռրեմի տեղ ձօքնութու , genévrier , իսկ Սիւմ-
մաք միայն իմաստը կ'առնէ և կը դնէ ռուպու-
թիւնը , կը դնէ juniperus , զի :

Յերոնիմոս արքան վուլդատային մէջ հե-
տեւելով Ակիլայի , որ կը ներկայացունէր ան-
շուշտ իր ժամանակին Երրայեական աւանդու-
թիւնը , կը դնէ juniperus , զի :

Յովք . 1. 4ին մէջ Հայերէնն ինչպէս նաև
յունարէնը կը գոհանան դնելով փայտ (ξύλον) ,
փոխանակ ռորեմի :

«Որք պատէին խարշափուն բանջարով , ո-

բոց բանջարն իսկ էր կերակուր : Անարդք
և արհամարհեալք և կարօտեալք յամենայն
բարութենէ որք և զարմատս փայտից ծամէին
իսաստիկ սովոյ :

Վուլգատան դարձեալ Ակիլայի հետեւելով
կը դնէ juniperus , գի , արտը . քանզի Ս . Յե-
րոնիմոս իր Եւսեփոսի Onomasticonին թարգ-
մանութեանը մէջ կ'ըսէ . սորեմ , զոր Ակիլայ
կը թարգմանէ արկեւրոն , գի է , Սիւմմակի
umbraculumը (հովանի , ապաստան) :

Իսկ Սաղ . ձի . 4ը բնաւ չէ հասկցուած ,
որովհետեւ Եօթանասունք բոլորովին կը հե-
ռանան բնագիրէն և կը ջանան իմաստը
միայն թարգմանել «... սրեալք նետք հղօրի ,
կայծակամբ ամայութեան Եօդակօն . Վուլգա-
տան կը թարգմանէ Յունարէնը և կը գրէ .
cum carbonibus desolatoriis .

Վուլգատային այս տարօրինակութիւնը ա-
նով կը բացատրուի որ Լատինական թարգմա-
նութիւնը կատարուած է նախ և առաջ Եօթա-
նասնից վրայ և կը կոչուի հին վուլգատայ կամ
իտալիկ . շատ անկատար բան մըն էր ասլի սխալ-
ներով . Դ . դարու վախճանին Յերոնիմոս ար-
քան սրբազրեց Լատիներէն Աստուածաշունչը
Երրայականին և Ակիլայի թարգմանութեան
վրայ : Այժմեան Վուլգատան գրեթէ ամբող-
ջութեամբ Յերոնիմոսի սրբազրածն է ի բաց
առեալ Սաղմոսը , որ մնացած է Եօթանասնից
վրայ եղած հին թարգմանութիւնը :

Մեր թարգմանիչ հարք իրենց ընտրողա-

կանութեան մէջ բան մը չհասկնալով Յունա-
րէնէն և ունենալով իրենց հետ Ասորականէն
թարգմանութիւն մը , կը հետեւին անոր և կը
գրեն .

“Զի՞ տացի քեզ կամ զի՞նչ յաւելցի , լե-
զու նենդաւոր : Որպէս նետք հզօրի զի մըխ-
եալ են կայծակամբ կաղնւոյ :”

Ասորական բնադիրը կը դնէ բալուսո ,
կաղնի :

* *

Ուրեմն հայ Թարգմանիչք , ինչպէս միւս-
ները , չեն դիտցած թէ ի՞նչ է ոռքէմը , որ է
օրոք , գենիստայ :

Յովբ . I . 13ին և Գ . Թագ . ԺԹ . 5ին մէջ
հետեւած են Յունարէնի , իսկ Գ . Թագ . ԺԹ .
4ին և Սաղ . ՃԻ . 4ին մէջ ալ Ասորերէնի :

* *

Իսրայէլացիք Աինայի անապատին մէջ ի-
շեւանեցան նոյնպէս յԽարամայ , օրոճուսարդ .
Թիւ . I. 9 . 18 , 19 :



ԿԱՂԱՄԱԽ

Կաղամախ .— ԵՐԻ . Լիրնայ .— Λεύκη .— Po-pulus Alba L. = Peuplier blanc, P. de Hollande, Ypreau.— آق قواق .— ԹՐ. Հավկր .— ՊՐ. سفیدار. درخت تبریزی حور

Բարշ .— P. Pyramidalis Roziér = P. Pyramidal, P. d'Italie.

Դողդոցուն կաղամախ .— P. Tremula L.= P. Villosa Rchb .= Tremble.— Var. P. Canescens Sm.= P. Alba tremula Krantz.= Grisard.

Կաղամախի յիշատակութիւնն եղած է Հայերէն Աստուածաշունչի մէջ երկու տեղ . Ես . ԽՍ . 19 . և Ովս . Դ . 13 (1) : Կաղամախն է peuplier, զավագ և ի մասնաւորի ազ զավագ

(1) Երրորդ յիշատակութիւն մը կաղամախի կը գտնենք ի «Գիրս Մնացորդաց ըստ հնագոյն թարգմանութեան», զոր հրատարակեց Գրիգոր Խալաթեանց [Մուկուա, տպ. Վարվառէ Գացտուկ, 1899] : Այս զործը , որ երկու ձեռագիրներու վրայէն կատարուած է , մին՝ իջմիածնայ , թիւ 183 , 1635 թուականի , միւսը՝ Երուսաղէմայ , 1269 թուականաւ , սովորականէն տարբեր թարգմանութիւն մը կը ներկայացունէ :

Այսպէս Բ Մնաց . Բ . 8ի մէջ կը գտնենք . «Եւ տացես բերել ինձ փայտս սարոյն , մայր և կաղամախ ի Լիբանան լեռնէ , փոխանակ ըսելու . «Եւ տուր ինձ բերել փայտս մայրս և սարոյս և թեղօշս ի Լիբանանէ : »


peuplier blanc. *Populus alba* L. և Ս. Գրոց
երբայական բնագիրը կաղամախի փոխարէն կը
դնէ լիբնայ, իսկ Յունականը լեւկի լεύκη. այս
երկու բառերը կը նշանակեն սպիտակ, այսինքն
սպիտակ կաղամախ ծառը, քանզի կաղամախն
ունի սպիտակ հաստ բուն, իր տերեւներուն
ետևի կողմը բրդոտ է և իր նոր բողբոջները
բամպակի պէս ճերմակ են:

Կաղամախիները (populacées), որ ուղիներու
հետ կը կազմեն առանձին տոհմ մը, չատ տա-
րածուած են հիւսիսային կիսագնդի բարեխառն
և խոնաւ մասերուն մէջ:

Կաղամախիները, այս բառն իր ընդհանուր
առումով, մեծ ծառեր են, իրենց ծաղկի բող-
բոջները, որ տերեւներէն կանուխ կ'արձակ-
ուին, կը պարունակեն ոետնային նիւթեր և
ատոր համար կը գործածուին բժշկութեան
մէջ, onguent populeum. իրեւ ցաւը հանդար-
տեցունող: Տերեւները փոխազիր (alterne) են
և լայն ու իրենց երկայն կոթը կողմնակի տա-
փակցած է, որով փոքրիկ հովէ մը կը շար-
ժին: Որձ և էդ ծաղիկները առանձին են և կը
կազմեն զատ զատ խրացներ (chaton) վար
կախուած, ինչպէս կաղինին որձ ծաղիկները:
Քսանի չափ տեսակները ծանօթ են և յարգի,
իրենց արագ աճման և կակուղ ու թեթեւ
փայտին համար. ասոնցմէ մէկ քանիները կ'ա-
ճին մեր երկրի, ինչպէս նաև Պաղեստինի մէջ:

1) Կաղամախը բարձր ծառ
է ողորկ կեղեւով և տարածուած ճիւղերով,

նոր բողբոջները բամպակի պէս ճերմակ են,
տերեւները ձուածեւ, խորշաւր և և ատամ-



1.—Ճերեւ կաղամախի .— 2. Ճերեւ բարտիի .— 3. Ճերեւ դողդոջուն կաղամախի .— Բարտիի որձ (4) և էղ (6) խրացներ .— Որձ (5) և էղ (7) ծաղիկներ .— 8. Պտուղ .— 9. սերմ:

նաւոր (sinuées-dentées). Խրենց վերի կողմը
կանաչ է և ետեւը սպիտակ, բրդոտ. Կոթը կլոր
է, որձ ծաղիկներն ունին 8 առէջ. Էղերը 4
սոսորդ, դեղին, խաչածեւ:

Ատարաղարի Զարխի հրապարակը, հոն ուր

գետակը , պատմականն Մելաս , կը կազմէ կղղեակ մը , ամբողջ հոյակապ կաղամախներ կ'աճին :

2) Կաղամախին կը նմանի և մեր երկրի մէկ քանի մասերուն մէջ թերեւս այդ անունով ալ կը կոչուի դոդդոցուն կաղամախը (2) tremble Populus Tremula L. նոյնպէս մհծ ծառ , 15-20 մէտր . թէեւ ոչ առաջնոյն չափ , և տարածուած ոստերով ու ողորկ կեղեւով . կը բունի անտառներու մէջ , իր փայտը կու տայ լաւագոյն ածուխը վառօղի համար :

Նոր բողբոջները բրդու են և կպչուն , սրբածայր և ձուածեւ տերեւներով , իսկ մեծած ժերեւները խիս շարժուն են , կլոր և անխանու խորշերով ու ատամներով . տերեւին երկու երեսները կանաչ են ու լերկ . կոթք , երկայն , տափակցած է կողմնակի . խացները մազուն են , 8 առէջ ունին ծաղիկները . 4 սոսորդ , խաչածեւ , ծիրանեղոյն :

(2) Տեսնել Հ . Կէտիկեանի և «Բնապատումի վիճաբանութիւնը կաղամախի և բարժիի մասին . «Հանդէս Ամսօրեայ» 1905 . էջք 51, 221, 285, 319, 351 :

Հ . Մէնէվիշեան բացարձակապէս կը սխալի կաղամախը Populus pyramidalis , և բարտին P. Tremula նկատելով . ոչինչ իրեն այդ իրաւունքը կու տայ :

Իսկ Քաջունիի «Գիտութեանց և արուեստից բառազիրքը» Սօսի կը կոչէ րেումիլիեր blancը . բարտի , հագնի , p. trembleը . և P. pyramidalին համար ալ կը գրէ . «որ ի մեզ է բուն սօսի .» այս բոլորին մէջ ուղիղ բան մը չկայ :

Այս երկու տեսակներուն խառնուրդը կու-
տայ *P. canescens* Smith. որ grisard անու-
նով ալ ծանօթ է :

3) Բարժի . *P. pyramidalis* Rozier , «Որ
իրեւ զուսի լինի ի ջրարրի տեղիս , բարձրա-
նայ ուղիղ և երկայնանայ իրեւ զակլի (նոճ)»
[Հայկագեան բառարան Միհթար Աքրայի , հտ.
Ա. Վենետիկ . 1749] . կեղեւն է խորառութորա ,
Տերեւները եռանկիւնաձեւ սրածայր , կանոնաւոր
առանձներով . երկու երեսները կանաչ են փայ-
լուն և լերկ . որձ ծաղիկներն ունին 12-20 ա-
ռէցներ . իսկ 4 սոսորդներն են փակած ձուա-
րանին . բարտին մէկ զանազանութիւնն է
peuplier ոօրին , սեւ կաղամախին :

Պաղեստինի մէջ կայ նաեւ տեսակ մը որ
ծանօթ է Եփրատայ կաղամախ *P. Euphratica*
անունով որ կը նմանի կաղամախին իր ձեւով
և բրդոտ տերեւներով . ու բարտին՝ իր առէց-
ներու շատութեամբ . տերեւներն են բազմաձեւ
(polymorphe) երբեմն լայն , երբեմն նեղ , ուսիի
տերեւի պէս : Առատօրէն կը գտնուի Յորդա-
նանի եղերքը և մանաւանդ Միջագետք . կա-
յարդ կ'ըսէ որ «Միակ ծառերը որ Ասորես-
տանի երկրին մէջ բաւական խոշոր են , իրենց
բունք 30 կամ 40 ոտք ընդարձակութեամբ
սենեակներ կազմելու կարող , արմաւենիներն
ու կաղամախներն են . իրենց բուները մինչեւ
այսօր կը ծառայեն իրեւ բնակարան Միջա-
գետքի մէջ : Ստորին Եփրատի և Տիգրիսի վրայ
այժմ գործածուած նաւերը շինուած են տեսակ
մը կաղամախի , հաւանաբար Եփրատայ կաղա-
մախի , հաստ տախտակներէ : »

* * *

Կաղամախն է Երբայեցերէն լիրնայ և Յունարէն լեւկէ լεնչոյ.

Լիրնայ գործածուած է Ծն. լ. 37 և Ովս.
Դ. 13 հատուածներուն մէջ :

“Եւ առ Յակոբ գաւաղան՝ շեր [Լիրնայ]
դալար և ընկուզի և սօսւոյ և կեղեւեաց զնու-
սս Յակոբ և եղեւ սպիտակլ :” Ծն. լ. 37 :

Այս տեղ Յունական բնագիրը կը զնէ,
ջաթօօց ստորակնի , այսինքն , շտիւրաքսի բա-
րակ գաւաղաններ , և շեր կամ թերեւս շտեր
տառագարձութեամբ կը նշանակէ շտիւրաքս ,
ՏԵՐԱԳԱՎԱՐԱԿԱՆ ՄԵԼԻՆԻՉՔ ՈՄԱՆՔ կը նկատեն
լիրնայն շտիւրաքս , փոքր ծառ մը տաք եր-
կիրներու որ կու տայ ճերմակ խունկ , և այդ
իմաստով ալ թարդմանած են Եօթանասունք
և անոնց հետ մեր նախնիք Ծննդոց զրքին այդ
հատուածը :

Սակայն Ովս. Դ. 13ին մէջ Եօթանասունք
ինչպէս նաև Ակիլայ , որոնց հետեւելով ևս
մնը նախնիք , լիրնայն թարդմանած են , և շատ
իրաւամբ , լεնչոյ , կաղամախ , որ կաղնիին և
բեւեկնիին հետ անտառին փառաւոր ծառերը կը
կաղմնն :

Մարգարէն Խորայէլի անօրէնութիւնները
թուելով՝ կ'աւելցունէ . “Ի զլուխս լերանց զո-
հէին և ի վերայ բլրոց զենուին , ի ներքոյ կաղ-
նեաց և կադամախնաց [լիրնայ] և վարսաւոր
ծառոց [բեւեկնի] , զի հաճոյ թուէր հովանին :”
Ովս . Դ. 13 :

Վուլգատան ինչպէս նաև Անգլիական
թարգմանութիւնը կը դնեն կաղամախ , րօս-
լու . poplar-tree երկու հատուածներուն մէջ ալ :

* * *

Եօթանասնից թարգմանութիւնը և անկէ
Հայերէնը ունին լեւիկ , կաղամախ , Ես . ԵԱ . 19ին
մէջ . «Եւ բղխեցուցից յանջուր երկրին զմայրն
և զտօսախն , զմուրտն և զնոճն և զսոսն ,
զսարդն և զսարոյն և զկաղամախն . զզին և
զփայտն իւղոյ : »

Եօթանասունք այս հատուածին մէջ կը դնեն
միայն զմայրն [անձօօչ] և զտօսախն [πύξος] ,
զմուրտն [μυρσίνη] և զնոճն [κυπάρισσος] և
զկաղամախն :

Իսկ Երրայական բնագիրն ունի երկգ [մայր] ,
շիտայ [ակասիա] , հաղաս [մուրտ] , լա շկմկն
[ծառ իւղոյ] . — բըոշ [սարոյ կամ նոճ] , տիդ-
հար [թեղի] և թա աշուր [տօսախ] :

Հայ թարգմանիչք նախ նոյնութեամբ
թարգմաներ են Յունական բնագիրը , յետոյ ,
երկրորդ սրբազրութեան մը ժամանակ , տես-
նելով որ կը տարբերի Երրայական բնագրէն
կամ աւելի հարազատ նկատուած թարգմա-
նութենէ մը , աւելցուցած են ուրիշ անուն-
ներ եւս :

Այս հատուածը մին է ամենէն շփոթե և
դժուարիններէն . անոր մէջ յիշուած իւրաքան-
չիւր անուն առանձին ուսումնասիրելէ յետոյ ,
պիտի դառնանք ամբողջութեանը :



ԿԱՂՆԻ

Կաղնի .— Երբ . կղոն , աղղոն . . . δρῦς , βάλανος
— Quercus .— chêne .— Թրք . մկշկ .— ար .
بلوط բաղրուդ , սինդիան .

Որդնարեր կաղնի .— Quercus coccifera L.
chêne à kermès .— ար . جیدار

Կաղնին , ինչպէս հաճարին (hêtre , beech-tree) արքակաղնին , շագանակենին , կը կազմէ առանձին սեռ մը կճեպաւորներու տոհմին մէջ :
Իր երեք հարիւրի չափ տեսակները տարածուած են հիւսիսային կիսազնողի բոլոր բարեխառն մասերուն մէջ :

Կաղնին առասարակ անտառային խոշոր ծառ է կարծր փայտով և երկարակեաց : Իր որձ և էգ ծաղիկները կը գտնուին միեւնոյն տունկին վրայ առանձինն . որձ ծաղիկները կը կազմեն փոքր հանգոյցներ , կախուած , նուրբ դեղնազոյն խրացներու երկայնիլ : Թեղթ չունին ծաղիկները , այլ 4-12 առէներ , ցցուած , բարակ թելերով (filet) : Էղ ծաղիկները մէկիկ մէկիկ են իրարու վրայ աղուցուած թեփերէ պատեանի մը մէջ . 3-4 ծիլ ունին իրար փակած . ձուարանն ունի 3-4 խորշեր կըկին ձուիկներով : Միակ պառողն է ձուաձեւ կարծր միսով որ կ'ըլլայ նախ կսնաչ ու յետոյ դեղին :

Իրեւ հնագոյնն մարդկութեան ծանօթ ծառերուն և Արեւելեան ծագումով , կաղնիի բազ-

մաթիւ տեսակները կ'աճին Աստուածաշնչական
երկիրներու մէջ :

Ոմանք ունին մշտականաչ տերեւներ կարծր
որոնք կը տեւեն 2-3 տարի . ուրիշներ թա-
զանթային տերեւներ ունին որ կը թափին աշ-
նան և կամ հետեւեալ գարնան , երբ նորերը ար-
դէն ծլած են , սակայն աշունին դեղնելէ յե-
տոյ : Առաջին դասակարգին կը պատկանին .



Սղոցի կամ փշակաղնի .— *Quercus ilex* L.

1) Սղոցին կամ փշակաղնին , փոքր ծառ
փշոտ տերեւներով որուն կը հանդիպի մարդ
ամենուրեք միջերկրականի երկիրներուն մէջ :

2) Որդնարեր կաղնին , փոքր ծառ մը 1-2
մէտր բարձրութեամբ , փշոտ տերեւով , որուն
բալուտները՝ կը հասունան 2 տարիէն . այս
կաղնիին ճիւղերուն վրայ կ'ապրի որդն (ker-
mès baphica) որ կու տայ որդան կարմիր ներ-
կը (ղըրմըզ) : «Ղըրմըզ որ է կօկազ (κόκκος βαφι-
κή) կ'ըսէ Ամիրառովլադ , ինքն կենդանի է , որ ի
լեզի կաղնուն տերեւին վրայ՝ կարմրուկ կար-

մըրուկ ոսրան չափ հատիկներ է, և թէ չժողվեն
կռւ թռչի և կ'երթայ, իրք մի չի մնար, և
ներկրարնին կռւ ժողվեն, և զալբչում և բզ-
բուրդն անով կռւ ներկեն . . . :

3) Միեւնոյն բաժանման կը պատկանի նոյն-
պէս սնկրաբեր կաղնին (chêne-liège, *Quercus*
Suber L.) որուն հաստ կեղեւը հարաւային
ֆրանսայի, ինչպէս նաև խտալիոյ մէջ կը գոր-
ծածուի իրրեւ սունկ, խցան :

* * *

Սովորական կաղնին որու ճիւղերէն ի հնումն
պսակներ կը շինէին, նշան ոյժի, քաջութեան,
կը պատկանի երկրորդ դասակարդին, կազմե-
լով լիննէի *Quercus Robur* սեռը, զոր արդի
բուսաբանք կը բաժնեն երկուքի, իրենց պը-
տուղներու կոթին երկայնութեան համեմատ.
երկայնակոր *Quercus Pedunculata* Ehrl. և
անկոր ծաղկով կաղնի *Q. Sessiflora* Salisb.
բարձր ծառեր, կարծր փայտով որոնք հինա-
ւորց անտառներու փառքն են :

Լիբանանի մէջ մայրիներէն վեր կ'աճի մէկ տե-
սակ մը, *Q. Cedrorum* A.DC. (մայրեաց կաղ-
նի) աւելի երկայն ու նեղ տերեւներով որ խո-
րապէս բաժանուած են (Post, Flora of Syria
Palestina and Sinaï.):

Արեւելքի մէջ առատօրէն կը գտնուի ուրիշ
տեսակ մը *Q. infectoria* (Կ. ներկրարներու)
որ կռւ տայ գղթոր, մազը, ուրիշ առեւտուր կ'ըլլայ
փոքր Ասիոյ մէջ, կաղնին չափ խոշոր դունդեր
են կաղնին տերեւներուն կամ նոր բողբոջներուն
վրայ մէջատի մը խայթուածքով կազմուած :

Երբ էզ միջատը , cynips argentea , կը խայթէ տերեւը ու հոն կ'ածէ իր ձռւն , տերեւն այդ խայթուածին հակազդելով՝ կը պաշտպանէ ինքզինքը , վիրաւորուած մասը կ'ուռենայ և պատելով միջատին ձռւն , կ'անջատէ զայն



Որդնարեր կաղնի .— *Quercus coccifera* L.

Իրմէ . այդպէս ընելով միեւնոյն ժամանակ կը կազմէ անոր անքոյթ ապաստան մը ուր ապահով պիտի անցունէ ձմեռը , գարնան հետ ծակել դուրս ելլելու համար անկէ , որպէս զի կարենայ ապահովել տեսակին յարաւեւութիւնը :

Լիրանանի կողերուն վրայ կ'ածի նոյնպէս Q. Aegilops L. ծանօթ Վաղնայի կաղնի (chêne vélouté) անունով , բարձր ծառ կատարը զլիսաձեւ լայնցած , լայն ատամնաւոր տերեւներով որոնց ետեւը բամպակի պէս ճերմակ է . կճեպին թերիերը երկայն են և թերթ թերթ :

Կաղնին ամեն կերպով օգտակար է . փայտը կարծր , կը ծառայէ կարասիներու , վառելիքի .

պառաղը , կեղեւը կը գործածուին իրրեւ աղաղ (tan) խաղախորդութեան մէջ , բալուաները , թէեւ դառն , կը ծառաւին իրրեւ կերակուր խոզերու , խոզկաղին . իսկ ուտելի կաղնիին (Q. aesculus) պառաղները որ անուշ են , չագանակի պէս կ'ուտուին Սպանիոյ մէջ , և աղանձուած կը գործածուին իրրեւ խահուէ , caf  de glands doux , թանկագին՝ հինցած փորհարութիւններու համար իր պարունակած tanninով :

Շատ երկիրներու մէջ կաղնիին տերեւները կու տան անասուններուն ի մնունդ :

Հայաստանի մէջի Տարօն , ունինք տեսակ մը Q. mannifera որ կու տայ Մանանայ , դաղպէն :

*
* *

Երրայական հել արմատէն որ կը նշանակէ ոյժ , զօրութիւն , և երկրորդարար կաղնի , կը ծագին կարգ մը զօրաւոր ու մեծ ծառերու անուններ երայ , ալլայ , ելօն , ալլօն որ իսկապէս կը վերածուին երկուքի . երայ և ելօն : Այս երկու անունները յաճախ չփոթուած են և երայ որ ընդունուած է իրրեւ բեւելինի , քանիցս թարգմանուած է Եօմանասնից կողմէ կաղնի . իսկ ելօն ընդունուած է իրրեւ կաղնի (ծըն , թալանօչ) : Առյն բարը իր ալլօն ձեւով , այսինքն երկար շեշտով , կը գտնենք Ծն . I . 8ի մէջ , ուր երրայական ընագիրը կ'ըսէ որ Դերորա Ռերելայ դայեակը թաղուեցաւ կաղնիին [ալլօն] տակ , զոր կոչեցին ալլօն բախուր , լացող կաղնի , Հայերէնը կաղնի սպայ (թալանօչ պենթօն , quercus fletus) : Ասորերէնն ունի հոս բեւելինի :

Ծն. ԺԲ. 6 և Բ Օր. ԺԱ. 30. Կը զբա-
նենք «կաղնին բարձր», «առ կաղնեաւն բարձրու»
ըստ Յունականին նվիղօն, ուր վուլգատան կը
դնէ ad convallem illustram [նշանաւոր հով-
տին մէջ] Ծն. ԺԲ. 6. և quercum excelsam
[ընդ կաղնեաւ բարձրու]. Բ Օր. ԺԱ. 30. Եթ-
րայական բնագիրն ունի կաղնին մորկի, զոր ու-



Անկոր ծաղկով կաղնի. — Q. Sessiflora Salisb.

մանք կը կարդան Մատերէ, թերեւս իրաւամբ .
քանի որ Ծննդոց զրգին մէջ քիչ մը վարը ե-
րեք տեղ կը յիշուի Մամբրեի կաղնին : ԺԳ. 18 ,
ԺԵ. 13 , ԺԲ. 1 :

Եօթանասունք կաղնին բարձր թարգմանած
են , անշուշտ մորկիը րկւ (rkv=բարձր) կարդա-
լով :

Յեսուայ ԺԹ. 33ի մէջ կը կարդանք . «Եւ
եղեն սահմանք նոցա Մեկեղիկի եւ Մայեղովի եւ
Բիրսանայիւ» Եօթանասունք [codex vatica-
nus et Alexandrinus] ունին Մոորաւ [Մօօլամ]

և Արօլա [Մազլա] և Բեսեմիին [Վետեմոն], սակայն կը գտնենք Յունական օրինակ մը [Biblia polyglotta Samuel Lee] . London 1831. Variæ lectiones E Textu Editionis Grabii] որ կը դնէ Հայերէնին նման Մեելէփ [Մամլէփ], և Մէլով [Մղլան], և Բեսեմանիմ [Վետեմոն].

Այս տեղ սխալ է թարգմանութիւնը և յանցանքը Եօթանասնից է.

Երբայական բնագիրը կ'ըսէ մը հեղեփ [յեղեփայ] մը կը կը կաղնւոյն] պը սաաննիւ [որ ի Սաաննիմ]. մի և նոյն Սաաննիմի կաղնին կը հանդիպինք Դատ . Դ . 11 կը պը Սաաննիմ . Հայերէնն ունի «առ կաղնեաւն հանգուցելոցն» ինչ որ թարգմանութիւնն է միենոյն Յունական օրինակին [variae lectiones E Textu editionis Grabii] πρὸς δοῦν ἀναπανομένων, μήνչդեռ Եօթանասնից սովորական օրինակներն ունին ՇՈՅ ծրսնութեամբ «Հλաν Մաանենի» . Հայերէնն ունի «ընդ ճանապարհ կաղնւոյն յիշանոցաց», դարձեալ հետեւելով Յունական օրինակին դոր յիշեցինք, ծրսնութեամբ պլεոնτան . Վուլգատան ունի per viam, quae respicit quercum [այն ճամբէն որ կաղնին կը նայէր, կաղնին դարձած էր] յայսմ հետեւելով Ակիլայի :

Դատ . Թ . 37 . Երբայականն ունի կը Ոննիւ, տեսանողներու [սրազրակ, մոգ] կաղնի, Եօթանասունք կը դնեն Երբայերէն բառերը նոյնութեամբ «Հլան Մաանենի» . Հայերէնն ունի «ընդ ճանապարհ կաղնւոյն յիշանոցաց», դարձեալ հետեւելով Յունական օրինակին դոր յիշեցինք, ծրսնութեամբ պլեոնտան . Վուլգատան ունի per viam, quae respicit quercum [այն ճամբէն որ կաղնին կը նայէր, կաղնին դարձած էր] յայսմ հետեւելով Ակիլայի :

Ծն. ԺԴ. Յ ունի բեւելինի ձոր, Երբայեցերէնն է հել փարան, և լ փարան, զոր Եօթանասունք թարգմանած են բեւելինի ձոր, այլք, Փարանու կաղնի, իսկ վուլգատան՝ սուզ ad campestria Pharan. մինչեւ ի դաշտն Փարանու :

Կաղնի բառը գործածուած է օրոճի տեղ, հետեւողութեամբ Ասորականին Սաղմ. Ճի. 4ի մէջ :

*


Կաղնին մարդկութեան ձանչցած ամենահին ծառերէն է, առաջին մարդիկ անոր հովանիին տակ ապաստանեցան, անոր պտուղէն կերան, և հոն իրենց առաջին խորանները կանգնեցին Տէրոջը գոհանալու կամ դից պաշտօն մատուցանելու համար: Խնչպէս էր ի Յունաստան, Հռովմ և նոյն իսկ հին Գաղղիացւոց մէջ ուր դրուիդները մեծ հանդիսաւորութեամբ կը ժողովէին կաղնիին մուռալը (ցա) մամնաւոր օրեր, որու մնացորդն է նոր տարւոյ օրը դրան վրայ ճուռակի ճիւղեր կախելու սովորութիւնն յԵւրոպա: Կաղնիներու հովանիներն եղան առաջին դամբարանները մարդկութեան, որպէս զի այդ դարաւոր ծառերուն տակ չկորսուին յիշատակն անոնց՝ զորս կ'ուզեն մարդիկ որ ասպրին իրենց մահուընէն յետոյ ալ:

*
* *

Սուրբ Գրոց մէջ նշանաւոր են մանաւանդ Մամբրէի կաղնին և Բասանու կաղնիները:

Մամբրէի կաղնին ի Քերբրոն զոր մինչեւ այժմ կը ցուցունեն Երուսաղէմայ մօտ ուխ-

տաւորներուն, նշանաւոր էր Արրահամու ժամանակ. հոն Արրահամ բնակեցաւ և Սեղան կանգնեց Աստուծոյ (Ծն. ԺԴ. 18, ԺԴ. 13),



Երկայնակոր կաղնի. — *Q. pedunculata* Ehrl.

հոն Տէրը Արրահամին երեւցաւ եր նա նստած էր կէսօրին իր վրանին դռւոը (Ծն. ԺԲ. 1):

Բասանու կաղնիները նշանաւոր էին իրենց բարձրութեամբ և Եսայի Բ. 13 ցոյց տալով տէրոջը զօրութիւնը, որ կը պատժէ ամբարտաւանները, կ'ըսէ^ս [օր Տեսոն զօրութեանց] ի վերայ ամենայն մայրից Լիրանանու բարձրացելոց և վերացելոց, և ի վերայ ամենայն ծառոց կաղնեաց Բասանու:

Եզեկիէլ Տիւրոս քաղաքին վրայ խօսելով կ'ըսէ. «Ի Բասանէ [Բասանի կաղնիներէն (կղնիմ)] արարին զղեկս նաւաց քոց» Եզ. Իշ. 9. և Զաքարիա (ԺԱ. 2) կը յաւելու. «Ողբացին սարոյք, զի մայրք գլորեցան, զի մեծա-

պէս մեծամեծք չուսուցան . ողբացէք , կաղնիք Բասանու , զի քակեցաւ անտառն տնկախիտ :

Դերորա թաղուեցաւ Սգոյ կաղնիին տակ Ծն . լ. 8 . և Սաւուղ Թափորայ կաղնիէն կ'անցնէր երբ իրեն ծանուցին թէ իր հօր էշերը դանուած էին :

* * *

Ալլոն և կել (կաղնի) գործածուած են իրրե յատուկ անուն , այսպէս կը կոչուէին Զարու զոնի երկու որդիքը : Ծն . լ. 8 . Թիւ . իԶ . 26 , Ա. Մնաց . Դ . 37 :

Հայերէն Աստուածաշունչի մէջ կաղնի բառը գործածուած է .

Ծն . ԺԱ . 6 . ԺԴ . 18 . ԺԴ . 13 . ԺԸ . 1 .
լ. 8 . — Բ Օր . Թ . 30 . — Դատ . Դ . 11 .
Զ . 11 [կլայ] . Թ . 6 . 37 . Ա. Թագ . Ժ . 3 . Ժկ .
19 [կլայ] . — Բ Թագ . ԺԸ . 9 . 10 . 14 [կլայ] . —
Սաղմ . ՃԻ . 4 [Խոսկմ] . — Ես . Բ . 13 . Զ .
13 . ԽԳ . 14 . — Ալ . Դ . 13 . Եղ . Զ . 13 . Իկ .
6 . — Ամ . Բ . 9 . — Զաք . ԺԱ . 2 .



Ս Օ Ս Ի

Ասի . — Երբ . Արմեն . — πλάτανος . — Platanus . — Platane . — Անգղ . Plane-tree . — Platanus Orientalis L. — Թրք . Դավթաղան , չինար . — Ար . Վճ դուլը :

Խսկապէս Հայկական ծառն է Սօսին , Հայաստան և Կովկաս եղած են իր բնագաւառն ու անկէ տարածուած ամենուրեք . մինչ Հայաստանի և Փոքր Ասիոյ մէջ կրնայ տարածուիլ սերմով , օտար երկիրներու մէջ , ի Ֆրանսա և այլուր կը տնկեն և կը հասցնեն մանր ճիւղեր տնկելով :

Հայկական պատմութեան մէջ սօսին ծառնօթ է , մեր նախահարք Քրիստոնէութիւն ընդունելէ առաջ Բնութեան պաշտօն կը մատուցանէին , յաղթ սօսիներու տակ կը զոհարերէին և անոնց տերեւներու առաւիւնէն պատգամներ կը հանէին :

Նշանաւոր էին Արմաւիրի Սօսիները զորս Հայկայ որդին Արմենակ տնկած էր . և Հայկաղանց վերջին թագաւորը , Արայի որդի Անուշաւան , կը կոչուէր Սօսանոււր . «Ճօնեալ էր ըստ պաշտամանց ի Սօսիսն Արմենակայ , որ յԱրմաւիր զորոց զսաղարթուցն սօսաւիւն , ըստ հանդարտ և կամ սաստիկ չնչելոյ օդու եւեթ ոստոց շարժումն , սովորեցան ի հմայս

յաշխարհի Հայկազանց . և այս բազում ժամանակսուն [Խորենացի] :

Արմաւիրի աւերալները կը գտնուին Այրարատայ Արագածոտն գաւառի Սարտարապատու վիճակին , կամ Արմաւրայ գաշտի մէջ բարձրացող համանուն բլրակին վրայ : Սոյն բլրոյն արեւմտակողմը ըստ աւանդութեան բնակչաց , երկիրը հերկած ժամանակ , զտած են ծառոց միծամեծ արմատներ , զորս ոմանք կը համարին այն հնադարեան սօսեաց միացորդները [Էփրիկեան . բնաշխարհիկ բառարան Հտ . Ա . էջ 304 . Վենետիկ] : Ցարդ մեծ սօսիներ կան յՈրդուատ Գողթանայ , ի Վարդաչէն Գանձակաց [Ալիշան , Հին Հաւատ Հայոց . էջ 75] :



Մեծ ծառ է սօսին , մինչեւ 30-35 մէտր բարձրութեամբ , ուղիղ կը բարձրանայ և կը տարածէ իր ճիւղերը : Կեղեւը ողորկ է , զորչ կանաչագոյն և կ'իյնայ , կը թափի լայն շերտերով : Տերեւները փոխադիր են , լայն , որթի տերեւներու նման բլթաւոր (lobée) . Նորածիլ տերեւները մազուտ են , բայց յետոյ կ'ըլլան լերկ : Ծաղիկները միասեռ միաբնակ (monoïques) են , միեւնոյն ծառին վրայ կը գտնուին առանձին ու կը կազմեն 3-4 զունդեր , խոզակներ կախուած կոթի մը երկայնքը : Ծաղիկները պատեան (périanthe) չունին , այսինքն ոչ բաժակ ու նին , ոչ պսակ , այլ նուրբ թեփեր . պառուղներն



Սոսի .— *Platanus orientalis* L.

1. Որձ ծաղիկներ .— 1' . Նախորդ տար-
ուան ծաղիկներ .— 2 . Եղ ծաղիկներ .— 3 .
Պտուղ մէջտեղէն կտրուած .— 4 . Աերմիք
պատեանին մէջ :

են չոր , միախորշ , ցացուող փոքրիկ լախտերու նման , ստորեւ մազով պատած :

*
* *

Սօսին Հայաստանէն անցաւ Յունաստան , ի Հռովմ ուր պարտէզներու , ճամբաներու իրրե զարդ կը տնկուէր իր հովանոյն համար : Շատորբիան իր “Ողի Քրիստոնէութեան” գրքին մէջ (հտ . Բ . 8) “Այս աստուածային մարդիկը (Ամֆիոն , Կադմոս , Արփէոս) , կ'ըսէ , Սօսիի մը տակ նստած , ամբողջ զմայլած ժողովուրդի մը կու տային իրենց դասերը : ”

Պղինիոս կը նկարագրէ Լիւկիոյ մէջ սօսի մը աղբիւրի մը քով , որու շրջապատը 81 ոտք էր (Գլ . ԺԲ . 5) , Հռովմայեցի Լիկիոս Մուկիանոս հիւպատոսը անոր բունին մէջ օթեւանեցաւ 18 հոգւով : Կալիգուլա սօսիի մը բունին մէջ 95 հոգիի սեղան մը տուաւ : Դը Կանգոլ (Physiologie végétale . p. 993) կը յիշէ սօսի մը Վոսփորի վրայ ի Պէօյիւքտէրէ 90 ոտք բարձր , 15 ոտք շրջապատով :

Քսերքսէս երբ Լիւդիայէն կ'անցնէր , հոն պաշտօն մատոյց հոյակապ սօսիի մը : Սօսեպաշտութիւնը ցարդ գոյութիւն ունի Փոքր Ասիոյ մէջ : Ատարազարի մօտ կայ հին Սօսի մը , չարալ դաւախ կոչուած , ուր ուխտի կ'երթան ամուլ կիներ . մայրերը կը տանին տղաքը որոնք իրենց անկողինը կը թրջեն զիշերը և տակէն կ'անցնին ու լաթի կտոր մը կը կապեն վրան :

* * *

Սօսին իր ստուերէն դատ մեծ օգուտ մը չունի, ինչպէս որ կը նկատէ նոյն ինքն Մխիթար Գոշ իր ժթ. առակին մէջ, բայց ունի քանի մը վնասներ :

Իր նոր տերեւներն ունին իրենց վրայ աղոտամաղներ առտղաձեւ մանր փուշերով որոնք հովին հետ կ'ել թան կը մանեն մարդոց աչքը, քիթը, կոկորզը, յառաջ բերելով աչքի կարմրութիւն, արտասուք, հարբուխ, հազ, ինչպէս սիզարոյմներու (graminées) և ուրիշ տունկերու արգասաւորիչ փոշին (pollen) յառաջ կը բերէ asthme des foins :

Փարիզի գործաւորները որ պողոտաններու սօսիները կը յօտեն, կ'աշխատին առտուանց կանուխ ցորչափ արեւը չէ բարձրացած ու ցօղը փակած կը պահէ փշոտ աղուամաղները տերեւներուն վրայ : Միեւնոյն պատճառով Ամերիկայի մէջ արդիլուած է ազարակներու մօտ և հիւանդանոցներու շուրջը սօսի տնկել :

Դիսկորիդէս արդէն կ'ըսէ որ սօսիի տերեւներուն աղուամաղը կը վնասէ աչքին ու ականջներուն :

Սօսին ուրիշ անպատեհութիւն մըն ալ ունի. Իր ողորկ ու ճաթուող կեղեւին տակ ճմեռը 20—100ական խումբերով կ'ապրի սարդաղզի ցեց մը կարմիր, քոսի ակարի (acarien) տեսակէն, (Tetranychus telarius L. var. Rus-

sealus Koch.) որ երբեմն մարդու ալ կը յարձակի :

Կեզեւին տակ բարակ թելերէ բաւական թանձր սատայն մը կը կազմին և անոր ծալքերուն մէջ խմբովին կ'անցունեն ձմեռը, զարնան կ'իջնեն պարտէզներու մէջ և լուրիաներու ու մանաւանդ ելակենիներու տերեւներուն վրայ կ'անցունեն ամառը իրենց խայթոցով անոնց աւիչը ծծելով. քաղաքներուն մէջ ուր չեն գտներ ելակենիներ, դժկամակօրէն կը գոհանան սօսիին կարծր տերեւներովը ու երրառիթը գտնեն՝ մարդուն վրայ կը յարձակին, մազերուն ելած ծակերը խօթելով իրենց խայթոցը, և կը պատճառեն քերուրտուք, կարմրութիւն մորթի, իրենց թողած գրգոփչ հեղուկին հետեւանքով : [Dr. Stephan Artault. "Le platane et ses méfaits," in Archives de Parasitologie., T. III. 15 Մայիս 1906, Paris].

*
* *

Արևոն Երբայեցերէն կը նշանակէ սօսի, արման (մերկանալ) արմատէն, քանզի ողորկ կեղեւը լայն շերտերով կ'իջնայ, կը հանուի : Արմոն գործածուած է երեք տեղ .

1) Եւ առ Յակոր դաւազան՝ շեր դալար և ընկուզի և սօսոյ, Ծն. I. 37 :

2) Եւ իրեւ ձիթենի վայելուչ ի դաշտի : Եւ իրեւ սաւս ի գնացո ջուրց բարձրացայ : Իմաստ . Սիրաք, ԻԴ. 19 :

3) Սարդն և սարոյն և նոճ ի դրախտին
Աստուծոյ ոչ հաւասարեցին շառաւիղաց նորա,
մայրքն և սօսոյֆ [արևնիմ, սօսիներ] ոչ
նմանեցին ոստոց նորա . Եղ. լլ. . 8 :

Այս երեք հաստուածներուն մէջ Երրայական
արևնն , ինչպէս Հայերէնին , նոյնպէս Վուլգա-
տային , platanus , և Ասորերէնին մէջ , դուլլո
(սօսի) , նմանօրինակ թարգմանուած են :

Իսկ Եօթանասնից թարգմանութիւնը առա-
ջին երկու հաստուածներուն մէջ միայն կը դնէ
πλάτανος , սօսի , մինչ երրորդին մէջ ունի
Էլատաւ , եղեւինք և Եղեկիէլի լլ. . 8 հաս-
տուածին մէջ կը տեսնուի Հայ թարգմանու-
թեան վրայ Ասորական ու Յունական թարգմա-
նութեանց ազգեցութիւնը . անտարակոյս Ասո-
րականէն եղած առաջին թարգմանութիւնն ունէր
ի սկզբան սարդն [κρόνο], սարոյն [արխէ].
սօսոյֆ [դուլլոկ] , համաձայն Երրայականին՝ որ
ունի արագին [cèdres , մայրիք լիրանանու] ,
բրոցին [cyprè , սարոյք կամ նոճք] , արևնին
[սօսոյք] : Յունարէնն այդ հաստուածին մէջ
ունի չուպազուու [նոճք] , ունչու [մայրք , pins ,
չամ] , Էլատաւ [Եղեւինք , sapins] . Թարգմանիչք
սխալած չրլլալու համար կ'աւելցունեն Յու-
նարէնէն նոճ , մայրին բառերը , աւելորդ տեղը
անչուշտ , առանց միւսները վերցնելու :

* *

Հայերէն Աստուածաշունչին մէջ ուրիշ չորս
տեղ եւս կայ յիշատակուած սօսին .

4) Եւ փառքն Արքանանու առ քեզ եկեսցին սարդիւն և սօսիւ և նոճով և մայրիւ՝ առ հաւ սարակ փառաւոր առնել զտեղի սրբութեան իմոյ։ Ես. կ. 13։

5) Եւ բղխեցուցից յանջուր երկրին զմայրն և զտօսախն, զմուրտն և զնոճն և զսոն, զսարդն և զսարոյն և զկաղամախն, զզին և զփայտն իւղոյ։ Ես. իԱ. 19։

6) Զայն փայտ զոր եհատն, զսարոյն կամ զսոնն, զկաղնին կամ զթեղօչն։ Ես. իԴ. 14։

7) Ելէք ի լեառն և բերէք տերեւս ձիթենեաց, և տերեւս ի ծառոց սօսեաց և տերեւս ի մրտենեաց խնկենեաց, և տերեւս արմաւենեաց, և տերեւս ի թաւ ծառոց։ Նէէմ. ը. 15։

Ես. կ. 13 և իԱ. 19 հատուածներուն մէջ Հայերէնը կը գնէ սօսի Երբայական ժիղյար բառին տեղ զոր այժմ կ'ընդունին իրրեւ թեղի, օրու, Գարա աղամ և այդպէս ալ թարգմանած են Ակիլայ և Ակւմմաքոս ռէվլէա, թեղի զնելով։ Անզդիական թարգմանութիւնը կը գնէ րին, մայր, չամ, Եօթանասնից նման որ ունին ռէվնոյ։ Տիղյար, Հայերէնին պէս, սօսի թարգմանուած է Արաքերէնին մէջ ալ որ կը գնէ դուրը։ Ես. իԱ. 19։

Ես. իԴ. 14ին մէջ սօս դրուած է Երբայական ժիրզային տեղ, անշուշտ նոյնը նկատելով ժիղյարը և ժիրզայն։

Այս հատուածին մէջ Ասորական թարգմանութիւնը կ'ըսէ պարզապէս։ «Այն փայտը զոր կտրեց կաղնիի անտառէն [օրոյ, մէշէլիք]».

Իսկ Եօթանասնից բնագիրը կը դո՞ւանայ մայր զնելով :

Երրայական բնագիրն ունի այս հատուածին մէջ էրեղ [cedre, մայրի Լիբանանու], շրջայ [yeuse, սղոցի], էլոն [կաղնի], որին [pin, թեղոչ, չամ].

Ակիլայ և Թէռառոսիոն կը թարգմանեն ոչ մայրի, ձգութանուոս [սղոցի], ծընչ [կաղնի], ուժուած [թեղոչ] :

Այս հատուածին մէջ պէտք է լինի Սարդ, որ է մայրի Լիբանանու, փոխանակ Սարոյի:

Նէէմ. թ. 15 հատուածին մէջ սօսիի գործածութիւնը շատ աւելի տարօրինակ է. Երրայեցէրէնն ունի սու բառին աեղ ըմ շկմեն, որ է ծառ իւղոյ, Յունարէնը կը դնէ հսկացութեածու, նոճի, իսկ Ասորերէնը կուզա, ընկոյզ. գուցէ Հայերէնին սու բառը գրչագրի սխալ ըլլայ և դրուած փոխանակ նոնի :

Անդիմական թարգմանութիւնն ունի, pine, չամ, իսկ Վուլգատան frondes ligni pulcherrim [կողերս զգեղեցիկ ծառոց]: Նէէմիի այս հատուածը Դեւտ. ԻԴ. 40ին կը համապատասխանէ :



Գ Ւ

Գի. — Երբ. Արար. — ճշեսնթօս . — Juniperus. — Genièvre. — Juniperus oxycedrus L. — Թրք. Արտըռ . — Ար . عَصْرِ اَرْتَرْ :

Ցրդի. — թզան . — brathy. — Sabine. — Juniperus Sabina L. — Ասդղ . Savin. — Ար . اَسْدَغْ : صَفْنَة :

Գին կը պատկանի մերկասերմներու (gymnosperme) տոհմին մէջ նոձեայց ցեղին : Մերկասերմ կը կոչուին , որովհետեւ իրենց սերմը փոխանակ պառուղի մը մէջ փակուած ըլլալու , մերկ է , անպատսպար : Կը կոչուին նոյնպէս կրնարեր (conifère) , որովհետեւ իրենց պառուղը կը ներկայացունէ առ հասարակ կոն (cône) մը . այսպէս են եղեւինները , մայրինները , նոճինները :

Գիերը որոնց երեսունի չափ տեսակները կ'անին հիւսիսային կիսազնզի լեռնային մասերուն մէջ , ծառեր կամ բուփեր են որոնց որևէ եւ եզ ծաղիկները տարբեր ծառերու վրայ կը գտնուին (dioïque) . իրենց տերեւններուն ձեւէն կրնանք գիերը բաժնել երկու կարգի . ոմանք , ինչպէս հասարակ զին (Juniperus communis L.) , բզուկ զին (J. nana Willd.) , (J. oxycedrus L.) , ունին փշոտ տերեւններ որոնք երեքական շարուած են ճիւղին շուրջը (verticille) . միւսները , ինչպէս փիւնիկան զին (J. phoenicea L.) , խնկարեր զին (J. Thurifera L.) և ցրդին (J.

sabina L.) նոճիին նման թեփածեւ տերեւներ ունին կղմինտրի պէս իրարու անցած(imbricqué)։ Մշտադալար են բոլորն ալ և իրենց կոնածեւ պտուղը թանձր և մսոտ թեփեր ունի որ կը նմանցունեն զայն հատապտուղի (baie)։

Գիի գլխաւոր տեսակներն են.

1. Հասարակ զի (J. communis L.) վշածայր տերեւներով, ունի պտուղ զնտածեւ, մսոտ, սև կապոյտ, համը անուշ է, զրգոիչ և միզարեր, անով կը պատրաստեն այն բսուածօղին։

2. Փշու մայրի կոչուած տեսակը (J. oxycedrus L.) որուն փայտը, երբոր գոց տեղ մը այրուի, կու տայ կաղի իւղ (huile de cade) կոչուած ճճիասպան կուպը մը. երկայն ու վշածայր տերեւներ ունի, պտուղը կարմիր նարնջագոյն է։

3. Ցրդի (J. sabina L.) տերեւները կարճ են և կղմինտրի պէս չարուած թեփեր ունի, պտուղը գոց կապոյտ է ծռած կոթով, տերեւներն ունին իրենց ետեւի կողմը բուշտ մը ուր կայ ցրդիի գոյացութիւն (essence de sabine). ցրդիի փոշին վէրք կը բանայ։

4. Փիւնիկեան զի (J. Phoenicea L.=J. tetragona Moench). տերեւները ցրդիին տերեւներուն նման են, միայն ետեւի բուշտը կը պակսի. պտուղը կարմրորակ է, բաւական խոշոր։

Պաղեստինի մէջ դժուուող տեսակներուն գլխաւորներն են 1^o. Փշու մայրի բսուածը

որուն նոր ճիւղերը եռանկիւնի են և պառւղ-
ները կը հասուննան երկու տարիէն, ասի-
կա է անտարակոյս Աստուածաշունչի արարը
և 2⁰. Փիւնիկեան զին:

Բուն ցրդին չկայ Սուրբոյ մէջ, անոր տեղ
կայ J. Taurica Pallas=J. Excelsa Bieberstein:

* * *

Դի բառը Հայերէն Աստուածաշունչին մէջ
յիշուած է երկու տեղ.

1) Գ. Թագ. Զ. 31 և 33, ուր նկարագ-
րուած է Երուսաղէմի տաճարը զոր Սովոմոն
կանգնեց, և բառած. «Եւ դրաց դարիրայն ա-
րար դուրս ի փայտից զիոց» 31: «Այնպէս ա-
րար դրաց Տաճարին սեամս ի փայտից զիոց
չորեքլինս» 33:

2) Ես. ԽԱ. 19. «Եւ բղխեցուցից յանջուր
երկրին զմայրն և զտօսախն, զմուրտն և զնոձն
և զսօսն, զսարդն և զսարոյն և զկաղամախն,
զզին և զփայտն իւզոյ:»

Առաջին երկու համարներուն մէջ զին
ճշգրիտ թարգմանութիւնն է Յունարէն ձօքեսնթօս
բառին զոր կը գործածէ Յունարէն բնագիրը:
Գ. Թագ. Զ. 32-33 համարները կը պակսին
Եօթանասնից թարգմանութեան սովորական
օրինակներուն մէջ. կը գտնենք զանոնք դար-
ձեալ Samuel Leeի Biblia Polyglottaին սկիզ-
բը (Variae Lectiones E Textu Editioni Gra-
bii):

Երրայական բնագիրը այդ համարներուն մէջ ունի ըն շկսեն , ծառ իւղոյ , զոր Եօթանասունք չեն հասկցած և սխալմամբ թարգմանած են ձօքեսթօս զի , և Հայ թարգմանիչք ալ հետեւած են անոնց : Յունական ուրիշ թարգմանութիւն մը ունի Էնկար պես անոնց [Hexaples d'Origène par de Montfaucon, Paris, 1713. Հտ . Ա . էջ 355] :

Ասորական և Լատին թարգմանութիւններն ուղիղ են : Ասորականը կ'ըսէ , կայսոյ ժկ' Մշկօնիրոյ [իւղոտ ծառ] իգական ձեւով . իսկ Վուլգատանն անոնց լուսաւած լինած թարգմանութեանց մէջ :

Ես . ԽԱ . 19 հատուածը շատ աւելի տարօրինակ է . զի բառը չգտնուիր ոչ Երրայական բնագիրն և ոչ Յունական կամ Ասորական թարգմանութեանց մէջ :

Երրայական բնագիրն ունի ըն շկսեն , իւղի ծառ , զոր տեսանք թէ Եօթանասունք թարգմանած էին զի , և Հայք ընդունած էին զայն :

Արդ Եօթանասունք Եսայեայ այս հատուածին մէջ բոլորովին զանց կ'ընեն թարգմանել ըն շկսեն . Ասորական բնագիրը նոյն այդ հատուածին մէջ ունի կայսոյ և մեշնո [ծառ իւղոյ] արական ձեւով : Հայերէն բնագիրը ոչ միայն կը պահէ ծառ իւղոյ , այլ և կը յիշէ որ ըշ ձեւով թարգմանած է այլուր Գ. Թագ . Զ . 31 , 33 զի և կը դնէ երկուքը միասին զի եւ իսայս իւղոյ , փոխարէն ըն շկսենի : Այս հատուածը , ինչպէս ուրիշներ , ցոյց կու տայ թէ Հայ թարգմանիչք ոչ միայն համեմատեցին Ասորական և

Յունական ձեռագիրները, այլ և օգտուեցան
երրայերէնի ծանօթութիւններէ զորս ունեցող-



Դի.— *Juniperus Communis* L.

Ներ կային թերեւս իրենց մէջ կամ իրենց
շուրջը :

* * *

Դին երրայերէն կը կոչուի արար և Արար-
ները ցարդ արար կը կոչեն զի՞ն *juniperus*
oxycedrus L. [Post. Flora of Syria, Pales-

tine, and Sinai], և Հայ բժշկարան մը կը գրէ . “յառյառ , գիի ծառ և իւր պտուղն ուրյուն էն —սարվի ճապալ , յարյարն էն . — գիոյ ծառ , առառ , արտուճն [Հայերէն բժշկարան ձեռագիր , թիւ 245 . Փարիզի Bibl. Nat.ին] :

Արար գործածուած է երկու տեղ Երրայական բնագրին մէջ . Եր . Ժէ . 6 . և Խէ . 6 : Սակայն Եօթանասունք չեն ճանչցած ստուգիւթէ ի՞նչ է արարը :

Եր . Ժէ . 6 “Եւ եղիցի [մարդ որ արասցէ զյոյս իւր ի մարդ] իրրեւ զինշա վայրի [արար] յանապատի , և մի՛ տեսցէ յորժամ դայցէ բարութիւն : ”

Այս տեղ մոշա վայրի ուղղակի թարգմանութիւնն է Եօթանասնից որ ունին ձգումքուն այսինքն , myrica sylvestris , tamarix sauvage , որ է ցախ , ցարասի (bruyère , heath) : Ասորերէնը կը դնէ եկորա , ծառի կոճղ : Սիւմմաքոս կը թարգմանէ չնլու ճազուն , “անպտուղ ծառ” և այս առթիւ Հերոնիմոս արբան կը յաւելու . “Եւ է որպէս մոշա [myrica] , Երրայերէն կը կոչուի արոյէր , և կամ ինչպէս կը մեկնէ Սիւմմաքոս , ծառ անպտուղ յամայութեան : ”

Արդ գիի տեսակներէն ումանք ունին տերեւներ ինչպէս մոշան . և Աւիոէն , Սինայ որդին իր կանոնին մէջ կը գրէ .

Էրիկ (ցրզի . Juniperus Sabina L.) գիի [չը չը] պտուղ է նման զղեարի (զարուր , մուշ-մուլա , mespilus) , միայն շատ աւելի սեւ . . . այս

ծառերը երկու տեսակ են, մէկ տեսակին տեսրեւները կը նմանին նո՞մի տերեւներուն, ունենալով փուշեր, և կը տարածուի, չերկնար. միւսն ունի տերեւներ խնչպէս մոշան [طرفة, tamarix], և նո՞մին պէս համ ունի... [Avicenne, Trad. latine de Plumbius.— Lane's Arabic — English Lexicon].

Եր. ԽԸ. 5 հատուածին մէջ (Եօթանամնից լԱ. դլուխը) գրուած է արոյեր ձեւով և թարդմանուած ծոնչ աղօրօս վայրի էշ, ցիո:

“Փախերուք և ապրեցուցէք զանձինս ձեր, և եղիջիք իրրե զցիո յանապատի:”

Վուլզատան Երեմիայի երկու հատուածներուն մէջ ալ կը գործածէ ուցիւած է մոշա:

Արարի սկզբնական նշանակութիւնն է միայնակ, ամայութիւն, աւերակ:

Տքնեցայ և եղէ որպէս ճնճղուկ միայն [արար] ի տանիս: Սաղմ. ՃԲ. 2:

Արոյեր գործածուած է իրրե աեղւոյ անուն. Ես. ԺԷ. 2ի մէջ զրուած է թէ “Արոյերի քաղաքները լքուած են:” Եօթանասունք արոյերը կը կարդան ատէ աղ և կը թարդմանեն լիուած յաւիտեան εἰς τὸν αἰώνα “Լքեալ յաւիտեան ի մակատեղս հօտից և ի հանգրուանս անդւոց և ոչ ոք իցէ որ հալածիցէ:” Ասորերէնը կը գնէ աղոյ իր [մինչև ցԱր]:

*

*

Արոյեր իրր տեղի անուն յիշուած է Եր. ԽԸ. 19, ԲՕՐ. Բ. 36, Դատ. ԺԱ. 26, ԱԹԱԳ. Լ. 28, ԲԹԱԳ. ԻԴ. 5:

* * *

Օտար թարգմանութիւններ գի թարգմա-
նած են տարբեր տունկեր :

Ես . Լի . 24 Բըռոշ , որ կը նշանակէ նոճ ,
սարոյ , Սիւմմաքոսի Յունական թարգմանու-
թեան մէջ ազհեսթօս գի թարգմանուած է . Հա-
յերէնը , ինչպէս Եօթանասունք կը դնեն ու-
ղիղ , նոճ :

Անդեմը որ է օրոճ , գի թարգմանած է Ա-
կիլայ , որմէ ևս Վուլգատան . Անգղիական
թարգմանութիւնն ալ անոնց կը հետեւի սխալ-
մամբ և կը դնէ juniper : Գ. Թագ . ԺԹ . 4—5 ,
Յոր . Լ . 4 , Սաղմ . ՃԻ . 4 :



ԱՐՁՆԴԵՂ


Արջնդեղ.— Սև սոնիճ [վան]. Սև գնդիկ [Ատաբազար].— Երր. կլճայ.— մելանթիոն.— Լու. gith.— Nigella Sativa L.— Nigelle, toute épice. cumin noir. —Nigella arvensis L. = Nielle bâtarde, poivre commune.— Թրք. جبة البركت شونيز. جورك اونى خکورکەل ئورنى.— Արմ. շոնչ շոնիիզ. چورک اوئى հարրէք իւլ բکرկֆկը. جبة السودا հարրէք իւս սկվ-սա. سیاه دانه սիյահ տանկ. — Անդղ. Fennel Flower.

Արջնդեղը կը պատկանի հրաննկեայներու (renonculacées) ընդարձակ տոնհմին որու մարդ կը հանդիպի ամենուրեք, այս տոնհմէն են հրանունկը, ակոնիտը, ամանկոտրուկը, պուտը (anémone), եղերորոսը :

Արջնդեղը հասարակ բոյս է որու մէկ տեսակը կը բուսնի դաշտերու մէջ (Nigella Arvensis L.) :

Արջնդեղը (N. Sativa L.) կը մշակեն իր սև հունտերուն համար զոր Արեւելքի մէջ կը զործածեն իբրև համեմ սեւ գնդիկ կամ սեւ սոնիհանունով :

20—30 հարիւրորդամէտր բարձրութեամբ տարեւոր տունկ մըն է ճղճղկէն, թել թել տերեւներով, ծաղիկը հինգ փերթեր ունի կապուտիկ երակներով պիսակուած, իսկ թեր-



Արջնիկ. — *Nigella Sativa L.*. — 1. ♀առողը :

Թերը շատ մանր են, սերմնաբանները (carpelle) 5—7 հատ են մինչև ծայրը իրարու միացած :

Փոքր Ասիոյ, Սուրիոյ, Եզիստոսի մէջ շատ տարածուած է : Դոկտ. Պոստ Կօթնէ աւելի գլխաւոր տեսակները կը յիշէ ի Սուրիա :

Հնուց ծանօթ էր արջնդեղը, Դիոսկորիդէս կը խօսի անոր մասին (Diosc. III. 83). Եգիպտական գերեզմաններու մէջ յաճախ գտնուած են արջնդեղի հունտեր (Loret. Flore Pharaonique. 1890) :

Արջնիղեղը յիշուած է ես . իլ . 25—27 համարներուն մէջ , ուր Մարգարէն կը յայտնէ որ ամէն բան իր յարմար ժամանակին և իրեն յատուկ եղանակով պէտք է որ կատարուի լաւագոյն արդիւնքը տալու համար :

“Միթէ զօ՞րն ամենայն հերկիցէ որ հերկէն , կամ թէ սերմն յառաջագոյն ցանի՞ցէ , մինչեւ զերկիրն գործեալ իցէ : Ո՞չ ապաքէն կակղէ զերեսս նորա , և ապա սերմանէ փոքր մի արջնիղեղ և չաման . . . Զի ոչ եթէ խստիւ ինչ սրբի արջնիղեղն , և ոչ զանիւ կամնասայլին ածեն ի վերայ չամանոյն , այլ զաւաղանաւ թօթափի արջնիղեղն , և չամանն հացիւ ուտի :”

Երրայերէն բառն է կրծայ զոր Եօթանասունք կը թարգմանեն մελάնթιօն և Վուլգատան ցith.

* * *

Փարիզի Ազգային Մատենադարանի թիւ 245 ձեռագիր բժշկարանին մէջ կը դտնենք .

“Հարի սելտայ , սև սոնիճ , սիա թօխմայ .” հնտի չաման , սև սոնիճ , շոնիճ .—շունիզ , սև սոնիճ , սիա թօխմայ , սիա տանայ , թօխմ հնտի . սել չաման :” “Գալիանոսի բառից մէջ [Հայ ձեռագիր Փարիզի “Bibl. Nat. թիւ 260 էջ 226—232] կայ մեղանքիոն , սոնիճ :

Մխիթար Գոշ կը յիշէ արջնդեզը Խէ առակին մէջ . “Ի սերմանց է և անուանեալն արջնդեզ , զոր լուեալ արջու . ի ցաւել որովայնին առեալ եկեր՝ կարծելով դեղ ինքեան

վասն անուանն , և ինչ ոչ օգտեալ՝ ասաց .
Ո՞ խորու և ճանդի , որքան բարի էք որու-
վայնի :

Արջնդեղ կը նշանակէ սև ունդ :

* * *

“Հայրուսակը” , Քաջունիի բառազիրքը , կը
դնեն պատկեր մը իրքև արջնդեղի , որ ճիշտ
չէ , դրուածը պատկերն է ունիլու չափուած
կոչուած տունկին որու գիտական անունն է
lychnis githago և որ կը բուսնի առատօրէն ցո-
րենի արտերու մէջ . մեխակազզի (*caryophyllée*)
է և մեխակի նման ծաղիկ ունի կարմիր մանի-
շակազոյն . ընդգիմաղիր , նեղ տերեւներ ունի :



ՓԵԳԵՆԱ

Փեղենա. — Սպանի. — Πίγανον. — Peganum. — Rue. — վայրի սպանի. Peganum Harmala. — բծշկալիս սպանի. — Rue officinale. = Ruta graveolens L. = R. Hortensis Mill. — **Թրք.** Սհշկի օրու, իւզերլիք. — Ար. — حشيشة الجن. — حرمل. հարմալ. — Պրս. اسند իսփէնս. — Հնդ. Սաւապ. — Սանսկ. Սաւապայա:

Փեղենան կամ սպանդը տեւական խոտ է որու բազմաթիւ ահսակները կան. փոխադիր տերեւներ ունի ճղճղկէն, կլոր ծայրերով և նեղ։ Իր կանոնաւոր գեղին ծաղիկները պսակաձեւ չարուած են ճիւղին ծայրը չորս փերթով, չորս կորնթարդ դգալաձեւ թերթերով, միայն կեղրոնական ծաղկին թերթերը հինգ հատ կ'ըւլան։ 8 առէջ ունի. ձուարանը զրեթէ անկոթէ և ստորեւ ունի 8 նեկտարաբեր փոսիկներ, պտուղը չորեքխորչ է։

Անախորժ և բուռն է հոտը զոր կը նախընտրէին Հոռվմայեցի տիկինները. կը պարունակէ զոյացութիւն մը զոր կարելի է զատել ջուրի հետ թորելով (distillation)։

Պնդիչ, ճճիասպան և քրտնաբեր է այս խոտը և մանաւանդ դաշտանաբեր։ Մլուկներու դէմ շատ լաւ դեղ մըն է։



Փեղենա կամ Սպանի. — *Ruta Graveolens* L. — 1. Ծաղիկը. — 2. Պտուղը. — 3. Սերմը :

Հայաստանի այլեւայլ կողմերը ի մասնաւորի վան առատօրէն կը գտնուի խոպան և անջրդի տեղեր, ինչպէս հին Հայկական գերեզմանոցներու մէջ. Վանեցիք կը կոչեն զայն սպանի որ նոյնն է Պարսկերէն իսֆենսին հետ :

Փեղենայի կամ սպանդի գլխաւոր տեսակն է բժշկական սպանդը (*Ruta graveolens* L.) որ կը գտնուի նոյնպէս ի Առւրիա. բայց Սուրիոյ մէջ ծանօթ է մանաւանդ Հալկափի սպանդը (*Ruta Chalapensis* L. = *R. Angustifolia* Pers.) նեղ տերեւներով զոր Արարները հարմաշ կը կոչեն :

* * *

Ղուկ. ԺԱ. 42. «Այլ վայ ձեզ Փարիսեցւոց ,
զի տասանորդէք զանանուխ և զինզենա և
զամենայն բանջար , և անցանէք զիրաւամբք
և զսիրովն Աստուծոյ :

Փեզենա Յունարէն Պիյացօն բառին թարգ-
մանութիւնն է և սխալ տառադարձուած է ,
պէտք էր ըլլար պէզանոն կամ պէզենա:

Ղուկասի այս հատուածը կը համապատաս-
խանէ Մատթ . ԻԳ . 23ին ուր գրուած է .
«Վայ ձեզ Դարրաց և Փարիսեցւոց կեղծաւո-
րաց , զի տասանորդէք զանանուխ և զամիր
և զշաման և թողէք զծանր ծանր օրինացն ,
զդատաստան և զողորմութիւն և զհաւատս :

Մեկնիչք ուժանք կը կարծեն որ Երրայեցե-
քն սըրբան , որ է սամիթ , սխալ կերպով
սըրբարա կարդացուած է , այսինքն փեզենա ,
Ղուկասի մէջ :

Ի սկզբան անանուխը , չամանը , փեզենան
տասանորդի ենթակայ չէին , միայն վերջէն է որ
այս խոտերն ալ իբրև համեմ՝ ենթարկուեցան
տուրքի :



ՔՐՔՈՒՄ

Քրինում .— Եղբ .— Քարֆուլ .— Κρόκος .— Crocus.— Safran.— Crocus Sativus L.— Թթվ .— Ար .— ریقان rhyānīkīlānī . زعفران .— الجَاد kādāk-սաղ , كرک fħirfħiħel:

Կանարակ .— Κνηκος .— Cnicus, Carthamus .— Carthame, Safran bâtard.— Carthamus Tinctorius L. = Carduus Orientalis Tourn.— Ար .— عصفر muqmr , احْرِضْ ħarrħaq . قرطم l-piżżejja .— Պըս .— كاجيره կանայրէ:

Կանարակի սերմը .— graine de perroquet. قرطم կافيت .— نخْمَ كافيت .— Խմ կավիտ .— բուխտի քաղիշէ .— نخْمَ կայրէ բուխտի կանայրէ կիլանի լեզուով :

Քրքումը միաբլթակներու մեծ բաժանման մէջ հիբիկազգիներու (iridées) տոռմին կըպատկանի . 50է աւելի տեսակները կ'աճին հին աշխարհի , մանաւանդ Արեւելքի մէջ . անկէ տարածուած է Եւրոպա :

Իր գլխաւոր տեսակն է մշակուած frfniħel (Crocus Sativus L.) , որուն սոսորգները կը գործածուին միայն , զաքրան կամ qħarsk անուամբ , իբրեւ համեմ և իբրեւ դեղ :

Զազարածեւ ծաղիկներ ունի քրքումը ստորադիր (infère) ձռւարանի մը վերեւ . այսինքն ծաղիկին փերթերն ու թերթերը փակած են



Քրցում .—*Crocus Sativus L.*

1. Սաղիկը , 2. Սոխարմատը
մէջտեղէն կտրուած :

Ճուարանին : Մաղիկներն ունին երեք փերք, երեք
թերք ամենքն ալ մանիշակագոյն ծիրանի : Երեք
առէները նետաձեւ կլչան ունին . սառորագիր
ճուարանն ունի երեք խորշ բաղմաձուիկ ,
պարզ ծիլը իր վերեւ կը բաժնուի երեք խողո-
վակաձեւ թանձր սոսորդներու որոնք գեղին
նարնջագոյն ծաղիկէն դուրս կը ցցուին :

Սոխ ունի արմատը (bulbeuse) , կը ծաղկի
աշնան 10-30 հարիւրորդամէտր ցողունի մը վե-

ըեւ մէկէն մինչև երեք թիւով . տերեւները , բարակ ու երկայն , արմատէն ուղղակի կը բուսնին ծաղիկներուն հետ միաժամանակ :

Քրքումին գործածուած մասերը սոսորդներն են . աշնան երբ քրքումը կը ծաղկի , հետզհետէ կը ժողովեն բացուած ծաղիկները առաւօտուն , կը զատեն և կ'առնեն թանձր սոսորդները ու կը չորցունեն , և տուփերու մէջ խաւ խաւ կը տարածեն , այդ խաւերը թուղթի թերթերով զատելով : Քրքումը անազէ գոց տուփերու մէջ կը պահեն որպէս զի ուժը չերթայ : Ֆրանսա և Սպանիա կ'արտածեն քրքում . Որլեանի և Կարպանտասի կողմերը կը մշակեն ֆրանսայի մէջ . 153,600 ծաղիկ պէտք է մէկ քիլոյ քրքումի համար :

Քրքումն ունի իր մէջ ցնդողական իւղ մը որու կը պարտի իր բժշկական յատկութիւնները և պոլիգրոյիդ (polychroïde) կոչուած գոյն մը որու մէկ մասը կարող է 100,000 մաս ջուր գունաւորել . քրքումով կը ներկեն ժանեակներ , Շարտրէօզի , Գարիւսի իխիրները , Սիդընհամի լաւդանոմը :

Քրքումը գրգոխէ և դաշտանարեր . կանացի բժշկութեան մէջ կը գործածեն թէյի տեղ 8-10 թել քրքում դնելով մէկ բաժակի համար :

Տղայոց ատամ հանելու ատեն ցաւերը հանդարտեցունելու համար գործածուած Դըլամարի սիրոյ կոչուած գեղին խարիսխը քրքում է . այդ դեղին պարունակութիւնն է . Քրքում 3

գրամ, տամարին (tamarin) 30 գր., մելլը 200
գր., ջուր 100 գր.:

Արեւելքի մէջ քրքումը կը զործածեն իրբե
համեմ և փիլաւի, կարկանդակներու վրայ կը
ցանեն, նոյնպէս կ'անուշահոտեն բնակարան-
ներն ու կերպասները :

* * *

Շատ հին ժամանակներէ քրքումը ծանօթ
էր Արեւելքի մէջ և Փոխգիոյ Տմոլոս լեռը
(այժմեան Պող տաղը) յայտնի էր իր քրքումի
արտադրութեամբ: Խաչակիրները մտցուցին
Եւրոպայի մէջ քրքումի գործածութիւնը:

Հոմերոս Եղիականին մէջ կը յիշէ կրոկոսը,
քրքում, և Աստուածաշունչը երկու տեղ ունի
յիշատակութիւնը քրքումին:

1. Առակաց մէջ Սողոմոն կը զգուշացունէ
չար ու լկաի կիններէն և կը պատմէ անոնց
բարքն ու դաւերը, որոնք կ'ըսեն հմայելու
համար. “Երիզապատ պնդեցի զգահոյս իմ,
պաստառալիր Եղիպտացւովք զարդարեցի. յլրի-
մացան պատրաստեցի զանկողինս իմ, և զտուն
իմ կինամումով իմնկեցի:” Առակ. Ե. 17:

2. Երգ Երգոցի մէջ Հարսը կը նմանցուի
ամէն տեսակ անուշահոտութիւններու ընդ որս
և յրիումի:

“Նարդոս և յրիում, խունկեղէզն և կինա-
մումոն, հանդերձ ամենայն ծառօք Լիբանանու:”
Երգ Երգոց Դ. 14:

* * *

Դը կանդոլլ իր սՄշակուած տունկերու
ծագումը զրքին մէջ կը կարծէ որ ժրվումը
չէ Արարական կրղումն է թղթ carthame,
որ է չայոց կանարակը, Յրանսերէն կեղծ զափ-
րան safran bâtard անուամբ ծանօթ, որովհե-
տե անոր ծաղիկներով կը խարդախեն բուն
քրքումը :

Դը կանդոլլ ժրվում և կրղում բառերու նմա-
նածայնութենէն զատ դիտել կու տայ որ ե-
ղիպտոսի հին մոմիաներուն կապերը բոլորը
կանճրակով ներկուած են :



Կանարակ .— *Carthamus Tinctorius* L.

1. Ծաղիկը, 2. Պտուղը, 3. Պտուղը

Kentrophyllum Lanatum DC. տունկին

որ կանճրակին մօտ է :

Կանճրակ առատօրէն կը բուսնի Վանայ զաւառին մէջ, ուր կը մշակեն իր իւղին համար որ ուտելի է. «Փշարոյս է մշակեալ, որ ունի ծաղիկս նման զաֆրանի և հասկս կազմէ, որոց հատիկներ նման են արևւածաղկի հատին, զորս խաշեն, ծեծեն, կաթ հանեն և պահոց կերակրոց ի պէտս գործածեն» («Մանանայ Սրուանձտեանցի, էջ 447):

Կանճրակը բարդածաղիկ տունկ է մինչև մէկ մէտր բարձրութեամբ, ծայրը փշոտ ու ատամնաւոր տերեւներով: Դլխուն ծաղկեափունջը (capitule) նոյնպէս մանր փշէ պատառ (involucrum) ունի և կը վերջանայ կարմիր մանիշակագոյն մանր թելերով որ ծաղիկներն են: Սպիտակ անկիւնաւոր սերմերը կ'ըլլան կերթութակներուն graines de perroquet, փափաղան եհուի:

Այդ սերմերէն հանուած իւղը յօդացաւի գէմ և իրրե լուծողական գործածուած է:

Կանճրակը ծանօթ է նոյնպէս ասկուր, կը դում անուններով:

Կանճրակի մանիշակագոյն ծաղիկները կարքամին անունով ներկ մը կը պարունակեն, անոնցմով կը ներկեն իւղը, պանիրները. կը պատրաստեն կիներու երեսները օծելու յատուկ շպար:

Շլիմմէր իր Պարսիկ բժշկութեան և Դեղօրէից մասին գրած վիմատիպ գրքին մէջ (էջ 111) կ'ըսէ, «Գարնան, կանճրակի սերմերով կը պատրաստեն շիճուկ, զոր կը խմեն

30—40 օր իրրև արեան մաքրողական։ Ուստի
կը ծեծեն սերմերը և կը դնեն փոքր տոպլրակի
մը մէջ ու կը ճմլեն քանի մը վայրկեան գաղջ
կաթի մէջ, զոր վերջը կ'եռացնեն մինչև որ
բռնէ, այսինքն պանիրի և շիճուկի բաժնուի.
յետոյ ամբողջութիւնը կը մղեն ու մզուած
մասը նորէն կ'եփեն քիչ մը քացախ աւելցու-
նելով, վերջապէս հաւկթի ճերմկուցով կը
զտեն։ Առ հասարակ ասոր համար կը դորձա-
ծեն այծի կաթ ու



ԹԵՂՈՅ

Թեղօշ, մայր փայտ. — Երբ. Որկն. — Անոս
— Pin. — Pinus. — Pinus Pinea L. = P. Sativa Bauh. = Pin pignon, Pin parasol, Թրք.
չամ գլարղզը աղամը :

Պենք. — Picéa. — Pin maritime, Pinus Maritima Poir. = P. Pinaster Soland. = P. Pyrenaica Lap.

Թրք. جام չամ. — Ար. صنوبر սևովրար. —
Պրս. كاج յամ:

Մեր նոր հեղինակները թեղօշը կը շփոթեն
թեղիին և կաղնիին հետ :

Քաջունի, «թեղօշ, շենք ռուրե..» կ'ըսէ :
Հայկաղեան բառարանն ունի .

«Թեղօշ. ացօթալանօս կամ ծօնս, և պեն-
չանօս, ilex, quercus, pineus, abiegnus. Թե-
րեւս աղդ թեղւոյ, մայր փայտ նման ձիթեն-
ւոյ, այլ պտուղն անուտելի՝ հանգոյն վայրինի
ընկուղոյ կամ թղոյ, խէմն առողջարար և
փայտն աղնիւ :

Որով թեղօշ եղաւ անունը հինգ տեսակ ծառի
միանգամայն. սղոցի (ilex), կաղնի (quercus)
մայր (pineus, չամ), եղեւին (abiegnus) և թեղի
(orme, զարա աղամ) :

Մխիթար Աբբայի բառարանը կը գրէ .

«Թեղօշ, դեղնաղոյն ծառ ինչ ուղիղ բարձ-

բացեալ, որոյ տերեւն է երկայն և բարակ, և ոչ է այնքան խիտ, և սորին մեծագոյնն և փոքրագոյնն լինի, ունի զպտուղ հանգոյն ընկուղոյ, բայց է քանակութեամբ յոյժ մեծ քան զնա և ոչ ուտի ի մարդկանէ և զտանի ի լեռինս և փայտն սորին է աղնիւ :”

Թեղօչն է չամ, քին, և Միսիթար Աբբայի բառարանը թէև չղներ համապատասխան օտար բառ, բայց կը նկարագրէ ամբողջութեամբ չամը, մայր փայտը :

Միևնոյն բառագրքին մէջ սարոյ բառին տակ կայ. “Ե ծառ ինչ գեղին փայտիւ, այլով անուամբ կոչեցեալ թեղօչ (Ես. ԽԱ. 19. եզ. ԼԱ. 8. Զաք. ԺԱ. 2. գարձեալ սարոյ կոչի և ծառն զի, Բ Մնաց. Բ. 8. Ես. ԽԴ. 14:” Սարոյն է նոնի (cyprès), զին է արտը (genévrier) :

Բառագրերու այս բացատրութիւններէն կը հետեւի որ պէտք է ի սպառ մէկդի գնել թեղի, կաղնիի, սղոցիի նշանակութեան դաղափարը և ընդունիլ միայն որ թեղօչն է կոնարեր (conifère) ծառ մը նման սարոյի այսինքն նոճի, զիի, մայրի, որոնք միևնոյն կոնարեր, ունային ծառերու տոհմէն են և ցարդ իրենց այլեւայլ տեսակները շփոթուած են իրարու հետ :

Այսպէս, կամարկապցին կը գնէ. “թեղօչ՝ սալի՛, մախր, յամ” (Հայրուսակ, էջ 188): Մախր և յամ կը նշանակեն չամ, մախրն է մայր որ տառաղարձութեամբ եղած է նոյնպէս մարխ, այն է յիրա, չամի ունային կտոր-

ներ գորս կը գործածեն ի լուսաւորութիւն :
Քիշմիշեանց ալ իւր Բուսաբանութեան մէջ կը
դնէ «թեղու» . *pinus sylvestris :*

Հայերէն կայ նոյնպէս փիմի բառը գոր-
ծածուած չամ նշանակութեամբ , «Անովբար ,
փիմի , չամի ծառ , քաջ :—Փիմու պտուղ , հար
սնոպար :» (Զեռազիր Հեքիմարան Փարիզի
թիւ 245 , էջ 147—176) :

* * *

Արգարեւ Աստուածաշունչի երկու հատ-
ուածննուուն մէջ ,ուր յիշուած է քեղօշ , գոր-
ծածուած է չամի , մայր փայտի նշանակու-
թեամբ :

1) Եսայեայ ԽԴ . 14ին մէջ Մարգարէն կը
խօսի կուապաշտներուն մասին և կը ծաղրէ զա-
նոնք ըսելով որ լերան փայտերը կ'առնեն ո-
րոնց կէսը կը գործածեն այրելու , անով կը
տաքնան և իրենց հացը կ'եփեն . իսկ միւս
կէսով իրենց կուռք կը շինեն և կը պաշտեն :

«Զայն փայտ զոր եհասն , զսարոյն կամ
զսօսն , զկաղնին կամ զքեղօշն , զոր անկեաց
Տէր և աճեցոյց անձրեւ զի իցէ մարդկան այ-
ելի , առեալ ի նմանէ այրեաց և ջեռաւ , և ի
կիսոյն արար հաց և զկէսն արար ոլատկեր և
երկիր եպագ նոցա :

2) Բ Մնացորդաց Բ . 8ի մէջ Սողոմոն ու-
զելով շինել Երուսաղէմի Տաճարը՝ մարդ կ'ու-
ղարկէ առ Քիրամ , Տիւրոսի թագաւորին , և կը

խնդրէ անկէ կարող դործաւորներ և Լիբանանի
ընտիր փայտեր տաճարին շինութեան համար :

«Եւ տուր բերել ինձ փայտս մայրս , սա-
րոյս և թեղօշս ի Լիբանանէ . վասն զի ևս զիտեմ
իրեւ գծառայս քո ոչ ոք զիտէ հատանել
փայտ ի Լիբանանէ :»(1)

Եսայեաց ԽԴ . 14.ի մէջ երրայտական բնա-
զիրը կը գնէ չորս անուններ ծառի . արազիմ
[cèdres . Լիբանանու մայրիներ , սարդ] shirqaյ
yeuse . սղոցի] , աղոն [կաղնի] , nrkն [pin ,
չամ] :

Ասորական բնազիրը , որու վրայէն եղաւ
Հայերէն առաջին թարգմանութիւնը , կ'ըսէ
պարզապէս . «Անտառէն [որոյ=կաղնիի ան-
տառ , մէշէլիք] կտրուած փայտը տանը մէջ
զետեղեց , այն որ սնած էր անձրեւով , որպէս
զի մարդը դործածէ զայն վառելու :

Եօթանասունք կը զրեն . «Էշօվէ չնկոն էկ
τοῦ δρυμοῦ , ծ էփύτευσε Κύριος , πίτυν , καὶ նετὸς
էμήχυνεν . «Զայն փայտ զոր ենասն յանտառէն
[կաղնւոյ ծզնչ] , զրեղօշն զոր սնկեաց տէր և
աճեցոյց անձրե . , , այսինքն Եօթանասունք եր-
րայտական բնազրին չորս անուններուն տեղ կը
դնեն միայն πίտυս որ է այժմեան զիտական

1) Մնացորդաց գրքին հնագոյն թարգմանութիւնը
դոր հրատարակեց Խալոթեանց կը գնէ .

«Եւ տացես բերել ինձ փայտս սարոյն , մայր ևւ կտ-
զամախ ի Լիբանան լեռնէ , զի մեք գիտեմք , եթէ տե-
ղեկացեալ են ծառայք քո ընտրել հարկանել իջուշանել
փայտս ի Լիբանան լեռնէ :»

անուամբ *pinus Pinea L.* կոչուած տեսակը և
ընդհանուր առմամբ չամ , մայր , թեղօց :

Յայտնի է թէ այս մասը թարգմանուած է
Յունարէնին վրայէն , որովհետեւ ոչ Երրայա-
կան բնագիրը և ոչ Ասորական թարգմանու-
թիւնն ունին զոր տնկեաց *Skr* հատուածը ինչ-
պէս է Յունարէնը , քանի որ Երրայեցերէն
բնագիրը կը գնէ “[մարդ] կը կարէ մայրիներ
[սարդեր . cèdres] , կ'առնէ սղոցի և կաղնի ,
և կ'ուժովցունէ իրեն համար անտառին ծա-
ռերուն մէջէն , կը անկէ իսկ թեղօշ զոր անձ-
րեւը կ'աճեցունէ ։”

Յունական ուրիշ թարգմանութիւններ ինչ-
պէս Ա.քիլայ , Թէողոսիոն զորս կը յիշէ Որիգէ-
նէսի *Hexaples* , ընդ որս և այն Յունական
օրինակը որ շատ կը մօտենայ *Հայերէն թարգ-
մանութեան* (Variae lectiones e textu edi-
tionis Grabii) , կը յաւելուն միջանկեալ ըլլա-
լով , Յունական բնագրին մէջ “Եօօփ [կտրեց]
բառէն յետոյ հաստֆ նէջօսւ , ու էլաթեն ացու-
թականոն ու ծօն ու էկազտէջաւ հաստֆ այ-
սինքն “[կտրեց] իրեն սարդեր [մայրի] , և ա-
ռաւ սղոցի և կաղնի , և թողուց որ աճի

Կորիւն կ'ըսէ որ թարգմանիչք իրենց հետ-
րերին Աստուածաշունչի Յունարէն ընտիր օրի-
նակներ որոնց վրայ սրբագրեցին իրենց առա-
ջին թարգմանութիւնը :

Այսպիսի սրբագրութեան մը հետքը կը
տեսնուի Եսայեայ այն հատուածին մէջ զոր
թարգմանիչք չհասկցան բոլորովին և փոխա-

նակ չորս տարրեր ծառի անունները դնելու և զանոնք եւ շաղկապով կապելու, զանոնք յիշեցին թէեւ, բայց կամով զատեցին, քանի որ բուն Եօթանասնից բնագիրը միայն մէկ անուն ունէր, թեղօշ. այդպէսով սխալած չեղան :

Եսայեայ այս հատուածին մէջ սարոյ սխալ զրուած է և հաւանաբար զրչագրի սխալ, փոխանակ աւրդի որ է մայրի լիբանանու, որով պէտք է կարդալ ազարդն կամ զսօսն, զկաղնին կամ զթեղօշն : „

* * *

Թեղօշն է երրայիցերէն որեն. աղիք, րէշ և նուն զիրերէն կազմուած, և մեկնիչք առ հասարակ համաձայն են Եօթանասնից, որու կը հետեւի Հայերէնը, անոր չամ, թեղօշ, քն նշանակութեանը :

Եսայեայ խօսքէն կ'երեւի որ որենը մայրին և կաղնիին նման կարեւոր ծառ է զոր նոյն իսկ կը անկեն, թէ վառելու յարմար է և թէ քանդակագործութեան. այս բոլոր յատկութիւնները կը սկատչածին թեղօշն . Հրեայ մեկնիչք մեծ մասամբ կ'ընդունին թէ որենին է Արաբներու սնովրարը յ.ք.ա., այն է թեղօշ, չամ. իսկ ամէնքը համաձայն են որ ան է ծառ մը ինչպէս մայրին, նոնք, այսինքն կոնարեր, որպէս է թեղօշը :

Անդդիական թարգմանութիւնը որեն կը թարգմանէ Ash, հացի, որու հետեւելով Martinի Ֆրանսերէն թարգմանութիւնը կը դնէ frêne :

* * *

Որեն յիշուած է իրրեւ յատուկ անուն Ա. Մնաց . Բ . 25 , և Հայ թարգմանիչք Որենը , աղեք , ուշ , նուն զրերով գրուած , կը կարդան Առան , մինչդեռ Յոյն և Լատին թարգմանութիւնք ունին Արամ՝ Աջակ , Արամ . Հայերէնը կը զանազանէ Առանը Արամէն որ յիշուած է քանի մը տող վեր 23 տունին մէջ և Երրայեցերէն զրուած Աղեք , ուշ և միւն զրերով . Յունարէնն և Լատիներէնն ունին երկու տեղն ալ միեւնոյն անունը Արամ :

Անգղիերէնն ունի Օգոս Ա. Մնաց . Ա . 25ին մէջ և Արամ 23ին մէջ :

* * *

Երկրորդ տեղը ուր յիշուած է թեղօշ , Բ Մնաց . Բ . 8ն է , Սողոմոն իր տաճարին շինութեան համար արհեստաւորներ կ'ուզէ Տիւրոսի թագաւորէն , Խնչպէս նաև Լիբանանի ընտիր փայտերէն զորս կը թուէ , և կը փափաքի որ Քիրամի մարդիկը ընկերանան իր ծառաներուն , որովհետեւ , կ'ըսէ , Լիբանանէն փայտ կտրելու համար քու մարդոցդ հաւասարող չկայ :

Երրայական բնագիրը ունի կրկել [մայրի Լիբանանու] , բրոօշ [սարոյ , նոճ] և աղզումիմ .

Աղզումիմ բառը յոդնակին է աղզում բառին ,

վրան իմ յոդնակիի մասնիկը յաւելցուած , այս-
ինքն ալզումներ :

Աղջում երրայերէն բնաղրին մէջ մէկ ան-
գամ յիշուած է , սակայն մեկնիչք ոմանք կը
նոյնացունեն զայն աղմուզին հետ որ կը յիշուի
Գ թագ . Ժ . 11ի մէջ յոդնակի ձեւով ալ-
մուզին : Մեկնիչք կ'ընդունին թէ աղմուզն է
կարմիր սանտալ , santal rouge . Pterocarpus
Santalinus L. անուշահոտ ծառը որ Հնդկաս-
տանէն կու գայ . աղմուզը Եօթանասունք
թարգմանած են չնկա ու պելեսդժա , Հայերէն վայց
անտաշ :

Բ Մնաց . Բ . 8ին մէջ Սողոմոն կ'ըսէ , «Տուր
բերել ինձ փայտս մայրո , սարոյս և աղջումիմ
ի Լիբանանէ» և կը յաւելու . «վասն դի ես զի-
տեմ իրբեւ զծառայս քո ոչ ոք զիտէ հատա-
նել փայտ ի Լիբանանէ : » Ուրիմն այդ ուղած
փայտերը , ընդ որս աղջումը , կը գանուին Լի-
բանանի մէջ . արդ եթէ ընդունինք որ աղջում
ըսածն է կարմիր սանտալ , չիրնար ըլլալ Լի-
բանանի մէջ :

Մեկնիչք ոմանք կը կարծեն որ աղջումիմը
գրչաղրի սխոլ է , պէտք է ըլլայ որկնիմ , այս-
ինքն չամեր , թեղօշներ :

Ու այդովէս ալ հասկցած են Եօթանասունք
որ կը դնեն աղջումիմի տեղ ու պահանը
ու պահանը պառին . ու պահանը է չամի տեսակ մը
որմէ կը հանեն չիրա , մարիս , վառելու համար .
զիտական անուանքը կը կոչուի Pin maritime
և առափորէն կը դառնուի Իշխանաց Կղզինե-
րուն մէջ ի Մարմարա :

Նոյն ուսումնական պենքի բառը կը գտնենք Գ. Թագ.
Զ. 32, ուր թարգմանուած է մայր, չնչաց առաջնաւոն ի վայցից մայրից :

Հայ թարգմանիչք կը հետեւին Եօթանասնից և կը թարգմանեն Թեղոց, չամ, որ արդարեւ Լիբանանի պատուական ծառերէն մին է մայրիին [cèdre] և նոճին հետ :

Պէտք է նկատել որ Հայ թարգմանութիւնը կը պահէ իւր անկախութիւնն այս հատուածին մէջ և կը հակինք խորհելու որ թարգմանչաց մէջ Երբայցերէնի ծանօթութիւն ունեցողներ կային :

Երբ Յունարէնը այս հատուածին մէջ անձօս, մայրի, ազւութօս, դի, և ուսումնական կը թարգմանէ Երբայշական երկզ, [մայրի], բրոց [նոճ, սարոյ] և աղջումիմ, Հայ թարգմանիչք կ'ընդունին վերջինին համար Եօթանասնից հասկցած խմատը և մերժելով զին, բրոցը կը թարգմանեն ճիշդ, ասոյ որ է նոճ :

Այս կէտին մէջ չեն հետեւիր իսկ Ասորական թարգմանութեան, եթէ այդպէս կարելի բլայ ենթադրել, քանզի Ասորերէնը կը դնէ, ս'կրզոյ վաղ՝ կատրուկի, վաղ՝ ըշկորոյ:

Երզոյն է ինչպէս Երբայցերէն, նոյնպէս Ասորերէն մայրի, cèdre, կատրուկ, Վալտոն կը թարգմանէ չամ, pin, իսկ Brun, նոճ. Ըշկորոյ զոր Glaser (Skizze der geographie des Arabens 2. 358, 364) կը թարգմանէ styrax, այիւրակ, մինչզեռ մեծ մասը հեղինակներուն զորս կը յիշէ Buhl կը թարգմանեն կարմիր

սանտալի փայտ : Ասորիերէն ըշկորոյք բառը Brun կը թարգմանէ ակալիիա կամ souaիս, իսկ Վալտոնն ըշկորոյի փոխարէն ունի ligna abiegn , եղիւինի փայտ :

Վուլգատան ունի այդ հատուածին մէջ ligna cedrina, Arceuthina et pinea Յունարէնին պէս : Ֆրանսերէն երեք զլիսաւոր թարգմանութիւնները կը գնեն . cèdre, sapin et pin (de Saci). —cèdre, sapin, algummin (Martin), — cèdre, cyprès, sandal (Segond) :

* * *


Թեղօշը կը պատկանի մերկասերժ տունկերու մէջ կոնարերներու տոհմին , ինչպէս է գին , նոճը , եղեւինը , և ուեսնային ծառ է . Թեղօշին թեփերը , որոնք կը պաշտպանեն սերմերը , իրենց վրայ ցցուած մաս մը ունին . տերեւները՝ որոնք շատ յատկանշական են , կը նմանին երկայն ասեղներու , որոնք առ հասարակ զոյդ , երբեմն , ըստ տեսակին , մինչև 5 թիւով , կ'ելնեն բարակ պատեանէ մը :

Թեղօշը միաբնակ ծառ է , որձ և էդ ծաղիկները կը դանուին առանձինն միեւնոյն ծափին վրայ , որձ ծաղիկները որոնք դարնան կը կազմեն գեղին խուրձեր կամ՝ ողկոյզներ ոստերու ծայրը , երբեմն այնքան առատօրէն՝ որ ծծումբի անձրեւներ կը կազմեն տարածուելով օդին մէջ :

Էդ ծաղիկները մէկ մէկ երկայնաձև գունտեր կը շինեն ճիւղերու անութը , այս կոները

(cône, strobile) երկու, երեք տարիէն կը հասուննան, ինչպէս են պտուղները Pin parasol, *Pinus Pinea L.* տեսակին, Յունական ուրուց որ զոլսոյ մէջ ծանօթ է վրարը աղամը անուամբ և չնորհալից խումբեր կը կազմէ վոսփորի բարձունքը հովանոցի ձևով. այս տեսակին պտուղը կ'ուտուի և կը դնեն կերակրոյ մէջ, չամ վրարը:

Թեղոշի այս տեսակը շատ կայ Սուրբոյ մէջ ուր առատօրէն կայ մանաւանդ Հալկայի թեղօշ



Թեղօշ.—*Pinus Sylvestris L.*

(*Pin d'Alep*, *Pinus Halepensis Miller*) ըսուած տեսակը և կը տարածուի ծովեղերքը փոխարէն ծովային թեղօշին (*pin maritime*. *P. maritima Poir.*=*P. Pinaster Soland*) որ առա-

տօրէն կը դանուի Միջերկրականի արեւմտեան եղերքը, նոյն իսկ զոլիս իշխանաց կղզիներուն մէջ :

Հալէպի թեղօչը բարակ և ճկուն տերեւներ ունի, կոները աւելի երկար, սրածայր են և կարծ կանթ (pédoncule) մ'ունին, սերմերն են փոքր (7 հազարորդամիլիտր), իրենցմէ 4 անգամ աւելի մեծ թեւերով :

Լիբանանի բարձրաւանդակներուն վրայ կ'աճի թեղօչի P. Brutia Tenore ըսուած տեսակը որ կարծր, հաստ տերեւներ ունի և ցըռուած, անկոթ (sessile) կոներ :

Թեղօչները շատ յարգի են, կ'ունենան մինչեւ 50 մէտր բարձրութիւն. անոնցմէ կը շինեն նաև կու կայմերը և լաւ կարասիներ :

Կու տան տեսակ տեսակ սետիններ, բեւկն (térehenthine) խայծղան, կոլոխան :

Անոնց որոնք փափուկ կուրծք և թոքեր ունին, թեղօչներու մօտ բնակութիւնն առողջարար է : Վայրի թեղօչի (pin Sylvestre) ծիլերը (bourgeon) կը խաչեն (décocation) կամ թէյի պէս կը ողատրաստեն (infusion) 20 առ 1,000 համեմատութեամբ և կը խմնն իրքեւ միզարեր և թոքերը կաղզուրով : Վայրի թեղօչն տերեւներէն կը հանեն նոյնպէս տեսակ մը բուրդ տերեւներուն խաչած ջուրը կը զործածուի լուզանք յօղացաւներու համար :



ԸՆԿՈՒԶԻ

Բնելուզի. — Երբ. Եղող. — Հազնա. — Լտ.
Juglans (Jovis glans), nux.— Juglans Regia L.— Noyer.— Ասորերէն կուզա. Թրք. جوز آکیلیق.— Ար. كوز կیلیق.— Պրս. درخت کرد و դو պیرախը ի գրդու :

Բարձր ու հաստ ծառ է բնկուզենին, տառածուած ձիւղերով : Տերեւները 5—9 անգոյք թիւով լերկ, ողորկ, փայլուն տերեւիկներէ կազմուած են և ունին երկայն կոթ : Միաբնակ է, ործ ծաղիկները երկայն խրացներ կը կազմեն կանաչ . 14—36 առկշնիւր կ'ունենան, ծիւշենին կարա, կիշանիները դուրս բացուող . էպ ծաղիկները, թիւով 1—4, չորս թիւով ծայրադիր բողբոջի մը մէջ կը դանուին . Երկու շայն սոսորդ (stigmate) ունին դուրս ծուած . պառաղն է կանաչ կլոր, վրան մսոս կանպով (broou) որուն դուրսը կանաչ, ներսը ճերմակ է : Ծնկուզը փայտային պատեան ունի երկու փեղկով, երեսը խորշոմաւոր, մէջի նուշը 4 պճեղ ունի :

Ծնկուզին կարծր փայտը կը զործածուի կարասիներու չինութեան, կճեպէն կը հանեն ներկ կարասիներուն ընկուզիի զոյն տալու համար . ընկուզին իւղը կ'ուտեն շատ տեղ ձէթի տեղ ու նկարիչները կը զործածեն զայն իրքե չորցունող (siccative) :

Ընկուղիին այլեայլ մասերը կը պարունակեն պնդիչ և կապող (astringent) գոյացութիւններ, աղաղ (tannin), ու ասոր համար կը գործածուին բժշկութեան մէջ, տերեւները թէյի պէս կը պատրաստեն (infusion 20 առ 100) և կը խմեն իրրե կաղղուրող ստամոքսի (sto-



Ընկուղի . — *Juglans Regia* L.

1. Արձ ծաղիկ . 2. էղ ծաղիկ .

machique), և վատոյժ տղայոց ուժովցնող . տերեւներու խաշած ջուրը ^{*}(décoction 50 առ 1000) լաւ է լուացքի, կանանց հիւանդութիւններու համար . ընկուղի կճեպը օղիի մէջ կը ձգեն ժամանակ մը և անով կը պատրաստեն ըմպելիք մը , бrou de noix, որ ախորժակ կը բանայ և ստամոքսի աղեկ է :

Ընկուզի գործածուած է Ծն. I. 37, Երգ
Երգոց Զ. 10, Երեմ. Ա. 12.—Ընկոյդ Ծն. ԽԳ.
11, Ել. ԻԵ. 33:

1). «Եւ առ Յակոբ դաւազան շեր դալար և
ընկուզի և սօսոյ, Ծն. I. 37. այս տեղ Եր-
րայերէնը կը գործածէ լուզ բառը զոր Եօթա-
նասունք կը թարգմանեն հաջունոյ և անկէ Հա-
յերէն ընկուզի. մեկնիչք լուզը կը նկատեն նշի
և այդպէս թարգմանուած է Վուլգատային մէջ
amygdalinas: յակ լավզ արարերէն կը նշանա-
կէ նշի:

Լուզա գործածուած է իրրեւ քաղաքի ա-
նուն. «Եւ բանակեցան տունն Խորայէլի ի Բե-
թէլ. և անուն քաղաքին էր յառաջ Լուզա:»
Դատ. Ա. 23: «Եւ եկն Յակոբ ի Լուզ, որ է
յերկրին Քանանացւոց, այն ինքն է Բեթէլ:»
Ծն. ԵԵ. 6:

2) «Ի պարտէզս ընկուզեացն ելի հայել յար-
դիւնս վտակացն, տեսանել թէ ծաղկեա՞լ իցէ
որթ, թէ ծաղկեա՞լ իցէ նոճ, թէ ծաղկեա՞լ
իցէն նոնենիք:» Երգ Երգոց Զ. 10:

Այս տեղ Երրայերէն բնագիրն (Զ. 11)
ունի Եզրակ որ է բուն իսկ ընկուզը և նոյնպէս
ալ ընդունած են բոլոր թարգմանութիւնք:

3) «Եւ եղեւ բան Տեառն առ իս և առէ,
Զի՞նչ տեսանես, Երեմիա. Եւ ասեմ, դաւա-
զան ընկուզի [շակիդ] տեսանեմ ես: Եւ ասէ
ցիս Տէր, բարւոք տեսանես. զի զարքուցեալ
[շոկիդ] եմ ես ի բանս իմ առնել զնոսա:»
Երեմ. Ա. 11-12:

Առյն հատուածին Երրայերէն բառն է շա-

կեղ. Այդ բառով Երբայական բնագիրը բառախաղ մը կը ներկայացունէ :

Շակելին է նշի և այնպէս ալ թարգմանած են Եօթանասունք, որոնցմէ Հայք ևս ժող. ԺԲ. 5ի մէջ «ծաղկեսցի նշին» Երեմ. Ա. 11ի մէջ Եօթանասունք սխալած են շակելիի փոխարէն ազնա ընկուղի գնելով :

Շակեղ բառին նախնական իմաստն է արթուն մնալ, հսկել, և նշենին այսպէս կը կոչուի անոր համար որ կանուխ կը ծաղկի և առաջին ծառն է որ ձմրան քունէն կ'արթննայ :

Հետեւեալ տունին մէջ (Ա. 12) մէջ կայ Շոկիդ բառը, զարդուցեալ. Թէոդոսիոն կը գնէ ձևացալնոց, նշի, և չփորձեր բառախաղը ցոյց տալ. նոյնը կ'ընէ Անգղիական թարգմանութիւնը. I see a rod of an “almond-tree”... — I will “hasten,” my word to perform it.

Ընդհակառակը Ալիլա և Սիւմմակոս կը ջանան իմաստը տալ և կը դնեն արքուն զաւագաններ : Վուլգատան կը հետեւի այս վերջիններուն և կը զրէ . — Virgam vigilantum ego video [արքուն զաւագան ես տեսի]... — Bene vidisti quia vigilabo ego super verbo meo ut faciam illud [բարւոք տեսար, քանզի արքուն պիտի հսկեմ ես խօսքիս վրայ որպէս զի կատարեմ զայն:]

Եւ Հերոնիմոս, Վուլգատայի թարգմանողը, կը ծանօթագրէ .

“Ալիլայ և Սիւմմակոս արքուն զաւագան, Թէոդոսիոն ճշգութեամբ նշի կը թարգմանեն :


Եւ աւելի վարը կը գրէ. «ՇԱԿԻԴ, ընդուզ կ'ը-
սեն. նոյնպէս արթնութիւն, արթուն՝ ՇՈԿԻԴ»:

Դարձեալ Շակի բառն է որ գործածուած է
ՄՆ. ԽԴ. 11. ԵԼ. ԽԵ. 33. Հայերէն Աստուա-
ծաշունչը նորէն Եօթանասնից հետեւելով՝ կը դնէ
ընկոյզ և ընկուզազարդ փոխանակ նուշի:

* * *

Նէեմիի Ասորական թարգմանութիւնը (Ը. 5) կուզա, ընկուզի կը դնէ Երրայական ըն շե-
մկնի փոխարէն որ է ծառ իւղոյ:

Եօթանասունք կը դնեն չուպաջուսոց, նոճ.
իսկ Հայերէնն ունի Սոսեաց որ հաւանաբար
պիտի լինի նոմեաց, իբրեւ թարգմանութիւն
Յունարէնին:



ՍԱՐՈՅ, ՆՈՅ

Սարոյ, Նոյ .— Երբ . Բըրոշ, Բըրոք . ԽՎ-
ԱՌՈՏՏՈԾ .— Ասոր . Շարուկնոյ, Բըրութոյ .—
Լոտ . Cupressus .— Cyprès . Cupressus Sem-
pervirens L.— Թրք . Սկրվի .— Պրա . Յա-
Մկրու :

Սարոյի մասին հեղինակները բացարձակա-
պէս անորոշ են :

Քաջունի , շիտակ բան մը ըսած չըլլալու
համար , կը գրէ . «Սարոյ . Platane» :

Ալիշան սարէն ձորէն ստուգաբանութիւն մը
մէջ կը բերէ . «Հաւանօրէն ի սարերն գանուե-
լուն համար այսպէս կոչուած վայրի ծառ ,
տեսակը որոշել դժուար է , որովհետեւ թէպէտ
Ս . Գրոց մէջ շատ անգամ յիշուած է՝ բայց
Հայ թարգմանիչն Յ . բնագրին մէկ բառի տեղ՝
քանի մը անուն դնէ , թուի թէ չկարենալով
որոշել յատուկը՝ նմաններն այլ յիշէ : »

Ո՞չ , Ա . Գրոց աննման թարգմանիչները
շատ աղէկ զիտեն . մնաք ենք որ պէտք եղած
հոգն ու խնամքը չենք տուած անոնց հետե-
ւած շափիղը հետազոտելու և զնետ դնալու ,
անոնց գործերն իմանալու համար՝ աղքիւրնե-
րուն դիմելու :

Հայկաղեան Բառագիրքը կ'ըսէ . «Սարոյ .
թեղօշ ծառ , եւս և գի և սարդ , (որպէս ծառ
լեռնային՝ ի բառէս սար , և կամ սարը , այս-
ինքն դեղին , որպիսի է փայտն թեղօշի .) Ի

Յն . այլեւայլ բառք են , որպէս կիպարիս .
“Սարդ և սարոյ և նոճ .” Եզեկ . լլ . 8 , Յն . մի
բառ՝ չսովորածոց . կամ “Ետճ և օօս , սարդ և
սարոյ , և կաղամախ և գի .” Ես . լլ . 19 . Յն .
Երկու բառք են կիպարիս և լեւկէ : կամ որ-
պէս ունչ , բինս . “Ողբացեն սարոյք զի մայրք
զլորեցան :” “Զաարոյն կամ զսոսն , զկաղնին
կամ զթեղօչն :” Զքր . ժԱ . 2 , Ես . ԽԴ . 14 : կամ
որպէս ձօքեսնինու “Փայտս մայրս և սարոյս
և թեղօչս ի Լիբանանէ :” Բ . Մն . Բ . 8 :

Հայկաղեան բառագրքի հեղինակները այս
տողերուն մէջ կը նշմարեն պահ մը լոյսը . ճշշ-
մարտութիւնը , երբ կը զրեն Յուն . մի բառ
չսովորվ կը մանեն դարձեալ խաւարին մէջ ,
քանզի կը յամառին իրենց առջև ունենալ
միայն Աստուածաշունչի Յունարէն թարգմա-
նութիւնը , վերծանելու համար Հայերէնը :

Որչա՞փ գեղեցիկ ու նոր բաներ պիտի տես-
նէին այդ հեղինակները , ի՞նչ զաղտնիքներ
պիտի փսփսային իրենց այդ լոիկ մատեանները
եթէ միայն յիշէին Կորիւնի խօսքը որ կը
յայտնէ թէ Աստուածաշունչը արդէն Հայերէնի
թարգմանուած էր շատոնց Ասորերէնի վրայ .
բայց անկատար էր այդ զործը , ու ատոր հա-
մար նորէն թարգմանեցին , կամ որբագրեցին
Ասորականէ թարգմանութիւնը Յունարէնին
վրայէն :

Այդ առաջին թարգմանութեան մնացորդ-
ներն են սարդը , սարոյն : Ու Աստուածաշունչի

Ասորերէն թարգմանութիւնն հետ համեմատութիւնն է որ կու տայ ատոր բանալին :

Ու մարդ յուզմամբ կը դիտէ կարծես երբ թարգմանիչք կը գառնան Բիւղանդիոնէն իրենց հետ բերելով “Ճշմարիտ օրինակներ” և քիչ մըն ալ յունական ինքնավստահ դիտութեամբ տոգորուն , ու հոն կը գանեն ասորագէտներ որպէս Սուրբն Սահակ : Դուամ մըն է գոգցես որ կը կատարուի այդ երկու խումբերուն միջն երբ կը տեսնեն մէկ կողմէն Ասորականին , միւս կողմէն յունական այլևայլ թարգմանութեանց իրարմէ ունեցած զանազանութիւնները և միայն Մարտոյ բառին ուսումնասիրութիւնը բաւական է ատոր .

Առնենք Եղեկ . I. II. . 8 հատուածը . հոտ անշուշտ ասորական առաջին թարգմանութիւնն ունէր երգի , սարուայնէ կամ շարուայնէ , դուրքի , որմէ թարգմանած էին Սարդն և սարոյն և սոսոյք , համաձայն Երրայտականին որ ունի արագիմ [սարդեր , շեցր] բրուշիմ [սարոյներ , նոճեր] , արևոնիմ [սօսիներ] . սակայն յունական օրինակներուն մէջ ուրիշ բաներ գրուած են , հոն կայ շուպարտոս [նոճ] , պիւս [մայր , չամ] , Էլատի [եղեւին] , ու կախ մըն է ծայր կու տայ երկու խումբերուն մէջ , բայց վերջապէս Հայկական խոհեմութիւնը կը յաղթանակէ ու երկու կողմերն ալ գոհացում կը դանեն հին բնագրին վրայ աւելցունելով ըստ յունականին նո՞ւ և մայրքն բառերը :

Նոյնպէս ես . Խ. . 19ին մէջ . Ասորականն

ունէր երգի [սարդեր], կշիռրի, օսօ [մուրտ] զայս եղ մեշիոյ [իւղի ծառ], սարուայնէ հեղիրէ [բարձր սարոյ], մինչդեռ յունական թարգմանութիւնը կը դնէր. քեծօս [մայրի], ովնօս [տօսախ], մարտնի [մուրտ], ասուածոս [նոճ], լեսկոյ [կաղամախ]. իրար խառնեցին երկուքը և եղաւ “զմայրն և զտօսախն, զմուրտն և զնոծն և զսօսն, զսարդն և զսարոյն և զկաղամախն, զգին և զփայտն իւղոյ ։ Ես. Ի՞Դ. 14ին մէջ խնդիրը շատ տարրեր կը ներկայանայ և տարակոյսն ու շփոթութիւնը կը պատեն ամենքը. մէկ կողմէն Ասորական բնագիրը որեւիցէ ծառի անուն չտար, միւս կողմէ եօթանամնից բնագիրը կը դնէ մէկ անուն ծառի, ուժուածութեղոց. մինչդեռ Յունական քանի մը օրինակներ չորս ծառի անուն ունին ինչպէս Երրայերէնը, քեծօս [սարդ], և ձգութանուոչ [սղոցի] և ծզնէ [կաղնի], և ուժուածութեղոց [թեղոց], խսկոյն իրենք ալ չորս ծառի անուններ կը դնեն, բայց կամով կը զատեն, ահա Հայու խորամանկութիւնը (տես էջ 58 և 84):



Սարոյն է նոճ, և 1906ին “Տունկերը” և անոնց Հայերէն անունները, տետրակիս մէջ կը զրէի. “սարոյ բառը շատ տեղ յիշուած է Ա. Գրոց մէջ, թէև այդ բառի մասին հետազոտութիւններս անբաւական են վերջնապէս որոշելու, այլ կը կարծեմ որ սկրվի (cyprèς) է . . . , ու նոյն ատեն այդ բառի մասին կարծիքը կը

ինդրէի մեծահմուտ բարեկամիս Տոքթ. Յ. Թիրեաքեան իսանի որ Հայոցս մէջ հեղինակութիւն է Արեւելեան լեզուաց, Պարսկերէնի, Զէնտի, Փէհլէվիի մասին:

Տօքթ. Յ. Թիրեաքեան կը պատասխանէր ինձ (Asnières, 15 Հոկտ. 1906).

“Սարոյ բառը կարեւոր է ճշգել թէ իսկ և իսկ պարսկին Յշ սկրուն է որ միշտ Ճյա Յշ սկրու ազատ գործածուած է և ես շատոնց նոյնացուցած եմ մեր “Ճերբազատ”ին հետ որ միշտ սխալ հասկցուած և սխալ գործածուած է: Եթէ՝ ինչպէս ստուգած էք սարոյն սորես է, ինդիրը լուծուած է և սա փաստ մը ևս կու տայ յաւելու իմ այս կարգի զննութեանս մէջ ըսածներուս և ըսելիքներուս:”

Տ. Նորայր Բիւզանդացի կը գրէր ինձ (Վենետիկ, 12 Յուլիս 1906). “զ”Սարոյն կը կարծէք Սկրովի. կարելի է. պարսկերէն Սկրով, Սկրուն է սորես, որով և “Սարոյն” սորես, կամ ծառ նման սորեսին:

Անկէ ի վեր փաստերն ու ապացոյցները հետզհետէ եկան դիզուեցան համոզելու զիս կարծիքիս մէջ թէ Սարոյն սէրվի Յշ է զոր պարսիկը կը կարգայ սկրու:

*
* *

Թէև Սարոյն Աստուածաշունչին մէջ քանիցս յիշուած է, բայց, ինչպէս կ'ըսէ Ալիշան, “Հայ թարգմանիչն յունարէն բնագրի մէկ բառին տեղ քանի մը անուն դնէ:” Ուստի

փնտռեցի Ս. Գրքին մէջ հատուած մը ուր
Սարոյ առանձին գործածուած ըլլար , և գտայ .
Զաք . ԺԱ . 2 .

«Ողբասցեն Սարոյ , զի մայրք զլորեցան : »
Անմիջապէս համեմատեցի Յունարէնին հետ ,
բայց ի՞նչ յուսախարութիւն . Յունարէնն ու-
նէր ուժուած , չամ , քոն . կը մնար ինձ վերջին
ապաւէն մը , դիմել Ասորական բնագրին , քանի
որ անիկա ծառայած էր առաջին անգամ Հա-
յերէն թարգմանութեան : Ու արդարեւ Ասո-
րերէնը կը դնէր . «Նեյլիլ [թող ողբայ] սարու-
կենոյ , մերուլ [քանզի] դենֆիլ [ինկաւ] երզոյ
[մայրին] : »

Ասորերէնը կը գործածէր սարուկենոյ կամ
շարուկենոյ , որու սարոյ բառին հետ նոյնու-
թեանը տարակոյս չկայ :

Արդ , շարուկենոյն է նոճի , cyprès , ուսու-
զուսու , նոյն ընդ սերվի , սերու :



Սարոյ շատ հին Ռւբարտական բառ է ,
Վանեան և Ասորեստանեան բեւեռագիր արձա-
նագրութիւններուն մէջ յիշատակուած , և պէտք
է կարդացուի սարու , քանի որ հին Ռւբար-
տական բառերու մէջ , ինչպէս կը հաստատէ
Փառնակ , ոյ կը կարդացուի ու . այդ հնչման
կիրարկութիւնը կը տեսնենք թէ՛ ժողովրդեան
և թէ՛ զրական լեզուին մէջ , լոյս , զոր ժողո-
վուրդը կը հնչէ լուս , սեսական կ'ըլլայ լուսոյ
fnj=քու , fnjr=քուր . Աստուծոյ սիրոյն , կը
հնչենք Աստուծու սիրուն :

“Սարոյ բառը սեմական ծագում չունի ,
Բարելացիք և Ասորեստանցիք Վանեան ժո-
ղովուրդներէն անշուշտ առին այս բառը որու
պարզագոյն ձեւն է Սարոյ և անոր սեմական
դրոշմ տալու համար աւելցուցին նոյ կամ նու
վերջաւորութիւնը : Արդի ոյ հնչման մէջ ծած-
կուած ուն Ասորեստանեայց մէջ կարծրանա-
լով (Se solidifier) տուած է մ:” (L'Abbé E.
Tisserant. Notes manuscrites envoyées à
l'auteur) : Սոյն երեւոյթը կը տեսնենք նոյն-
պէս , օրինակի համար , բարձունեակ կամ
բարձւանեակ բառին մէջ , արմoise նշանա-
կութեամբ :

Հին բեւեաագիր արձանագրութիւններուն
մէջ , ինչպէս է ցարդ Զինական լեզուին մէջ ,
բառերը կը ներկայացուէին մէկ կամ աւելի
նշաններով , որոնք կը կոչուին իծեogramme ,
զաղախարանշան . այսպէս նոնը կը ներկայաց-
ուէր ՇՈՒՐ , ՄԱՆ SUR , MAN , երկու զաղափա-
րանշաններով , զոր կը զրէին Շուրման , բայց
կը կարդային Շուրուկնու :

ԱԵՆՔԵՐԻՄԻ արձանագրութեանց մէջ յա-
ճախ յիշուած է Շուրմանու . Ների—Եռւնուսի
(Նինուէ) ցուլի մը արձանագրութիւնը կ'ըսէ .
[Rawlinson. Cuneiform Inscriptions of
Western Asia, T. III. pl. 12].

“Պալատներ սոկիէ , արծաթէ ... իւ կրնիէ
(սարգ , cedre) , իւ Շուրման [նոճ] Բուրաշուէ
[Երրայական բրոջն է = նոճ] , իւ ը—լամ—մա—
կու է ... շնեցի .”

Ուրիշ տեղ , “գերաններ (իւ կր-նի) սարդի ,

(իս Շուր-ման) նոճի , որու հոտը անուշ է , արտադրութիւնը Համադիմի և Սերարայի լեռներուն որոնց կատարները փայլուն են , տարածեցի (գաւիթի մը վերեւ) :

Շուր-մանի կամ Շուր-ուկենի փայտէ՝ զուռներ կը շինէին (Zeitschrift für Assyrologie II. 268):

* * *

Միեւնոյն բառը տուած է զարձեալ Ասորեքն շորբինոյ , Քաղդէերէն շլորան , զոր կտանենք Արաբերէնի մէջ ոչ շշերին ձեւով Գաղիանոսի բառերուն մէջ (ձեռագիր Փարիզի , թիւ 302) կայ . կիպարիս . սարուկն . այս ձեւ և վերջաւորութեամբ կը դանենք Մնացորդաց զրքին «Հնագոյն Թարգմանութեան» մէջ զոր հրատարակեց Խալաթեանց . «Եւ տացի բերել ինձ փայտս սարոյն , մայր և կաղամախ Բ Մն . Բ . 8 :

Ազաթանգեղոսի ակասն Յարութեան Մեռելոց ճառի մէկ ընտիր ձեռագիր օրինակ մէջ , զոր կը յիշէ Ալիշան (յառաջարան «Հարուսակին» , էջ Զ վերջընթեր տող) զրուած սարուն փոխանակ սարոյնի :

* * *

Սարոյ զործածուած է Աստուածաշունց մէջ Զաք . ԺԱ. 2 . , Եղեկ . ԼԱ. 8 , Ես . ԽԴ 14 , Ես . ԽԱ. 19 , Բ Մն . Բ . 8 :

1) Աղբասցեն սարոյի, զի մայրք զլորեցան :
Զաք. ԺԱ. 2 :

Երբայերէնն է բըռօշ, նոճ . Եօթանասունք
սխալ հասկցած են և կը դնեն ուրուց, թե-
զոչ, չամ . Հայերէնը ուղիղ է ինչպէս Ասորե-
րէնը որ ունի սարուենոյ . Վուլգատան որ կը
հետեւի առ հասարակ Ակիլայի թարգմանու-
թեան՝ բըռոշը կը թարգմանէ abies, եղեւին,
Ակիլայի էլատին, և Անգղիական թարգմանու-
թիւնը կը հետեւի միշտ այս մասին վուլգա-
տային և կը դնէ fir-tree, եղեւին, փոխանակ
երբայական բըռոշին :

2) «Սարդն և սարոյն և նոճ ի դրախտին
Աստուծոյ ոչ հաւասարեցին շառաւիղաց նորա,
մայրքն և սօսոյք ոչ նմանեցին ոստոց նորա :»
Եզեկ. ԼԱ. 8 :

Երբայերէնն է արակիմ [սարդեր], բըռոշիմ
[սարոյներ], արևոնիմ [սօսոյք], նոյնը կը դնէ
Ասորերէնը . երգէ, շարուայնէ, դուլքէ, Յու-
նարէնը կը տարբերի, քանզի ունի . չսպազու-
սուս [նոճ], ուրուց [մայր], էլատի [եղեւին] :

Հայերէնի մէջ սարոյ և նոճ կրկնութիւն են ,
առաջինը Ասորական Շարուայնէին փոխարէն
զրուած, նոնք Յունական չսպազուսին տեղ,
մայրքն ալ Յունականին ուրուցն ու էլատին կը
ներկայացունէ : Վուլգատան դարձեալ ունի
abies. Անգղը fir-tree :

3) «Եւ բղիսեցուցից յանջուր երկրին զմայրն
և զտօսախն, զմուրտն և զնոճն և զօսն,
զսարդն և զարոյն և զկաղամախն, զգին և
զփայտն իւղոյ :» Ես. ԽԱ. 19 :

Երրայական բնագիրը կը գրէ . «Պիտի տընկեմ ամայութեան մէջ երկղ [մայրի, սարդ], շիտայ [ակասիա, անփուտ փայտ], հաղաս [մուրտ], և ըձ շկւին [իւղի ծառ]. պիտի դնեմ անապատին մէջ բըոօշ [սարոյ], տիղյար [թեղի] և տա աշուր [տօսախ]:

Ասորերէնը Երրայականին եօթը անուններուն տեղ ունի. երզի [սարդեր] էշլորրէ [ակասիա], օսօ [մուրտ] զայտոյ եղ մեշիոյ [իւղի ծառ], շարուայնի հեղիրէ [բարձր սարոյ]:

Եօթանասնից Յունարէնն ունի քէջօօ [մայր], ովչօս [տօսախ], սսօսնոյ [մուրտ], չստարօտօսօս [նոճ], լենչոյ [կաղամախ]. Յունարէնին այս հինգ անունները կը գտնուին Հայերէնին մէջ կարդաւ, ի բաց առեալ կաղամախէն որ բաժնուած է առաջիններէն զօսն, զարդն և զարոյն բառերով որ զգին և զիայտն իւղոյին հետ Ասորականէ թարգմանութեան մնացորդները կը լիւեցունեն. զգին եւ զիայտն իւղոյ Երրայականին ըձ շկւինն է (տես Էջ 62—63):

Grabiusի տպագրած օրինակը իրրեւ տարրերութիւն կ'աւելցունէ Յունարէն բնագրին վրայ ուն Միտու և Եղանական Ազատական Ազատական Վերջին անունները Ակիլայ կը թարգմանէ Էլատոյ [եղեւին], պտելեա [թեղի], ովչօս [տօսախ], Սիւմմաքոս, չստարօտօսօս, պտելեա, ովչօս :

Աղաթանակեղոս [Տպագր. Վենետիկի, 1862 Էջ 480] «վասն յարութեան մեռելոց» ճառին մէջ կու տայ ծառի անուններ որ Եսայեայ սոյն

հատուածը կը յիշեցունեն . . . , որպէս մայրն
և նոճն և շոճն և թեղոչն և սարդն և սարոյն
և սօսն և յակրին և գին և կաղամախն և տօ-
սախն :

4) «Եւ տուր բերել ինձ փայտս մայրս ,
սարոյս և թեղօչս ի Լիբանանէ : , Բ Սնաց .
Բ . 8 :

Երրայերէնն ունի . երեկ [մայրի] , բլոց
[սարոյ] , ալգումիմ : Ասորերէնն է երզկ , կա-
րուկի , կշկորրոյ , իսկ Յունարէնը կը դնէ սա-
րոյի փոխարէն ձօքեսնթօչ , զի (տես էջ 88—90) :

Այս չորս հատուածներուն մէջ ալ սարոյ
թարգմանուած է միշտ Երրայական բլոցը որ
է նոճ :

5) Զայն փայտ զոր եհատն , զարոյն կամ
զսոսն , զկաղնին կամ զթեղօչն : , Ես . ԽԴ . 14 :

Այս տեղ զարոյն կը պատասխանէ Երրա-
յական արագիւմին [սարդեր] ու սարոյն զրչա-
գրի սիսալ է և պիտի լինի զարդն :

* *

Սաղ . ձ՛Պ . (ձ՛Պ .) 16—17 . «Յազեսցին
ծառքն Տեառն , և մայրքն Լիբանանու զորս
զու անկեցեր :

Անդ թոշունք երկնից ձագս հանցեն և բոյն
արագլի ապաւին է նոցա : , Հոս Երրայերէնն
ունի բլոռշիմ [նոճեր] բառը զոր Եօթանասունք
սիսալ հասկցած են տօն էջածուն ի օնքիա իշշեւա
անրան և Հայք անկէ ուղղակի թարգմանած .

նոյն սխալը կ'ընէ վուլգատան, Herodii dominus dux est eorum [տուն արագիլ առաջնորդ է նոցա]: Պէտք է ըլլայ. «Արագիլ տուն են սարոյի:» Ասորերէնէ հնագոյն թարգմանութիւնը հաւանաբար ուղիղ էր և անշուշտ սարոյ բառը ունէր, քանզի Դանիէլ վարդապետն Ասորի, իր Սաղմոսի մեկնութեան մէջ, ձ՛դ. Սաղմոսին առթիւ կը զրէ. «Սարոյն՝ բնութեամբ անուշանոտ է, և փայտ նորա կարծր և առանց փառութեան, և ոչ յորդանց ապականի և յոյժ վայելէ գեղեցիկ զործոց և զրօշելոց և քանդակուածոց, և զարդարէ զդրունս տաճարաց, այլև բնութեամբ ջերմին է, և պտուղ նորին օգտակար, եփեալ և ճաշակեալ՝ ծիրանուոյ և զեղնագունի երեսաց օգնէ, և զջուրն պտղոյն եփեալ և պնդեալ՝ վաղվաղակի ի խոնարհ ձգեալ սրբէ զգեղնութիւն մաղասոյ . . . , դարձեալ, ծառս այս բազում ոստովք՝ յարմատոյ մինչև ի վեր, և որ կամի ելանել ի զլուխ նորա՝ զիւրաւ ելցէ ընդ ոստս նորա» [«Հայրուսակ», էջ 559:]

Ասկէ աւելի աղէկ կարելի չէ նկարագրել նոճը :

Ասորերէն բնագիրն է. «Թիւնուն [անդ] ակէն [բոյն շինեցին] ակիրէ [ձնձղուկները], վը հուրբոյ [արագիլը] կինոյ [իր բոյնը] ըբ շարուայնէ [սարոյներուն մէջ (կը շինէ)]:



Ն Ո Ճ

Սարոյին իբրեւ հոմանիշ, կիպարիս, սկրվի
նշանակութեամբ, ունինք նո՞ւ կամ նո՞յի որ
շատ աւելի գործածուած է Սր. Դրքին մէջ:

Սարոյն կամ նո՞ն է Երրայերէն բլոռշ կամ
բլոռը որ տուած է Ասորերէն բլոռուրոյ, նոյն
նշանակութեամբ, և Յունարէն Յօάն, բրարի
զի կամ ցրդի՝ նո՞նի տերեւներով, sabine.

* * *

Բլոռշ՝ նո՞ւ թարգմանուած է հետեւեալ
հատուածներուն մէջ. Դ. Թագ. ԺԹ. 23. Ես.
Լի. 24, Ես. ԽԱ. 19, Ես. ԾԵ. 13, Ես. Կ.
13, Երգ Երգոց Ա. 16, Յունարէնն ալ ունի
չսπազուսուս այս տեղերը, Եղեկ. ԼԱ. 8,
Յունարէնը ուրս. յամ կը դնէ:

Ասորերէնն ունի շարուայնէ այս բոլոր հատ-
ուածներուն մէջ ի բաց առեալ Ես. ԾԵ. 13
ուր դրուած է բլոռուրոյ:

Աստուածաշունչը մայր, յամ, կը թարգմանէ
բլոռշը որ է նո՞ն, հետեւեալ հատուածներուն
մէջ և այս ալ հետեւելով Յունարէնին.

Գ. Թագ. Ե. 8 (կը համապատասխանէ Եր-
րայական Ե. 22/ն). Ե. 10, Զ. 15, 34. Թ.
11, Յունարէն ունի, pin. Բ Մն. Գ. 5,
Յուն. ուրս, յամ. Եղեկ. Լի. 5, Յուն. չէծօօչ
մայրի Լիբանանու, cèdre:

Ասորերէնն ունի միշտ շարուայնէ, սարոյ,

ի բաց տոհալ Բ Մն. Գ . 5 , ուր զրուած է յար-
ռուկ :

Խսկ Ես . ԺԴ . 8ի մէջ բըռոշ թարգմանուած
է պարզապէս փայտ . «Եւ փայտքն Ալբանանու
ոտնհար եղեն քեզ» Ասորերէնն ունի բըռու-
րոյ , ուակայն Հայերէնը կը հետեւի Եօթանաս-
նից որ կը դնէ ու չնկա , Սիւմմաքոս կը թարգ-
մանէ ուրաք , pins , յամեր . Վուլգատան abietes ,
եղեւիններ , fir-tree .

* * *

Ովսեայ ԺԴ . 9 . «Եփրեմայ՝ զի՞ եւս կայ
նորա և կոոց , ես խօնարհեցուցի զնա , և ես
զօրացուցից զնա , ես իրեւ զայզի պտղախայծ ,
յինէն գտաւ պտուղ ի քեզ : »

Այս տեղ այզի բառը զրուած է բըռօշի .
Նոճի տեղ , զայզի զրչագրի սխալ է , պիտի ըլ-
լայ զզի , համաձայն Յունարէնին որ ունի ձօ-
չեսթօս ուշացօսա [զի տերեւախիտ] : Երրայտ-
կան բնագիրն է բըռոշ ուսանան [նոճի դալար] ,
իոկ Ասորերէն յարուիր կ'արիրօ [նոճի տե-
րեւախիտ] :

Սկիլայ դարձեալ բըռոշը կը թարգմանէ
չնատդ , եղեւին , որու հետեւելով վուլգա-
տան կ'ընդունի abietem virentem [եղեւիններ
կանաչ] :

* * *

Նոճ զործածուած է Կիպրոս , հինայ նշա-

Նակութեամբ , այն բոյսը՝ որու տերեւները կը գործածուին Արեւելքի մէջ կիներու մազերն ու մատները կարմիրներկելու , Երրայերէն կովկր , Ասոր . ֆուփրոյ Henné , Lawsonia inermis L.

Երգ Երգոց Ա . 13 . «Ողկոյզ նոնյ է եղարորդին իմ ինձ» : Զ . 10 , Է . 11 , «Թէ ծաղկեալ իցէ որթ , թէ ծաղկեալ իցէ նոն : » Յունարէն թօթօս տῆς հնապջու , որ թարգմանուած է այլուր Կիպրոս . Երգ Երգոց Դ . 13 :

* * *

Նոն գործածուած է Երրայական երեկ , մայրի , սարդ բառին տեղը , բայց սխալը Եօթանասնիցն է , քանզի անոնք ալ նոյն սխալն ըրած են սուպարտուուս , նոն զնելով և Հայք պարզապէս թարգմանած են զայն :

Եզեկ . ԱԱ . 3 «Իբրեւ զնոն [էրէզ] մի ի Լիբանան , փոխանակ զնելու «Իբրեւ զմայրի կամ զարդ մի ի Լիբանան : » Եզեկ . Իէ . 25 «Ի նաւս նոնի [արազիմ] փոխանակ՝ «ի նաւս մայրին Յովիր . Խ . 12 , «Կանզնեաց զտտուն իւր իբրեւ զնոնի [էրէզ] : » պիտի ըլլայ «իբրեւ զմայրի : »

* * *

Նոն գործածուած է Երրայերէն լա շկմենի , ծառ իւղոյի տեղ , գարձեալ Եօթանասնից հետեւելով՝ որ կը զնեն չնլոն սուպարտուուն «ի փայտից նոնից . » Գ . Թագ . Զ . 23 :

Նոյն բանը կ'ընեն Եօթանասունք Ես . ԽԱ . 19ի մէջ :

* * *

Նո՞ւ գործածուած է Երրայերէն ալզումիմին
տեղ Բ Մնաց . թ . 10 : Ասորերէնն ունի յար-
ռուկէ [նոճ?] , Յուն . ունկա , չամ , իսկ Վուլ-
դատան ligna thyina .

* * *


Նոճը կամ սարոյն կոնարեր տունկերու մէջ
կը կազմէ նոմեայներու (cupressinées) սեռը
դիին հետ :

Նոճը , որու տասնի չափ տեսակները կան ,
միաբնակ ծառ է , ործ և էգ ծաղիկները կը
գտնուեն միևնոյն ծառին վրայ զատ զատ :
Տերեւները կազմուած են ընդդիմադիր շատ
մանր թեփերէ որոնք իրարու վրայ ազուցուած
են կղմինտրի պէս և երկու երեք տարիէն կը
թափին , ատոր համար մշտադալար է նոճին :

Որձ ծաղիկները կարճ և ծայրադիր (ter-
minal) խրացներ կը կազմեն . էգ ծաղիկներն
են կլոր , փոքր ընկուզի մնձութեամբ կոներ
ի սկզբան կանաչ ջնարակուած , որոնք հետ-
զնետէ փայտանալով՝ կը սեւան և իրենց թե-
փերը , որոնք չչորցած իրարու կցուած են , կը
բաժնուին իրարմէ . այս թեփերը , բազման-
կիւն , թիւով թ են առ հասարակ , չորսը կո-
թին շուրջ խաչաձև միացած , միւս չորսը ա-
նոնց վերև , իսկ վերջինը կը կազմէ զագաթը
իր երկու սուր ծայրով . այս թեփերուն տակ
պատսպարուած են սերմերը որոնք ունին եր-

կու կողմէն թեւեր անոնց ցրուումը դիւրա-
ցունելու համար :

Սրեւելքի մէջ, գերեզմաններու ծառն է
նոնին մշտաղալար (*Cupressus sempervirens* L.)
որ կը բարձրանայ ուղիղ դէպի երկինք ինչ-



Նոնի .— *Cupressus Sempervirens* L.

1. Որձ ծաղիկ .— 2. սերմ .— 3. պտուղ :

պէս արդարին հոգին և կը մնայ դալար յա-
փեսնան : («Culte du cyprès pyramidal» par
Lajard 1843, et Acad. des Inscr. T. XX.
Hehn, p. 241):

Նոնին փայտը կարծր է, կարմիր, մանր

հատերով, անուշահոտ և գրեթէ անփուտ : Արեւելքի մէջ ցարդ անոր անուշահոտ փայտէն կը շինեն հարսերու մնառուկները, կը գործածուի պատուական կարասիներու շինութեան : Նաւատորմիզը, զոր Աղեքսանդր շինել տուածի Բարելոն, նոճէ էր :

Եփեսոսի տաճարին դուռները նոճի էին, որոնց համար Պղինիոս կ'ըսէ որ «400 տարի յետոյ նորի պէս են :» Կոստանդնուպոլսոյ դուռները որոնք 1000 տարիէ աւելի մնացին՝ նոճի փայտէ էին :

Երուսաղէմի տաճարին շինութեան դորժածուած փայտերը, զոր Քիրամ ուղարկեց Լիրանանէն, սարդ և սարոյ, այսինքն մայրի և նոճի էին :

Բժշկութեան մէջ նոճի փայտը գործածուած է իրեւ պնդիչ, քրտնաբեր, իսկ Արարները անոր սերմերուն բարակ փոշին կը գործածեն թլփատութեան վէրքը դարմանելու համար :



ԿԻՊՐՈՍ, ՀԻՆԱՅ.

Կիպրոս.— Երբ . Կոփէր .— Ասոր . Կուփրոյ .— Հնապօօս .— Լ. Ս. Cyprus.— Henné.— Lawsonia Inermis Roxb.—Lawsonia Alba Lamk.— Ար . Հանա հիննայ . և Հակեռկննա [իրն Բէյթար] .— ծաղկիկ . Գաղաց . Վաղիյիկ :

Հինայի տունկը , որ Ա . Գրքին մէջ կիպրոս կը կոչուի , փոքր ծառ մըն է արարական ծագումով և տարածուած հիւսիսային Աֆրիկէի , ամբողջ Արեւելքի , Սուրիոյ մէջ , Մեռեալ ծովու եզերքը մինչև Հնդկաստան : Կիպրոսի մէջ ալ կայ , ուրկէ՝ իր յունական Հնապօօս , Կիպրոս անունը :

Փոքր ծառատունկ մըն է վայրի յունապենիի մեծութեամբ Lythrariéesներու տոնմէն , նուրբ ճիւղերով , սպիտակ կեղեւով . տերեւները ընդդիմադիր են , երկայնաձև , անատամն և անկոթ : Ծաղիկները սպիտակ ողկոյզներ կը կազմեն անուշահոտ , երկու ճիւղերու մէջտեղէն ելած և ծայրադիր :

Ծաղկին բաժակը կարճ է չորս փերթով . չորս թերթ ունի բաժակի խողովակին եղբը կցուած . 4 զոյգ առէչները թերթերուն մէջտեղէն կ'ելլեն , բաժակի խողովակին եղերքը միացած . ձուարանը , բազմաթիւ սերմերով դնդածն է :

Հինան Արեւելքի մէջ հին ժամանակներէ հետէ

ծանօթ է իր տերեւներուն գեղին կարմրագոյն հիւթով : Եզիպտացիք անով կը ներկէին իրենց մոմիաներուն կարգ մը մասերը և միայն բարձր դասի անձերու յատուկ էր ի սկզբան անոր գործածութիւնը : Երբ Տաճկաց ձեռքն անցաւ Եզիպտոսը ուր կը մշակուէր մանաւանդ հինան, փաշաներն իրենց վերապահեցին անոր մշակութիւնը և մեծամեծ գումարներ կը շահէին ուղարկելով կ.պոլիս :

Տերեւներու հիւթը կը պարունակէ պնդիչ (astringent) գոյացութիւն մը, գղթորի թթու (acide gallique) և երկաթի աղերու հետ կուտայ թանաք : Հնդկաստանի մէջ կը գործածուի մորթային հիւանգութիւններու համար, ինչպէս բորստութեան դէմ, նոյնպէս կեղերու և քրանող ոտներու համար :

Արեւելքի մէջ կինները և նոյն խոկ մարդիկ, մասնաւորապէս Պարսիկ այրերը, հինայով կը ներկեն իրենց մազերը, ձեռքին և ոտներուն մատները անոր կարմիր գոյնին համար և իբրև ափրողիտեան : Ատարազարի մէջ մասնաւոր արարողութեամբ և երգերով հարսնիքէն երկու օր առաջ կ'երթան հարսնցուին տունը, զլուխը հինայ դնելու, և այս արարողութիւնը կը կոչուի հինայուան . հետեւեալ օրն ալ հարսնցուն կը տանին բաղանիք լուալու :

Հինային տերեւները կը չորցունեն և կը փոշիպտունեն գործածութեան համար . մինակ հինան կարմիր խարտեաչ կը ներկէ սպիտակ մազերը . եթէ հետեւեալ օրը, հինայով ներկուած

ձեռներուն վրայ , իւղով և ջուրով շաղախուած (pétrie) քիչ մը կիր դնեն , գոյնը սեփ կը փոխուի (Dr. Guigues) : Լեզակ խառնելով մէջը կ'ունենան սե գոյն , իսկ ընկուղի կճեպի հետ կու տայ թուխ (brun) : Այս կարմիր հիմայէն զատ որ կը կոչուի Մէքքէի հինայ , կը ծախեն



Կիրցոս կամ հիմայ .—Lawsonia Inermis Roxb

սեւ կամ Պաղտատի հինայ որ ուղղակի սև կը ներկէ մաղերը , թէև երբեմն անոր կը խառնեն կառլայի պտուղներ (baies de laurier) կամ ընկուղի տերեւներ :

Երկու հինամեր անունով կը ճանչցուի հինայի և սինամերի (séné) խառնուրդ մը որ կը ծառայէ մաղերը սեւ ներկելու :

Հինայի ծառատունկը կը մշակեն պարտէզներու մէջ իր ծաղիկներու անուշ բոյրին համար . ծաղիկները (tamar henné, طمر حنّ) կը գործածուին իրրեւ անուշահոտութիւն :

Արարներու ժաղիյէ բասծը հինայի ծաղիկն է և Հայ Հէքիմարանը (ձեռ. Փարիզի թիւ 245) կ'ըսէ . «Թաղիկ, յինայի ծաղիկ, այն որ խոշըր լինի :»

Պէյրութի մէջ մշակուած հինան ներկելու յատկութիւն չունի :

* * *

Երրայական կոփերն է զոր Եօթանասունքթարդմանած են չըպջօս, կիարոս և Վուլգատան սցրուս . հիմա ընդունուած է որ հինայ է :

Երկար ատեն չըպջօս, կիարոս թարդմանուած է troène, ligustrum (Մատթիոլի) : Պրոսպէր Ալբէն, իր Եղիպտոսի տունկերը զրքին մէջ, կը նշանակէ այդ սխալը և կը համեմատէ, ինչպէս Պլինիոս, հինային պատուղները զինձին պտուղներուն . սակայն կը պահէ ligustrum ընդհանուր բառը, միայն nigrum (սեւ) բառն աւելցունելով : (Notes de Leclerc dans la traduction dibn-el-Beithar) :

* * *

Կոփեր, կիարոս, հինայ յիշատակուած է Երգ Երգոցի մէջ .

Ա. 13, Դ. 13, Զ. 10, Է. 12 :

Դ. 13ի մէջ, «կիպրոն հանդերձ նարդոսիւն», հինայ կը յիշուի անուշանոտութիւններու մէջ և թարգմանութիւնն է չըլքօչին, Ասորերէն կուֆրո : Անդղիական թարգմանութիւնը Երրայական կոփէրը կը մեկնէ յափուր, camphre, և կը դնէ camphire . միեւնոյն սխալն ընելով է որ միսիոնարներու Արարական թարգմանութիւնը կը դնէ քորկավոր [քափուրի ողկոյզ] : Երրայերէնն է կոփէրին, կիպրոններ :

Խսկ Ա. 13, Զ. 10, Է. 12 հատուածներուն մէջ Հայ բնագիրը կը դնէ նո՞ն, փոխանակ կիպրոսի, անշուշտ չըլքօչը չուպաջոչօչին հետ շփոթելով :

Միսիոնարաց գրաբար Աստուածաշունչը (Տպաղբ. Պաղտատլեան 1895) Դ. 13ի հանդէս իրրեւ Երրայական ուղիղ թարգմանութիւն կը դնէ նո՞ն . մինչդեռ կիպրոն աւելի ճիշդ կը յայտնէ Երրայական կոփէրը, որ է Ասորական կուֆրոն :

Ա. 13, Ողկոյզ նո՞նոյ է եղբօրորդին իմ ինձ : Յն . βότρους τίς Κύπρου, Լտ . Botrus cypri . Զ. 10 և Է. 12 միեւնոյն խօսքերն են կրկնուած .

«Ի պարտէզս ընկուզեացն իջի հայել յարդիւնս վտակացն, տեսանել թէ ծաղկեա՞լ իցէ որթ, թէ ծաղկեա՞լ իցէ նո՞ն, թէ ծաղկեա՞լ իցեն նո՞նենիք : »

Զ. 10ի մէջ (Երր. Զ. 11) «Ծաղկեալ իցէ նո՞ն» չկայ Երրայական բնագրին մէջ, նոյնպէս Եօթանասնից Յունարէնին և Վուլպա-

տային մէջ . իսկ է . 12 Երբայերէնն ունի
կոփերիմ յոդնակի ձեւով : Յունարէնը կը
գնէ չուզօւսոց [որքի ծաղիկը] , այսպէս է նաև
Ասորերէնը , Վուլ . videamus si floruit vinea,
si «Flores Fructus» parturiunt . Անգլիական
թարգմանութիւնն ալ կ'ըսէ . the tender
grape appear :



ԱՆՓՈՒՏ ՓԱՅՏ

Անփուտ փայտ. — ξύλον ἄσεπτον. — *Լու*. ligna setim, Spina.— *Անզղ*. Shittim-wood. Shittah-tree.—*Acacia Arabica* = A. vera, A. Aegyptiaca. = *Spina Aegyptiaca* = S. Acaciae. = *Mimosa Arabica* Roxb. = *Acacia Nilotica* Del.= *Mimosa Nilotica* L. = Gommier rouge Neb - Neb Adams. = Sunt եղիսկացւոց. = *Barbura Սանսկրիտ*. — *Ար*. سطع ukis. ظفر կարազ.

Acacia Seyal Del.— سال Ակյեալ :

Ար. Գրքին մէջ անփուտ փայտը նշանակուած է Ելից Գրքին մէջը, Վկայութեան Տապանակին շինութեան առթիւ, Անփուտ փայտը, Սատիմ, մին էր այն նուէրներէն զոր իսրայէլի ժողովուրդը պիտի բերէր թանկագին մետաղներու, կապուտակի, ծիրանի, այծերու մազին և խոյերու մորթին հետ, Խորանին շինութեան համար. Ել. ԻԵ. 5:

Անփուտ փայտէ պիտի շինուէին Վկայութեան Տապանակը ԻԵ. 10, ու անոր լծակները ԻԵ. 13: Անկէ պիտի լինէր Սեղանն իր լծակներով ԻԵ. 23, 27: Նոյնպէս Խորանին սիւնակները և նիզերը. ԻԶ. 15, 26: Կապուտակէ և ծիրանիէ և մանած կարմիրէ ու բենեզէ նկարակերպ գործուած վարագոյրը որ Սրբութիւնը պիտի անջրպետէր Սրբութիւն Սրբոցէն,

պիտի ձգուէր չորս անփուտ փայտէ սիւներու վրայ իջ. 32, և նոյն փայտէն հինդ սիւնակներ պիտի բռնէին Խորանին դրան սրահակը իջ. 36 :

Եւ այնպէս ալ ըրին Բեսելիէլ և Եղիար Մովսէսի առաջնորդութեամբ, ինչպէս տէրր հրամայած էր անոր Ախնայի բարձունքէն. լջ. 20, 31, 36, լջ. 1, 4, 10, 13, 25, 28:

* *

Անփուտ փայտ թարգմանութիւնն է յունական էնծու ածեռու, փայտ որ չնեխիր, incorruptible, բառին զոր կը գործածեն Եօթանասունք :

Երբայական բնադիրն ունի շիտիմ յոդնակի ձեւով, եղակին շիտայ սեղմումն է շիտայ բառին զոր կը դտնենք արաքերէնի մէջ սեն Տաձեւով, նոյնն է եղիապտական սենտին հետ որ կը նշանակէ փուշ :

Միւնոյն եղիապտական սեն բառը տուած է յունարէն և լատիներէն "Ακανθα, acanthus, ακανθη, έγχυστοςή Ακακία [acacia d'Egypte, mimosa nilotica, spina aegyptiaca] նշանակութեամբ. նախկին Եղիապտացիք [Ականքէ] կը շինէին նաւակներ, արձաններ և ամէն տեսակ կարասիներ (Հերոդոտոս Բ. 90):

Շիտիմ զործածուած է միշտ յոդնակի ձեւով և Վուլգատան կը թարգմանէ ligna setim, փայտ սեխիմ, ի բաց առեալ ես. իլլ. 19 ուր կայ շիտայ, եղակի. "պիտի աճեցունեմ

Արարային (անապատին, որ է Յորդանանու հովտին հարաւային անքեր մասը) մէջ մայրին, շիտայն, մուրտը և ձիթնին . . ., (Տես Էջ 108): Եօթանասնից թարդմանութեան մէջը գործածուած երկրորդ ծառի անունն է տօսախ, մինչդեռ Վուլգատան կը գործածէ փուշ, Spina: Յերոնիմոս այս առթիւ կը գրէ, «Բացատրենք Երրայերէն սետայն, զոր Թէոդոսիոն կը թարգմանէ փուշ, տեսակ մը ծառ է որ կ'աճի անապատին մէջ և կը նմանի սպիտակ փուշին, մկնալոցին (Spina alba, aubépine). անոր փայտէն՝ որ կը կոչուի Սետիմ, շինուեցան Տապանակը և անոր մասերը. անփուտ է և թեթև»:

Ասորական բնագիրը բոլոր հատուածներուն մէջ միօրինակ է շկորրէ բառն ունի (տես Էջ 90, տող 27):

* * *

Անփուտ փայտը, Շիտախմ կամ Սատիմը, ակասիայի տեսակ մըն է, կանոնաւոր ծաղկով թիթեանակերպներու սեռէն, առատօրէն կը գտնուի Եղիպտոսի մէջ որու համար կը կոչուի նոյնպէս Եղիպտակի Ալրասիա:

Երբ Մովսէս կը հրամայէ Ռւխտի Տապանակը շինել անփուտ փայտէ, Խորայելացիք կը գտնուին Սինայի թերակղղիին մէջ ուր արդարեւ կը գտնուի Եղիպտական Ալրասիա, արմաւենիի և մոշայի ծառերու հետ:

* * *

Ակասիաները, որ թիթեանակերպներու տոհ-

մին մէջ ընդարձակ սեռ մը կը կազմեն իրենց
չորս հարիւր տեսակներով՝ տարածուած են
երկրագնդի բոլոր տաք մասերուն մէջ, մա-
նաւանդ Ափրիկէի և Աւստրալիոյ մէջ:



Ակասիա Սէյալ.— *Acacia Seyal* Del.

1. կոկոն.— 2. Սոսորդ.— 3, 4. առէչ.—
5. ծաղիկ.— 6. պտուղ:

Կանոնաւոր ործ և էդ ծաղիկներ ունին
յաճախ կլոր հոյլեր կազմած, կցաթերթ (ga-
mopétale) են, իրենց բազմաթիւ առէնչերը

կցուած սերմնարանին ստորև : Փուշ ունին
և իրենց տերեւները ճղճղկէն են : Պտուղը
պարկուձ (gousse) մըն է երկայնաձեւ : Փայտը
չատ կարծր է :

Ակասիաներու արտադրութիւնները կը գոր-
ծածուին բժշկութեան մէջ, Արաբական Ակա-
սիայի (Acacia Arabica) պտուղը որ կը կոչ-
ուի բարլայ, ինչպէս նաև կեղեւը, շնորհիւ իր
պարունակած աղաղին, կը գործածուի բժշ-
կութեան մէջ իրեւ կապող (astringent), նոյն-
պէս խաղախորդութեան և ներկարարութեան
մէջ : Կու տայ դարձեալ Արաբական խէժ, սամη
gomme arabique).

A. Catechu բսուած տեսակը որ կ'աճի
Արեւելեան Հնդկաց, Անդիւնանց մէջ, կ'ար-
տադրէ կաշու խէժը (cachou).

Սր. Գրոց մէջ յիշուած Ակասիայի տեսակ-
ներն են Արաբական Ակասիա և Ակասիա Սէյալ
(Acacia Seyal Del.) որոնք կը գտնուին ե-
զիպտոսի, Սինայի անապատին և Մհուեալ ծո-
վուն հարաւային եզերքը :

Ակասիա Սէյալի տերեւները ճղճղկէն են
7, 8 զոյդ նուրբ տերեւիկներէ կազմուած,
դեղին ծաղիկ ունի գլխաձև, կլոր որ կը
բարձրանայ տերեւներու անութէն . զոյդ զոյդ
փուշեր ունի սուր ճիւղերուն վրայ, սերմերը
շարուած են երկայնաձև պարկուձի մը մէջ
որ կը բացուի լուրիայի նման երկփեղկ . կու
տայ արաբական խէժ, սամη :

Առ հասարակ չատ բարձր չըլլար, 4, 5

մէտր , Արարները չեն թողուր որ մնանայ , կը կտրեն , ածուխ կ'ընեն և Եգիպտոս կը տանին ծախելու :

* *

Ակասիան , Եգիպտական Սկենը , հնութեան խորհրդաւոր ծառն է նուիրական , զոր , Ար . Գրքէն գուրս , հիները կտակած են Ազատ Որմնադրութեան : Ակասիան աանցնալ , կատարեալ Ազատ որմնադիր մ'ըլլալ է . իր անփուտ փայտը ձշմարտութեան խորհրդանշանն է ու իր արմատները կը տարածուին չատ հեռուն : Իր կլոր ծաղկի հոյլերը պատկերն են երկրագնդին և իր տարբաղադրուած տերեւները կը ներկայացունեն Ազատ Որմնադրութեան կազմակերպութիւնը ամենուրեք բաժնուած , տարածուած ի սփիւսս աշխարհի , բայց ամենքը ի մի միացած մէկ գործի մը շուրջ , ձշմարտութեան յաղթանակին համար երկրի վրայ :

* *

Ակասիան իրը գեղ համայնաբուժ (panacée) կը գործածուէր հնութեան մէջ և էր յուսութ չար աչքի դէմ , գրաւական յաջողութեանն Ռւստի Ե . դարէն , Լեւոն Ա . է սկսեալ (454—474) Բիւզանդական դրամներուն վրայ կը տեսնենք այլարանօրէն նկարուած Ակասիայի սկարկուձ մը , երկայն ու շեղ կտաւէ տոպրակի մը ձեւով . կայսրը ձեռքը բռնած է զայն ի նշան իր հոգածութեան՝ հանդէպ իր հազարակներու եր-

ջանկութեան , տոպրակը լեցուած էր մոխիրով
և փոշիով , իրեն յիշեցնելու համար թէ դիւ-
րաքեկ ու անկայուն է իր գան ու զօրու-
թիւնը և թէ հարկ է ապրիլ Ակակիա , այսինքն
“առանց չարիքի , առանց ոճիրի” :



Շիստիմ և շիտայ գործածուած են նոյնպէս
Սր . Գրոց մէջ իրրե տեղի անուն .

Սատիմ , Յեսու . Բ . 1 , հովիտ մըն է Մովարի
մէջ ուրկէ Յեսու երկու երխտասարդներ ու-
ղարկեց Երիքովի երկիրը լրտեսելու համար :
Արեղատու Թիւք . ԼԳ . 49 , Երրայեցերէն
Արկէ-հը-Շիստիմ , Կօթանասունք Եւլուտօ , Գրա-
րիսուի ուրիշ օրինակները Եւլլատն . Արկէ կը
նշանակէ գետ , երկիր գետի ափը , արդարե
խրայէլացւոց կայաններէն մէկն էր Յորդա-
նանի եզերքը , “Եւ բանակեցան զՅորդանա-
նաւ ի մէջ Եսիմովթայ , մինչև ցԱրեղատու
յարեմտից Մովարու :

Բերասետա Դատ . է . 22 Երր . Բեր-հը-Շիտայ
(տուն Ակասիայի) . Եօթանասունք (է . 23)
Եղթուեծ , ուր փախան Մադիամացիք և Ամա-
ղեկացիք Գէտէռնի առջեւէն :

Նախաշ-հա-Շիտիմ (Ակասիաներու հեղեղա-
տը , հովիտը) Յովէլ Գ . 18 , Հայերէն թարդ-
մանուած է Զորն լիհակաց (Գ . 19) Եօթանա-
սունք շելմազօս τῶν σχοίνων (կնիւններու հե-
ղեղատը) . լտ . torrentem spinorum.

Դարձեալ Սատիւմ կամ Շիտիմ, վիճակ թարգ-
մանուած է Հայերէն նոյն Յունարէն բառէն
Միքիա Զ. 5ի մէջ. «Յիշեա զինչ խորհեցաւ
վասն քո Բաղակ թագաւոր Մովարացւոց և
զինչ ետ նմա պատասխանի Բաղաամ որդի
Բէովրայ, ի վիճակացն մինչև ցԳաղգաղ» :



ՄՈՒՐՏ

Մուրտ . — երբ . Հայաս . — մսօսնη . —
Myrtus.— Myrte.— Ասոր . Ասոյ .— Ար . اس
Աս . Հեղիս [Հարաւային Արաբիով մէջ].
ریچان البتوئر *rījān ibtūr* [جبل فلسطين] . —
Թրք مرسین آغاجی . — Մկրասին աղամը . — Արամերէն
Ասա :

Մրտենիները տաք երկիրներու մշտադա-
լար ծառատունիներ են , ընդգիմազիր տերեւ-
ներով , ծաղիկները ծայրագիր են ու փոքր
թիւով : Զուարանն ունի 2—4 խորշեր բազմա-
ձուիկ (multiovulées) . հատապտուղ (baie)՝
ունի , բաժակի բլթակներովը պսակուած :

Միակ տեսակը որ տարածուած է միջերկ-
րականի երկիրներուն մէջ , հապարակ մուրտն է
որ կը գտնուի նոյնպէս Պոլիս՝ Իշխանաց կղզի-
ներուն մէջ : Փոքր ծառ մըն է 1—1^{1/2} մէտր
բարձրութեամբ , անուշահոտ , մշտադալար .
ընդգիմազիր տերեւները , երկայն , պրածայր՝
ամբողջ են , գրեթէ անկոթ , կարծր , լերկ և
փայլուն . տերեւներու անութէն կը բարձրա-
նան երկայն կանթով (pédoncule) առանձին
սպիտակ ծաղիկներ անուշահոտ , ծաղկին բա-
ժակը կցուած է ձուարանին , ունենալով տարած-
ուած 5 բլթակ , 5 բերք ունի , բազմարիւ ա-
ռեցներ . մէկ ծիղ , պարզ սոսորդով . հատապտու-
ղը հաղիւ մսոտ է , ձուամետ , կապուտի վրայ
սե . սերմերը փոքրաթիւ են :

Պարտէզներու մէջ կը մշակեն մուրտը, փայտը յարգի է, տերեւներն ու պտուղները զօրացուցիչ կը նկատուին և ծաղիկներուն ու տերեւներուն թորումը կու տայ Եau des Anges, հրեշտակաց յուր անունով ծանօթ գոյացութիւնը :

Հարաւային ֆրանսայի մէջ պտուղներէն ըմպելի կը չինեն :

Աստուածաշունչի մէջ կը գտնենք *Մուրտը*,



Մուրտ. — *Myrtus Communis* L.

Նէեմի թ. 15. երբ և. դարուն (Ն. Ք.) Նէեմի և Եղբասի առաջնորդութեամբ Իսրայէլի ժողովուրդը Բարելոնէ դարձին երուսաղէմը վերստին կը չինէ. Եղբաս կը հրամայէ եօթ-

Ներորդ ամսոյն ոկիզը պատշաճօրէն կատարել Տաղաւարահարաց Տօնը և կ'ըսէ . «Ելէք ի լեռն և բերէք տերեւս ձիթենեաց , և տերեւս ի ծառոց սօսեաց , և տերեւս մրտոց [հագաս] խնկենեաց և տերեւս ի թաւ ոստոց ծառոց :

Այս հատուածին մէջ բոլոր թարգմանիչք համաձայն են Երրայական հաղասը մուրտ թարգմանելու . միայն ասորականը զանց կ'ընէ և կ'ըսէ . զեյրէ [ձիթենի], կրտզէ [բնկոյզ] , արդուղոյ [թուրինջ] . արսէ [ուսի] : Մինչդեռ Ղեւտացւոց զրքին համապատասխան հատուածին մէջ իԳ . 40 , Ասորերէնն ունի նաև ոսոյ , մուրտ :

Ցարդ Երուսաղէմի մէջ Հրեաները Տաղաւարահարաց Տօնին կը գործածին մուրտ , որ կ'ածի Երուսաղէմի հարաւակողմը հովիտներուն մէջ , Բեթղեհէմի , Քերրոնի շրջակայքը , ինչպէս Սամարիայի և Գալիլիայի մէջ : Դոկտ . Պոստ կ'ըսէ որ մուրտը առ կամ ոինան անունով ծանօթ է արարերէն և Սուրիոյ ու Պաղեստինի մէջ առատօրէն կը բուսնի ծովեզրէն մինչեւ 1,000 մէտր բարձրութեան վրայ , մասնաւորապէս ջրերու եզերքը :

Ես . ԽԱ . 19 , Մարգարէն նկարագրելով Մեսիայի գալստեան ժամանակները կը յիշէ մուրտը ուրիշ ծառերու հետ . «Եւ Յղինեցուցից յանջուր երկրին զմայրն և զտօսախն , զմուրտն և զնոճն և սօսն , զսարդն և զսարոյն և զկաղամախն , զգին և զփայտն իւղոյ (տես էջ 108) :

Ես. ԾԵ. 13, «Եւ փոխանակ ցրդւոյն նոռ
բուսցի, և փոխանակ դժնկի մուշտ ելցէ :»

Հաղաս, մուրտ յոզնակի ձեւով, հաղասիմ,
յիշուած է Զաքարիայի երազին մէջ (Ա. 8, 10,
11): Եօթանասունք հաղասայիմ ամուրտերով,
կը կարդան հահարդիմ «լեռներ», թարգմանիչք
կը հետեւին Յունարէնին և կը դրեն.

Ա. 8. «Եւ ահա այր մի հեծեալ յաշխէտ
ձի և կայր ի մէջ երկուց անտառախիտ լե-
րանցն փոխանակ ըսելու, «ի մէջ մրտենեացն
որ էին ի ձորի անդ», Ակիլա և Սիւմմաքոս
ուղիղ կը թարգմանեն և Վուլգատան անոնց
հետեւելով՝ կը դնէ inter myrteta.

* * *

Եսթէրի անունն է Երրայերէն Հադասայ
որ է «մուրտ», Վուլգատան կը դործածէ Ե-
ղիսաս, Edissa: Յիշենք թէ Ասորեստանցւոց
Լեզուավ հրդաշտու կը նշանակէ նշանած և
մուրտը Հնութեան մէջ Աստղկան նուիրուած
ծառն էր:

* * *

Փարիզի Զեռապիր Հէքիմարանի (Թ. 245)
բառադրքին մէջ կը դանենք.

«Սիրիսվաշ» կամ Սիրիսաշ, Ասի տերեւ,
թարգմուրդ.— Մուրտան որ է Մերսինին որ է
օս որ է հապլասն.— Մուրտ ույան, Մուրտ
ասֆրամ, վայրի մուրդ որ տափերն բուսանի
և անջրդին:



ԵՂԵՒԻՆ

Եղեւին (ծառ) .— 'Էլատո .— Abies .— Sapin .—
Abies Pectinata DC .— Abies Vulgaris Poir .—
Pinus Picea L .— Abies Excelsa DC . Pinus
Abies L .— Epicéa .— Անգղ . fir-tree .— Թրք .
ֆկոլկար .—

Եղեւին (խոտ) .— Semen-Contra .— Arte-
misia Santonica = Artemisia Contra Vaht .—
A. Judaica L .— Achillea Santolina .— Cinae
Seminae .— Անգղ . Worm-Seed .— Թրք . خراساني .
Juniperus أشجار شجرة .— Պրս . درک . վերհի ,
درمنه میخ درمنه چارو با . Հնմ բույսի դրամանայ ,
ցարուրայ , Խیز վախշիղեր .— Ար . شیح շին :

Եղեւին անունը տրուած է հայերէնի մէջ
երկու տարբեր տունկերու .

1 . — Փոքր տունկի մը՝ բարդածաղիկներու
տոնմէն . բարձուենեակի (armoise) տեսակ մըն
է որ կ'աճի Արեւելքի մէջ ի Հայս , Պարսկաս-
տան , ծանօթ՝ Խորասանի անունով . իր ծաղիկ-
ները կը գործածուին աղիքի ճճիներու , սո-
ղուզանի , իրը դեղ . այս տունկէն կը հանեն
Սանտոնին :

Հայերէն Հէքիմարանին բառադիրքը կը գրէ
անոր մասին . Զեռ . Պարիզի թ . 245) :

«Եղեւին .— Շէյի թիւրքի , խօրասանի , տը-
րամանայ .— Շէ թուրքի . Եղեւին , խօրասանի ,

դրամանայ , որ դրամնա , նման է օշինդրի .— վաշիֆակ . խօրասանի , եավշան , որ է դրամ-նայ » :

Եղեւինն է Semen-Contra , գիտական ա-նունով Artemisia Santonica , A. Judaica աե-սակները , իսկ Հալէպի Եղեւինը՝ A. Maritima.

* * *

2 .— Աստուածաշունչի մէջ յիշուած Եղեւի-նը անտառային ծառ մըն է բարձր , կոնարեր-ներու տոհմէն , ինչպէս մայրին , նոճին , գին , ցրդին :

Եղեւինը կը սիրէ լեռներու կողերն ու կա-տարները ուր ձիւնը կը կազմէ իւր կանաչ տերեւներուն վրայ այլազան յելունք , ու ե-ղեւինները ցուրտին և հովին դիմագրաւելու համար ունին խիտ ու մանր տերեւներ , կ'ապ-րին իրարու շատ մօտիկ կէս մթութեան մը մէջ :

Եղեւինները բրգաձեւ երեւոյթ մ'ունին և կը վերջանան սրածայր , շուրջանակի կ'արձաւ-կեն հորիզոնական ճիւղեր . միարնակ են , որձ խրացները առանձին կը գտնուին նախորդ տարւոյ ճիւղերուն վրայ . կ'ունենան ճեր-մակ կոներ , կղմինտրի պէս շարուած թեփե-րով որոնք կարծր են , նուրը և սուր եղեր-քով , տարւոյն մէջ կը հասունան : սերմերը՝ երկայն թեւով , զոյգ զոյդ կը գտնուին իւրա-քանչիւր թեփի ստորոտը :

Եղեւինն ունի երկու զլխաւոր տեսակներ .

1) Եղեւին ասեւրաձեւ , *Abies Pectinata* DC . սովորական սար կոչուած եղեւինն է , սանտրաձեւ կանոնաւոր շարուած տերեւներ ունի ճիւղին երկու կողմը , այս տերեւները փշու չեն և իրենց սառին կողմը սպիտակ եր-



Եղեւին . — *Abies Excelsa* DC .

1. Որձ ծաղիկներ . — 2. Պտուղ .

կու խոռոչաւոր զիծեր ունին . ծառին կեղեւը ողորկ է ճերմելել , բողբոջները սետնային , կըպչուն են , կոները ցից են և զլանաձեւ , 8-10 հարիւրորդամէտր երկայն . երբէք կոները զնին չեն իյնար , թեփերը կը թափին վրայէն մէկիկ :

2) Եղեւին Բարձր, *Abies Excelsa* DC.
 Փրանսերէն *Epicéa* կոչուածը. թեփոտ կար-
 մրագոյն կեղեւով և ոչ ռեանային բողբոջնեւ-
 րով, ճիւղերը կախուած են, տերևները շուր-
 ջանակի կը պատեն ճիւղը և սուր ծայր ունին.
 Կոները վար կախուած են, զլանաձիւ, 10-15
 հարիւրորդամէտր երկայն. կոները՝ երբ հա-
 սուննան, գետին կ'իյնան ամբողջութեամբ:

Լիբանանու կողերուն և Ամանսոսի վրայ կայ
 Կիլիկիական *Abies Cilicita* Ant. et Ky. բառած
 անսակը (Դոկտ. Պոստ. Flora of Syria էջ. 751):

Եղեւինը *Sapin* իմաստով՝ յունարէն՝ Ելատի,
 գործածուած է Աստուածաշունչի մէջ Մն.
 ԻԱ. 15:

Ագար աղախինն ու իր որդին Խմայէլ Աք-
 րահամէն ճամբուելով՝ կորսուեցան անապա-
 տին մէջ, ու անսուաղած Ագար իր որդւոյն
 մահը չտեսնելու համար Եղեւինի մը տակ ձգեց
 մանուկը.

«Եւ նուազեաց ջուր ի տկէ անտի, և ըն-
 կէց զմանուելին ի ներքոյ միոյ եղեւին ծառոյ» :

Հայերէն թարգմանութիւնը Յունարէնին
 հետեւողութիւնն է հոս. Երբայական բնագիրը
 կը գնէ շինիմ, այսինքն շին եր, որ է տունկ,
 ծառատունկ և այդպէս ալ Վուլգատան կը գրէ
 subter սում «arborem» [ծառ] quiae ibi
 erant և Անգղ. under of the Shrubs.

Հոս կ'արժէ դիտել որ Երբայերէն բառն է
 շին զոր կը գտնենք Արաբերէնի մէջ, ըստ շին
 որ կը նշանակէ ի մասնաւորի եղեւին խռով

Semen— Contra. Artemisia Santonica: Դոկտ.
Պոստ. Եղեւին ծառին իբրեւ Արարերէն անուն
կու տայ շրի:

Դարձեալ Եղեւին նոյն Տափ ծառի իմաս-
տով գործածուած է Եղեկ. Իկ. 5. «Մայրք ի
Սանիր լեռնէ շինեցան քեզ պահանգք, և տախ-
տակք նոճիք ի Լիբանանէ տռան՝ առնել քեզ
կայմա եղեւնափայտեայս» ։ Երրայերէն բնադիրը
կ'ըսէ միայն « . . . ու քեզի կայմեր շինեն» ։
Հայերէնը թարգմանութիւնն է Յունարէնին որ
կը դնէ նուն էլատինօս:

* * *

Հայերէն Աստուածաշունչի մէջ Եղեւին, Ե-
ղեւնափայտ գործածուած է նոյնպէս Սարդի,
Լիբանանու Մայրիի իմաստով և այդ շփոթու-
թիւնը հասկանալի է, քանի որ այդ ծառերը
շատ կը նմանին իրարու, միեւնոյն տոհմին
պատկանելով և անոնց գիտական դասակար-
գութիւնը շատ նոր է :

Այսպէս, Եղեւին գործածուած է մայրի,
cèdre իմաստով. Գեւտ. ԺԴ. 4, 6, 49—52.
Դատ. Թ. 15. «Եղեւնափայտ Լիբանանու» Բ
Թագ. Ե. 11 «Փայտու Եղեւնեայ» ։ Է. 2. «Ի տան
Եղեւնափայտից» ։ 7. «Եղեւնափայտեայ» ։ Գ
Թագ. Է. 2. «Ռւոք Եղեւնեայ» ։

* * *

‘Եկան, ’Ելա’sk, յունարէն կը նշանակէ Ե-
ղեւին ծառը և ’Ելա’sk, հօթանասնից թարգ-

մանութեան մէջ , Ծն . ԻԱ . 15 էն զատ , կայ Ե-
զեկ . ԼԱ . 8 (տես էջ 57) :

Ակիլայի թարգմանութիւնը 'Եղա՛սկ , Եղեւ-
ին կը գործածէ նոյնպէս Երրայական Սանսր-
նիմ [արմաւենիի ճիւղեր] բառին տեղ . Հայե-
րէնը կը դնէ բարձրութիւն որ Եօթանասնից
նվոց բառն է . «Ելից յարմաւենին , բուսն հա-
րից զբարձրութեանց նորա» , Երգ Երգոց . է . 8 :
Ակիլայ , Եղա՛սկ , Եղեւին , կը թարգմանէ նոյնպէս
Երրայական բըռոշը , որ է նոճի և Լատին Վուլ-
գատան , Ա . Յերօնիմոսի թարգմանութիւնը , որ
առհասարակ անոր կը հետեւի , կը դնէ abies ,
Եղեւին , նմանապէս Անդղիական թարգմանու-
թիւնը՝ որ ունի fir tree :

Ամերիկեան Միսիոնարաց հրատարակած հա-
յերէն Աշխարհաբար թարգմանութիւնը Եղեւին
բառը կը դնէ փոխանակ Լիբանանու Մայրիի ,
Cèdre :

Նոյն Միսիոնարներու հրատարակած Գրա-
բար Աստուածաշունչը (տպ . Պաղտաղեան 1895)-
Եղեւնափայտ կը դնէ փոխանակ նոճի , Երրա-
յերէն Բըռոշ Ես ԺԴ . 8 . Ծանօթ . թ . 15 , 716
էջ Բ . սիւնակի ստորեւ : Խսկ Եղեւին կը գոր-
ծածէ Եբր . Երկեղին փոխարէն , որ է Մայրի
Լիբանանու Եղեկ . Ժէ . 3 . Ծանօթ . թ . 12 ,
859 էջ Բ . սիւնակի ստորեւ և էջ 860 Բ . սիւ-
նակ . Ծանօթ . թ . 18 :



ԹԵՂԻ

Թեղի. Πτελέα . — **Լու.** Ulmus . — **Անգղ.** Elm . — Orme . — Ulmus Campestris L = Orme rouge . — **Թրք.** قرچ Ղարա Աղամ . — **Ար.** شجرالبغ ղիرղար , շկղեր կլ բակլ . — **Պարս.** درخت دارون ղիրախիղի ղարվիկն :

Թեղին է թռւրքերէն Ղարա Աղամ կոչուած ծառը բարձր ծառ է տարածուած կատարով , ունի ողորկ կեղեւ և խիտ ճիւղեր որոնք երկեղարգ (distique) են : Ծաղիկները որձ և էդ են . զանգակածեւ ծաղկապատ (périanthe) ունի 4—8 հաւասար բլթակներով . 4—8 ցից առէջներ՝ որ ծաղկապատէն շատ աւելի երկայն են և որոնց կլէանները կը բացուին դէպի դուրս . երկու ծիղ (style) ունին սոսորդաւոր . ձուարանը ազատ է . պտուղն է չոր , տափակ , դաղաթը ճեղքուածով , լայն ու նուրբ թեւով շրջապատուած , ֆրանսերէն կը կոչուի samare :

Թեղին անտառներուն խոչոր եւ երկարակեաց ծառերէն մին է (1) . իր ծաղիկները կը բացուին դարնան սկիզբը , մինչդեռ տերեւները չեն բողբոջած :

(1) Ա. Պոլսոյ Թատկեիմի հրապարակին վրայ կայ թեղի մը որ բանի մը հարիւր տարուան հնութիւն է , անոր տակ Եկնիկրիները ժողով բած են երկու հարիւր յիսուն տարի յառաջ :

Թեղիին փայտը կարծր է և կը դիմանայ խոնաւութեան, անկէ կը շնեն կառքի անիւներ, նաւակներ, ջրի խողովակներ. վառելու չի գար:



Օրու - *Ulmus campestris*

Թեղի.—*Ulmus Campestris* L.

Թեղիին հոմանիշ են պտղի, կնձնի, պտղի՝ Յունարէն պտեղի՝ բառին փոխազրութիւնն է:

Հեքիմարանի բառագիրքն (Զեռ. Պարիզի թ. 245) ունի. «թեղի, զարա աղաջ, մածակի ծառ, վոք.— Բարկենի. քարաղաջ, զարաղաջ,

թեղի , վոք , մոծակի ծառն է որ կ'երկննայ :

Մոծակի ծառ թարգմանութիւնն է շեշեր կլ
բակլ Արարերէն բառին՝ “որ անունով կը կո-
չեն , կ’ըսէ իբն-էլ-Բէյթար , թեղին Իրաքի
բնակիչները , որովհետեւ իր վրայ ունի վայրի
վարունդի նման բուշտեր լի հեղուկով ,
երբոք չորնան մոծակներ կ’ելլեն անոնցմէ :

* * *

Թեղին է Երրայերէն Տիղյար , նման արա-
բական ցրձար դիրդար բառին նոյն նշանակու-
թեամբ : Տիղյար գործածուած է երկու տեղ .
Ես . ԽԱ . 19 և Կ . 13 :

Հայերէն Աստուածաշունչը Սօսի կը թարգ-
մանէ զայն (Տես Էջ 58) :

Ակիլայ և Սիւմմաքոս ուղիղ կը թարգ-
մանեն , դնելով՝ պտելե՛ա , թեղի : Վուլգատան
առաջին հատուածին մէջ կը դնէ ուղիղ սլուս ,
քեղի , իսկ երկլորդ տեղը՝ pinus , քեղօշ մայր ,
չամ :



ՄԱՅՐԻ, ՍԱՐԴ

Մայրի, Սարդ. — *brrr.* — *krkq.* — Κέδρος. — Cedrus. — Cèdre. — *Անդղ.* Cedar. — Cèdre du Liban = *Pinus Cedrus L.* — Cedrus Libani Barr. — *Ասոր.* *krqo.* — *Ար.* ارز لبنان. — سدر لبان. سدر Lebanon. — سدر لہان. سدر لہان. — *Սայրի Լիբան:*

Cedrus deodara. — Cèdre de l'Himalaya, *Pinus indica* Southeimer = *Calamus Zalacca Sprengel.* — ضور هندی. — شجر الجن η/ινηωρ دیدار — الابل الهندي. شجرة الله

Հայերէն Աստուածաշունչին մէջ Մայր, Մայրի գործածուած է, նախ՝ իր բուն իմաստով, չամ, քի նշանակութեամբ և յետոյ՝ Մայրի, Մայրի Լիբանանու, իրրեւ սէдр, տեսակ մը չամ՝ որ էլ'աճի Լիբանանի մէջ, *Pinus Cedrus L.*:

Դարձեալ Աստուածաշունչը, Լիբանանի Մայրիները նշանակելու համար ունի Սարդ բառը որ է նոյն Cèdre. Լա. Cedrus բառին հետ պարսկերէն կայ սայրի լիբան سدر لبان Սարդին մէջ ր և դ զիրերը իրարու տեղ փոխազրուած են :

Հայկազեան բառարանը կը կարծէ Սարդը՝ Դամինի, և Մխիթար Աբբայի բառազիրքը կը յաւելու. «... Եւ եւս նշանակի սովաւ ծառն եղեւին» :

Արդարեւ եղեւին, եղեւնափայտ թարդմանուած է Լիբանանի Մայրին Աստուածաշունչի քանի մը որոշ զիրքերուն մէջ, բայց ոչ ուրեք դափնիի նշանակութիւնը կայ բոլոր այն հատ-

ուածներուն մէջ ուր Սարդ բառը գործած-
ուած է :

* * *

Սարդ գործածուած է Ասայեայ և Եղեկիէլի
մարզարէութեանց մէջ . Ես . Կ . 13 , ԽԴ . 14 ,
ԽԱ . 19 , Եղեկ . ԼԱ . 8 , այս հատուածներու
կազմութեան մասին երկարօրէն խօսեցանք
արդէն Սոսիի և Սարոյի դլուխներուն մէջ :

Սակայն Սարդի յիշատակութիւնը կայ նաև
ժողովողի (իմաստութիւն Սիրաքայ) երկրոր-
դականոն մասին մէջ ԽԴ . 17 . «Իրեւ Նոճ բարձր
ի լերինն Լիրանանու և իրեւ Սարդ ի լերինն
Հերմոնի» :

Այս տեղ փոխադրութիւն մը կայ որ կա-
տարուած է չենք գիտեր ե՞րբ , քանզի ըստ
Յունական բնագրին պիտի ըլլայ . «Իրեւ
Սարդ [Կέծօօ] բարձր ի լերինն Լիրանանու և
իրեւ Նոճ [Կսπազօւսօօ] ի լերինն Հերմոնի :

Այսպիսի փոխադրութեան (transposition)
օրինակ մ'եւս ունինք Եղեկ . Իէ . 5ի մէջ .
«Մայրք ի Սանիր լեռնէ շինեցան քեզ պա-
հանդք և տախտակք նոճիք ի Լիրանանէ առան-
առնել քեզ կայմս Եղեւնափայտեայս» .
փոխանակ զրելու ըստ երրայականին (*) . Նոնք
[բըռոչիմ] ի Սանիր լեռնէ շինեցան քեզ պա-
հանդք և տախտակք Մայրիի [էրէզ] ի Լիրա-
նանէ . . . միայն թէ այս հատուածին մէջ
սխալը Յունականին է զոր կէտ առ կէտ կը
թարգմաննէ Հայերէնը :

(*) Ամերիկան Միսիսիպաց հրատարակած
գրաքառ Աստուածառւնչը (Տայ. Պադտաւեան,
1895) նոյն սխալը կը կրկնէ իրեւ Երրայականէ
բարգմանուրին դրած նոնին մէջ, 873 էջի Ա.
սիւնակին ստորեւ :

* *

Հայերէն Աստուածաշունչը առ հասարակ
Մայրի կը թարգմանէ երրայական երկզը, զոր
եօթանասունք միշտ Կέծօս, և վուլկատան՝
cedrus կը դնեն :

Մայրի, սոյն իմաստով կը գտնենք՝ հա-
մաձայն Երրայերէնին և Յունարէնին, հետեւ-
եալ հատուածներուն մէջ. Թու. ԻԴ. 6, Ա.
ՄՆ. ԺԴ. 1, ԺԷ. 1, 6, (*) ԻԲ. 4, Բ. ՄՆ.
Ա. 15, Բ. 3, 8, 16, Գ. 5, ԵՂԲ. Գ. 7,
ԵՐԳ ԵՐԳՈՂ. Ա. 16, Սաղմ. ԻԸ. 5, ԼԶ. 35,
ՀԹ. 11, ՂԱ. 13, ՃԳ. 16, ՃԽԸ. Յ. ԵԱ.
Բ. 13, ԺԴ. 8, ԺԷ. 3, 22—23, ԽԱ. 19,
ԵՐ. ԻԲ. 14, 15, ԼԱ. 3, Ամովս Բ. 9, Սոփ.
Բ. 14, Զաք. ԺԱ. 1, 2:

* *

Երրայական երկզը, Լիրանանու Մայրին,
թարգմանուած է նոյնպէս Եղեւին, Եղեւնափայտ
և այդ միօրինապէս Գ. և Դ. թակաւորու-
թեանց մէջ. Գ. Թագ. Դ. 33, Ե. 8 (ԵՐ. 24),
10, Զ. 9, 10, 15, 18, 20, 36, Ե. 2,
7, 11, 12, Դ. Թագ. ԺԴ. 9: Յայտնի է թէ

(*) Աստուածաշունչը զոր ունինք ի ձեռին
(Տպ. Պաղամալեան 1895, 4. Պոլիս) կը զնի. Ա.
ՄԵ. ԺԷ. 1, 6 «Տան Մայր փայտից», 8. Խալար-
եանցի հրատարակած «Մնացորդաց գրքին հնագոյն
բարգմանուրիւնն», ունի. ԺԷ. 1, «Ի անարս Մայ-
րակոփեայս», 6. «Տանարս Մայրակոփս»:

Գ և Դ թաղաւորութեանց թարգմանիչը
տարբեր մէկն է և կամ տարբեր ժամանակ
թարգմանուած են այդ մատեանները միւսնե-
րէն, քանզի այդ թարգմանիչն իրեն համար
յառուկ բառարան ունի, ոչ միայն յունական
Կέծօս, կե'դրոսը կը թարգմանէ անփոփոխ
կերպով Եղեւին և ոչ՝ Մայրի. այլ Մայր բառն
ալ կը գործածէ շարունակ իր բուն, այսինքն՝
չամ՝ թեղօշ իմաստով, յունական Պεύκη
պե՛կէ բառին փոխարէն, մէկ անգամ մը փայտ
բառն ունի. «Հարցեն ինձ փայտ [արագիմ] ի
Լիբանանէն» Գ. Թագ. Ե. 6 (Եր. 20) երրա-
յական երեզին տեղ, այն ալ յունականին իր-
բեւ ուղիղ թարգմանութիւն չնկա էն տօն λιθά-
νοւ:

Միեւնոյն թարգմանչին հետքը կամ՝ սրբագ-
րութիւնները կը գանենք ցիր ու ցան քանի
մը ուրիշ գրքի մէջ ուր առ հասարակ Մայրի
Լիբանանու բառն է գործածուած. Դատ. Թ.
15, Բ Թագ. Է. 2, 7, Ղեւտ. ԺԴ. 4, 6.
Երգ Երգոց Ե. 15, Բ. 9: Դ. Թագ. ԺԴ. 23
հատուածը՝ «կոտորեցի զմնծութիւն Եղեւ-
նափայտից [Արագիմ] նորա և զընտիր ընտիր
նոճից նորա», Ես. Լ. 24ի մէջ թարգմանուած
է «կոտորեցի դրարձրութիւն Մայրից նորա և
զգեղեցկութիւն նոճից նորա»:

Դարձեալ Ես. Թ. 10 «Զմայրս և զեղեւ-
նափայտս հարցուք», այս տեղ ալ եղեւնափայտ
գործածուած է Մայրի Լիբանանու իմաստով,
իսկ Մայր բառը՝ մոլաթղենիի տեղ:

Այս ամենը ցոյց կուտան որ Աստուածաւ-
շունչի այլեւայլ մասերը ոչ միայն տարբեր
անձերու կողմանէ թարգմանուած են ունե-
նալով հանդերձ մինչեւ մէկ աստիճան կա-
պակցութիւն իրարու հետ, այլեւ տարբեր ժա-
մանակներու մէջ կատարուած են անոնք ու
սրբազրութիւններ կրած. անտարակոյս մեր
թարգմանիչք օգտուեցան մինչեւ գիրերու
գիւտն եղած թարգմանութիւններէն որոնք
անշուշտ կատարուած էին Եկեղեցւոյ Հայրե-
րուն կողմանէ բացատրելու համար Սուրբ
Գիրքը ժողովրդեան: Ցարդ հասած են մեզ
Ասորերէն զրով Հայերէն ձեռագիրներ:

* * *

Հետեւեալ հատուածներուն մէջ Հայերէն
Աստուածաշունչը Նո՞ւ կը դնէ փոխանակ
Մայրիի, հետեւելով եօթանամնից Յունարէ-
նին որ կ'ընէ միեւնոյն սխալը: Եզեկ. լլ. 3
ուր Մարգարէն կը համեմատէ Ասուրը Լիրա-
նանու Մայրիին հետ. «Ահաւասիկ Ասուր իր-
րեւ Նո՞ւ [Երր. կրկզ=Մայրի] մի ի Լիրանան
գեղեցիկ ոստովք և բարձր մեծութեամբ, ի
մէջ ամպոց եղեւ զլուխ նորա... վասն այնու-
րիկ բարձրացաւ մեծութիւն քան զամենայն
ծառս դաշտին, և տարածեցան ոստք նորա,
և բարձրացան շառաւիդք նորա..., Դարձ-
եալ Յովք. Խ. 12 Բեհեմովիթ զազանի նկա-
րագրութեան մէջ ըսուած է. «Կանզնեաց
զատուն իւր իրրեւ զՆո՞ւի...» պէտք է ըլլայ

“իրրեւ զՄայրի [էրէդ]” : Նոյնպէս Նո՞ւ գործածուած է փոխանակ Մայրիի Եղեկ . Իէ . 5 և 25 համարներուն մէջ :

* * *

Ընդհակառակը Հայերէնն ու Յունարէնը Մայր , Կէծօս կը զնեն փոխանակ Երրայտական Բլուշին , որ է Նոսի , Բ ՄՆ . Գ . 5 , Եղեկ . Իէ . 5 :

Ամերիկեան Միսիոնարաց աշխարհաբար Սուրբ Գիրքը Մայր կը զնէ ամենուրեք Երրայտական Բլուշին տեղ փոխանակ Նոձիի , իսկ Նոձի կը թարգմանէ Երրայտական ըձ շլմինը որ է ծառ իւղոյ (Գ. Թագ . Զ . 23 , 33) :

* * *

Հայերէն Աստուածաշունչի մէջ Մայրի գործածուած է Անտառ նշանակութեամբ , Ժող . Բ . 6 . “Արարի ինձ աւազանս ջրոց՝ արբուցանել զանտառախիտս մայրեաց” : Յունարէն Ճզն , Երրայերէն ըձիմ (ծառեր , անտառ) բառին փոխարէն . Նոյն իմաստով է դարձեալ Սաղմ . ՃլԲ . 6 . “Ահա դտաք զնա յԵփրաթա , և զրտաք զնա ի դաշտս մայրեաց” և Միքէ Գ . 12 “Եւ լեասն տաճարին՝ յանտառ մայրւոյ” :

* * *

Սաղմ . 1.2 (Աէ) 35 . “Տեսի զամողարիշան վերացեալ բարձրացեալ որպէս զմայրս Լիրա-

Նանու : Անցի՝ և ահա ոչ էր , խնդրեցի՝ և ոչ
գտաւ տեղի նորա» :

Մայր բառը զոր կը գործածէ Հայ թարգ-
մանիչը այս հատուտօծին մէջ , ճշգրիտ արտա-
յայտութիւնն է Եօթանասնից կէ՛ղրոսին , միայն
թէ Երրայրական բնագիրը ոչ թէ կրկզ բառն
ունի . ինչպէս պէտք էր ըլլար Մայրին փոխա-
րէն , ալ Եղրահ :

Այդ Եղրահի բուն իմաստն է Տեղացի , բնիկ ,
այսինքն բնիկ տունկ մը , և արդարեւ այդ-
պէս ալ թարգմանած է Յերոնիմոս Արքան .
Vidi impium robustum, et fortissimum
Sicut «indigenam» virentem , մինչդեռ Վուլ-
գաստան ունի Sicut «cedros» Libani :

Մեկնիչք այժմ Եղրահը կ'ընդունին իրեւ
դափնի , laurier , և անդդիական թարգմանու-
թիւնն ալ այդպէս կը դնէ bay-tree :

Ցայտնի է թէ Եօթանասունք Եղրահ ուսա-
նան [կանաչ]ը կրկզ բը յիբնան կարդացած են :

Հայերէն Հէքիմարանի բառագրքին մէջ կը
գտնենք . «Եղրեղու պտուղ , Յարըլդար , Դափ-
նի .— Հարօլդար , Դաֆնու պտուղ , կասլայի
պտուղ» :

Եղրեղի անշուշտ նոյնն է Երրայրական Եղրահին
հետ :

Դափնիին Հայերէն հոմանիշ կը ցուցուի
նաեւ Կասլա և Դարսենեկ . «Ղար որ Ֆր . Լա-
յուրի (laurier) ասէ , և Հ . Կասլայ ասէ և
Հո . Տաֆնի ասէ և դարսենեկա կու ասեն , և
իր պտուղն սեւ հատկներ է (Ամիրտ .) :

* * *


Հիները շատ մը կոնաբերներ կը շփոթեն իրարու հետ . Դեւա . ԺԴ . 4 , 6 և Թու . ԺԹ . 6 . յիշուած երկզը տեսակ մը զի է անշուշտ որ առատօրէն կը գանուի Սինայի անապատին մէջ ուր կը գանուէին այն ժամանակ Իսրայէլացիք և ուր Մայրի չկայ :

Պղինիոս չորս տեսակ Մայրի կը յիշատակէ որոնց մէկն է իրական Սարդը , այն՝ զոր կ'անուանէ Cedrelate , այսինքն Սարդ-Եղեւին , ասիկա կը բացատրէ թէ ինչու թարգմանիչք տեղ տեղ կե'դրուը եղեւին , եղեւնափայտ թարգմանած են :

Մայրին կամ Սարդը կոնաբերներու տռնմէն են , եղեւնեայներու կարգէն : Սարդի կամ Մայրիի երեք տեսակները ծանօթ են . 1) Աչշանտական Մայրին , Cedrus Atlantica , կ'աճի Ափրիկէի մէջ Ատլաս լերան վրայ , կարճ տերեւներով արծաթագոյն ու փոքր կոներ , 2) Դիւադարա Մայր Cedrus Deodara , զոր Ամիրտովլագի մէջ կը գանենք Դիւաց կամ Քաջաց ծառ անունով . Հիմալայա լերանց Սարդն է , մինչեւ 70 մէտր բարձրութիւն կ'ունենայ , ճապուկ ճիւղեր ունի ու վար կախուած , տերեւները մոխրագոյն են , Աւիսեն ասոր մասին խօսելով իր Կանոնին մէջ , կ'ըսէ . «Տեսակ մը զի [sabine=լր.] որ կը կռչուի Հնիդիկ Մայրի , իր ճիւղերը կը նմանին զրումբատին ճրնած ճիւղերուն , քիչ մը դառն է . Ճայ ճայ կոչուածը իր կաթն է , տաք :

Երրորդ և ամենէն ծանօթ տեսակն է Լիւրանանու Մայրին որու վրայ միայն կը խօսի

Ար. Գիրքը, բարձր ծառ է, բունը կը բարձրանայ ուղիղ մինչեւ 30 մէտր, բրդաձեւ, կատարը բարակ ու հակած դէպի ի հիւսիս . Արե-




Մայրի կամ Մարդ (պտուղ). — *Cedrus Libani*.

ԵԵԼՔԻ ամենէն վեհ ծառն է ան : Իր բունէն շուրջանակի կը տարածուին բազմաթիւ ոստեր , որոնք կ'երկարին հորիզոնական կերպով հողմահարի մը պէս : Ասեղնաձեւ մանր տերեւներ ունի կանաչ արծաթագոյն , որոնք խրձաձեւ միացած են մէկ կոթի վրայ ոստերուն վերեւ , իսկ նորաբողբոջ ճիւղերուն վրայ այս տերեւները հատիկ հատիկ են :

Միաբնակ (monoique) ծառ է Մայրին . որձ և էդ ծաղիկները առանձին խրացներ կը կազմեն : Պտուղն է կոն՝ ձուաձեւ , ցից , խիտթեփերով , որոնց խրաքանչիւրին ստորեւ երկու սերմ կայ մէջը խլուս նուշով . այս կոները 8—10 հարիւրորդամէտր երկարութիւն և 5—6 հարիւրորդամէտր լայնութիւն ունին :

Հին ժամանակները լիբանան ծածկուած էր

Մայրիի անտառներով որոնցմէ ոչ միայն Դաւիթ
և Սողոմոն շինեցին պալատներ և երուսաղէ-
մայ տաճարը, այլ և ժամանակ եղաւ որ Երու-
սաղէմի մէջ Մայրիի փայտը նոյնքան առատ
էր որքան մոլաթղենին (Գ. Թագ. Ժ. 27, Բ
Մն. Ա. 15), ու Աենեքերիմ Ասորեստանի
թագաւորը իր բազմաթիւ կառքերով Լիբա-
նանի լեռները բարձրացաւ և անոր ընտիր
Մայրիները կոտորեց (Գ. Թագ. ԺԹ. 23, Ես.
Լի. 16): Սակայն չարունակ կտրուելով՝ ա-
ռանց հսկողութեան, այժմ չատ քիչ կը գըտ-
նուին Մայրիի անտառներ Լիբանանի մէջ. ա-
մենէն կարեւորն է Շայր-է-Լ-Քոտիրի անտառը,
Նէրի կաղիչայի աղբերակին մօտ, հոն կը
գտնուին չորս հարիւրի չափ Մայրիներ որոնց
տասը չատ պատկաւելի հնութիւն մը կը ներ-
կայացունեն: Այս ծառերու պահպանութիւնը
յանձնուած է այժմ Մարոնիտ քահանաներու
հսկողութեան, որոնք ամեն տարի Վարդավառի
տօնին օրը պատարագ կը մատուցանեն բացող-
եայ հինաւուց Մայրիի մը հովանիին տակ:



ԿՏԱԿ, ՎՈՒՇ


կտաւ , վուշ .—ԵՐԲ . պիշտայ .—ԼԻՆՈՎ . — Linum.—Linum Usitatissimum L.—ԱՆԳՂ . Flax.—ԹՐՔ . كتن fıraklı , որմէ Հայերէն ֆրան :

Կտաւը կամ վուշը հիւսուածանիւթ տուող տունկերէն մէկն է , կովկասեան ծագում ունի ու անկէ տարածուած է Եւրոպա . անոր հարիւրի չափ տեսակները կան , ասոնցմէ ամենէն ծանօթն ու ընդհանրացածն է Linum usitatissimum , մշակուած կտաւ ըսուած տեսակը :

Մշակուած կտաւը տարեւոր տունկ մրն է , լերկ , 50-60 հարիւրորդամէտր բարձրութեամբ . տերեւները նիզակածեւ են , եռաջիղ . ծաղիկները նուրբ են շղարշային կապոյտ գոյնով իրենց վրայ ունենալով մութ գոյնով զիծեր . 5 փերթ ունի անջատ և ամրող . 5 թերթ՝ 3 անգամ աւելի երկայն քան փերթերը , 5 առէջ բեղուն , երկայնածեւ կկչանով որոնք 3 անգամ աւելի երկայն են քան լայն . 4 ծիղ ունի լախտածեւ սոսորդներով . պառզէն է գընդածեւ տասը խորչերով իւրաքանչիւրը մէկ մէկ սերմով . կտաւին սերմը , կտաւատն է լուի գոյնով , տափտկ , երկայնածեւ և փայլուն :

Կտաւին ծղօաը կազմուած է երկայն թելերէ և փայտային մասէ , թելերը փայտէն զատելու համար , խուրճ կը կապեն և 15 օրի չափ վազուն ջրի մէջ կը թողուն , թրջոցը կը դնեն (rouillage) . յիսոյ ծեծելով կամ մեքենայով

փայտային մասը կը զատեն, կը նետեն. կտաւէն կը շինեն առանին ամենէն յարդի կերպասները, կտաւատը բժշկութեան մէջ եւս կը գործածուի, փոքր քսնակութեամբ եթէ ուտուի, փոքր կակուղ կը պահէ, ջուրի հետ եփելով՝ կ'ըլլայ լափա, փոքրի ցաւերը հանդարտեցունելու կամ պալարները հասունցունելու համար:



Կտաւ կամ վուշ (Գայլուկ վարակուած). —
Linum Usitatissimum (envahi par la
Cuscuta Epilinum).

Կտաւաւատէն կը հանեն իւղ որ նկարչութեան
մէջ կը գործածուի իբրև չորցունող (siccatif),

նոյնպէս սոնդաներ որ կը ճանչցուին sonde en gomme élastique անունով :

Կտաւի տեսակ մը կայ որ ծանօթ է լուծողական կտաւ Linum Catharticum L. անունով, 10—40 հարիւրորդամէտր բարձր խոտ մընէ, սպիտակ ծաղիկով. իբրեւ լուծողական կը գործածուի :

Կտաւը շատ լաւ ծանօթ է ի չայս որ հաւանաբար իր օրբանն է. կտաւին հոմանիշ կայ վուշ : Միսիթար Գօշ իր և առակին մէջ կը գրէ. «Մարմնոյ մեծութեամբ՝ բակլա և սիսեռն պարծէին առ հատ կտաւուտի և կնճըթան : Եւ նոցա ասեն. փոքր եմք հասակաւ, ոակայն բեղմնաւոր, զի ժողովեալ և աանջեալ մարդկան, լինիմք կերակուր և նիւթ լուսոյ » Միսիթար Գօշ նոյն իսկ իր ձեկի առակին մէջ կտաւագործութեան բառերն իսկ կը յիշէ :

*
* *

Աստուածաշունչի մէջ յիշուած են կտաւ և վուշ բառերը Երբայական պիշտայ բառին փոխարէն :

Կտաւ գործածուած է Ել. Թ. 31. Ղեւտ. Ժդ. 53. 59. Բ Օր. ԻԲ, 11. Յես. Բ. 6:

Վուշ բառը կայ Մարդարէութեանց մէջ. Ես. Ա. 31. Դան. Գ. 46 :

1) «Կտաւն և գարին հատաւ [ի կարկուտէն], զի գարին յոճ կայր և կտաւն սերմանացեալ էր» : Արդարեւ կտաւը Փետրվարի վերջ կը ցանեն և Յունիսին կը քաղեն. Յունարէն բնագերը կը դնէ լինով լինոն :

2) Ղեւտ . ԺԳ . ի մէջ Երկու անդամ յիշուած է կտաւ 53 և 59 համարներուն մէջ : Առաջին տեղը , ոչ Երրայական բնագրին և ոչ Յունական կամ Լատինական թարգմանութեանց մէջ գոյութիւն ունի բառը , իսկ 59 համարին մէջ Յունարէնն ունի ունկու Ստիւպէ որ է խծուծ , ետուք :

3) «Մի՛ զգենուցուս այլախառն՝ դասր և զկտաւս ի միասին» . Յունարէնն է լի՛նոն , իսկ Յես . Բ . 6 .

4) «Թագոյց զնոսա ընդ խրձամբ կտաւոյ , Յօթանասունք կը դնեն և առօկալամդ լինովալա՛մէ , կտաւի ծղօտ :

Իսկ Մարգարէութեանց մէջ կտաւի տեղ գործածուած է վուշ , ինչ որ նոր ապացոյց մըն է թէ անոնց թարգմանիշը տարբեր անձ է :

5) «Եւ եղիցի զորութիւն նոցա իրրեւ զծեծած վշոյ , և զործք նոցա իրրեւ կայծակունս հրոյն Ես . Ա . 31 : Յունարէն ծառակալամդ ոււտնու [որպէս ծղօտ խծուծի] , իսկ Վուլգատան սէ favilla stuppare [որպէս կայծակունս խծուծի] :

6) «Եւ ոչ դադարէին , որք արկին զնոսա , սպասաւորք թագաւորին՝ ի բորբոքելոյ զնոցն նաւթիւ և ձիթով և վշով և որիթով : » Դան , Գ . 46 :

Երրայական բնագրին , ինչպէս նաև Յօթանասից թարգմանութեան և Վուլգատային մէջ այս համարն ինչպէս ուրիշներ (Գ . 25-90) որ կը կազմին Սեղբակի , Միսաքի և Աբեթնագովի աղօթքը հնոցին մէջ , կը պակսին :

ՍԱՌ ԻՒՂՈՅ

Երբ . ըն շկոկն . — Oleaster . — Chalef . —
Eleagnus Angustifolius L .

Երրայտական ըն շկոկնը որ բառական իմաստով կը նշանակէ ծառ կամ փայտ իւղոյ , նկատուած է գիտական անունով Eleagnus Angustifolius L . կոչուած փոքր ծառը . 2—4 մէտր բարձրութիւն ունի այս ծառը , ճիւղերը ցից են և արծաթագոյն . տերեները փայլուն են , վերեր գորչ , իսկ ներքեւը սպիտակ , կը նմանին ձիթենիի տերեներուն և նիզակածեն են ու ամբողջ :

Մաղիկները՝ դուրսը ճերմակ , ներսը դեղին են և 1 , 2 , 3 թիւով կախուած տերեներու անութէն , զօրաւոր հոտ ունին . զանգակածեն ծաղկապատը սրածայր 4 եռանկիւնի բլթակ (lobe) ունի , 4 , 6 առէջ , սոսորզը լախտածեն է . պտուղը ձռւածեն , գեղին կամ կարմրագոյն անուշ համով , ուտելի . միջակ իւղմը կուտայ :

Փայտը կարծր է և շինուածներու յարմար : Տեսակ մը կայ , Արեւելեան , Orientalis կոչուածը , աւելի լայն տերեներով՝ որու պտուղը կ'ուտեն Արեւելքի մէջ , ինչպէս Պարսկաստան

և կը կոչուի Պարսկերէն Սինշիդ (Vigouroux,
Dict. de la Bible. Art. Chalef):

* * *

Երբայական ըձ շիմենը գործածուած է դ
Թագ. Զ. 23. 31, 32, 33. Նէհ. [Բ Եղբ.] Բ.
15. Ես. ԽԱ. 19:

Եօթանասունք երբեք չեն հասկցած թէ ի՞նչ
է ըձ շիմենը. դ. Թագ. Զ. 23ի մէջ թարգ-
մանած են լիպարիսոս, Նոմի, ինչպէս նաեւ
Նէհմիի Բ. 15ի մէջ, իսկ դ. Թագ. Զ. 31ի և
33ի մէջ, զի, զիկ փայտ, բայ'լա 'արկեւրինա և
Զ. 32ի մէջ մայր փայտ, բայ'լա պե՛ւկինա:

Ես. ԽԱ. 19ի մէջ Եօթանասունք բոլորո-
վին զանց ըրած են թարգմանել ըձ շիմենը:

Վուլգատան Lignum olivae կը թարգմանէ
դ. Թագ. Զ. 23, 31, 32, 33 համարներուն ինչ-
պէս նաև Ես. ԽԱ. 13ի մէջ, իսկ Նէհ., Բ. 15
կը դնէ lignum pulcherrimum [շատ գեղե-
ցիկ ծառեր]:

Հայ թարգմանիչք ըձ շիմենի թարգմանու-
թեան մէջ չեն հետեւիր միշտ Եօթանասոնից և
անոնց սխալը տեսնելով՝ վարանումի նշաններ
ցոյց կուտան:

Դ. Թագ. Զ. դլխուն մէջ կը հետեւին Եօ-
թանասոնից. 23 ի մէջ կը դնեն նու (ուս էջ 113),
32 ի մէջ մայր փայտ, իսկ 31 և 33 ի մէջ Գի,
ի փայտից զիոց, (էջ 63):

Եսայիայ ԽԱ. 19 ի մէջ թարգմանիչը բոլո-

բովին կը հեռանայ Եօթանասնից բնագրէն և
կը զնէ փոխարէն ըձ շիմկնի՝ զի և փայտ իւղոյ,
զի՝ յիշելով որ Դ Թագ. Զ. 31 և 33 ի մէջ
ըձ շիմկնի տեղ զի զրուած է, իսկ աւելցունե-
լով փայտ իւղոյ, քանի որ Ասորական բնագիրն
ունի կայսու հոգ մեշին, մինչդեռ Յունական
Բնագրին մէջ ոչ մին կայ, ոչ միւսը :

Այս նկատողութիւնը շատ փոքր բան մըն
է, սակայն ցոյց կու տայ թէ որչափ խղճամիտ
էին Հայ թարգմանիչք և որքան տքնեցան
որպէս զի իրենց կատարած գործը ըլլար կա-
տարեալ և ճշգրիտ :

Նէմիթ Ը. 15 ունի Առեաց փոխանակ ըձ
շիմկնի, կը կարծենք որ պիտի լինի նոնեաց,
ըստ Յունականին (տես Էջ 59, տող 12):

* *

Ամերիկեան Միսիոնարաց աշխարհաբար
Աստուածաշունչը նոնի կը զնէ անխտիր ըձ
շիմկնի փոխարէն :



ԱՍՏՈՒԱՄԱՇՈՒՆՉԻ ՏՈՒՆԿԵՐԸ

Այս յօդուածը իրեւ խմբագրական հրատա-
րակուած է «Աւետարել»ի 1913ի թիւ 38ին մեջ:

Այս նիւթին վրայ Տր. Արթինեանի
հմտալից յօդուածաշարին վերջ տալու
առերթով կը փափաքինք մեր շնորհակա-
լութիւններն յայտնել որ գիտուն բժիշկը
այս ուսումնասիրութեան ձեռնարկեց ու
այսքան շահեկան ու տպաւորիչ կերպով
ի գլուխ հանեց։ Մենք գիտենք թէ մեր
ընթերցողներէն շատեր խորին ուշադրու-
թեամբ կարդացին այս յօդուածները և
մեծապէս ալ օգտուեցան։ Եւրոպացի ու-
սումնականներ եւս շահագրգուեցան
այս ուսումնասիրութեան և նպաստաւոր
յիշատակութիւններ եղան Եւրոպեան
կարգ մը գիտական ընկերութիւններու
մէջ։ Արովհետեւ առաջին անգամն է որ
այսպիսի յօդուածաշար մը երեւցաւ
Աւետարելի մէջ, զարմանալի չէ որ մեր
ընթերցողներէն ոմանք, վհատելով թե-
րեւս օտար բառերու գործածումէն,
զանց ըրին կարդալ զայն։ Սակայն վստահ
ենք թէ ո՞ր Հայը որ յանձն առու զգու-
շութեամբ կարդալ յօդուածները, բազ-
դատել Ս. Գրաց նշանակեալ համարները

և քննել յիշուած ծտռերէն անոնք որ
մօա կը գտնուին, շահագրգուեցաւ և
ի վերջոյ գտաւ թէ կարեւոր բաւական
ծանօթութիւն ամբարած է ոչ միայն ծա-
ռերու, այլ և Հայ պատմութեան և գրա-
կանութեան և մանաւանդ Սր. Գրոց վրայ:

Սր. Գերըը ուսումնասիրելու շատ
կերպեր կան, և մէն մի կերպ իր յա-
տուկ օգուտն ու արժէքն ունի: Մեր
Քրիստոնեայ ժողովուրդները սովորա-
բար բաւական ծանօթութիւն ունին Սր. Գրոց մէջ պատմուած զլիսաւոր դէպքե-
րուն վրայ, նաև բաւական ճարտար են
անոնցմէ հոգեւոր գասեր հանելու մա-
սին, և յաճախ Քրիստոնէական վարդա-
պետութիւնը կը պաշտպանեն Սր. Գիր-
քէն վկայութիւններ բերելով: Սակայն
որչափ դիտած ենք մենք, Սր. Գրոց բուն
բառերը մանրակրկիտ կերպով և նուրբ
խղճմտութեամբ ուսումնասիրելու մասին
առ հասարակ ողբալի կերպով ետ են
Հետեւաբար ընդհանրապէս կը ծուլա-
նան ըմբռնել ինչ որ իսկապէս կը սոր-
վեցնէ Սր. Գիրքը և յաճախ ալ բոլորո-
վին սխալ կը հասկնան անոր միտքը:
Արդ չենք մոռնար թէ գերը կը սպաննէ:

Մահացու սխալ պիտի ըլլար բոլոր մեր
ուշադրութիւնը բառերու քննութեան
տալ, ինչպէս յաճախ կ'ըլլայ Գուրանին
նկատմամբ։ Ինչ որ կ'ուզենք ստանալ՝ Սր.
Գրոց ոգին է, վասն զի հոգին է որ կր
կենդանացնէ։ Սակայն ինչպէս մարդ-
կային հոգին կ'իմանանք այնքան
միայն որքան յայտնուած է մարմնի մի-
ջոցով, նոյնպէս կրնանք Աստուծոյ Խօս-
քին հոգին իմանալ՝ խնամով ուսումնա-
սիրելով եւեթ այն բառերը, որոնցմով
յայտնուած է այդ հոգին։ Աստուծա-
շընչի ծառերուն վրայ Տր. Արթինեանի
յօդուածները աղուոր օրինակ են այն
մեթոսին, որու հետեւիլ պարտ է այս-
պիսի հետազոտութիւններու մէջ։ Ումանց
համար բացարձակապէս անկարեւոր կըր-
նայ թուիլ թէ Երբայական այսինչ բառը
նոճի* թէ քրքում կամ կաղնի թարգ-
մանուած է, բաւական է որ ծառի մը
անուն տրուած ըլլայ։ Այս է Արեւելքի
մէջ մարդոց ընդհանուր դիրքը հանդէպ
գիտական ճշգրտութեան։ Քիչ մը կարծ
կամ երկայն, քանի մը վայրկեան ուշ
կամ կանուխ, բոլորովին շիտակ կամ
քիչ մը ծուռ, ի՞նչ տարբերութիւն կ'ը-
նէ։ Ի՞նչ վսաս ունի, եթէ միտքդ-
անդզութեամբ արտայայտուի։ Կարե-

ւորն է բան մը ըսել, մնացեալն հոգ չէ։ Արեւմուտք ըմբռնած է թէ ուղիղէն աւ մենափոքը շեղում մը վնասակար է ունէ բանի մէջ։ Այդ պատճառով է որ արեւմտեան գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը իրենց ներկայ զարգացման հասած են։ Շատ կարելի է որ Ար. Գիրքի համարի մը մէջ ծառի մը անուան փոփոխումը մասնաւոր տարրերութիւն մը շընէ այսօր մեզի համար։ Սակայն մտքի այն անհոգ տրամադրութիւնը, որ կը յօժարեցնէ զմարդ՝ ճշգրտութեան կարեւորութիւն չընծայել բառերու գործածման մէջ, կործանում կը բերէ իմացական, բարոյական և հոգեւոր կեանքին։ Այս կը ճշմարտուի մընաւանդանոնց վրայ, որոնց գործն է Ար. Գիրքը քարողել և սորվեցնել։ Ոչ մէկ աշխատութիւն աւելորդ է, եթէ մեզի կ'օգնէ հասկնալ Ար. Գրոց ճիշտ նշանակութիւնը, վասն զի զայն ստուգելէ ետև միայն ի վիճակի կ'ըլլանք հասկնալ անոր հոդեւոր գասերը և նշմարել անոր Աստուածային գեղեցկութիւնը։

Այս յօդուածաշարը ուշագրաւ լուսաբանութիւն է նաեւ ծանօթութեան մասնաւոր ճիւզի մը իրապէս հմտանալու կարեւորութեան։ Փոյթ չէ թէ ո'քան

փոքր է այդ ճիւղը։ Ամբողջ ճշմարտութեան մէկ մասն է այն և ամէն կողմէ կը տարածուի ու կը միանայ ծանօթութեան ուրիշ և աւելի ընդարձակ ճիւղերու։ Յառաջդիմութիւն կ'ըլլայ տյնալիսիներու շնորհիւ, որոնք գոնէ մէկ բան լաւ գիտեն և ուստի կրնան ինքնատիպ հետազօտութիւններ ընել և ցարդ անծանօթ մարդ մը բանալ յօդուտ մարդկութեան։ Դարձեալ կ'ուղենք այս իրուղութեան վրայ դարձնել մեր կրօնական առաջնորդներուն ուշադրութիւնը և զիրենք յորդորել որ մասնագէտներ ըլլան իրենց ամենակարեւոր գործին մէկ ճիւղին մէջ։ Տր. Արթինեան ուստմասիրեց Սր. Գրոց բուսաբանութեան փոքր մէկ մասը միայն։ Բուսաբանութեան ուրիշ կողմեր կամ երեւոյթներ կան որոնք նման հետազօտութեան կը սպասեն։ Կայնաեւ Սր. Գրոց աստղաբաշխութիւնը, հոգեբանութիւնը, ընական պատմութիւնը, քաղաքական պատմութիւնը, իրաւագիտութիւնը, իմաստասիրութիւնը, և գիտական ուրիշ շատ յարաբերութիւններ։ Սր. Գրոց մեծ վարդապետաութիւններէն ուեէ մին կրնայ լիառատ նիւթ հայթայթել ցկեանս ուսումնասիրութեան։ Այսիպամ երկրին մէջ ո՞րքան կարեւոր է երեւելի մասնագէտներ ունենալ Աստու-

ծոյ, Քրիստոսի անձին և փրկագործութեան վերաբերեալ Քրիստոնէական մեծ վարդապետութիւններուն նկատմամբ Բազգատական կրօնագիտութիւնը ամենահրապուրիչ ասպարէղ կ'ընծայէ ուսման և հետազօտութեան։ Ասոնք ընդհանուր թելագրութիւններ են սոսկ, Գրեթէ անվերջ կարելիութիւններ կան ընտրելու համար յարմար նիւթեր, որոնց մէջ աշխարհ կը սպասէ լոյսի և առաջնորդութեան, զոր մասնագէտները միայն կարող են տալ։


Դարձեալ, ուրախացանք այս յօդուածները ներկայացնելով, վասն զի կը լուսաբանէին Աստուածաշնչի գրաբար Հայ թարգմանութեան շտհեկանութիւնն ու կարեւորութիւնը։ Եւրոպացի շատ քիչ ուսումնականներ հմուտ են Հայ լեզուին, և գժբախտաբար հաւանական չէ որ անոնց թիւը շատ բազմանայր Հետեւապէս հարկ է որ Սր. Գրոց հայերէն թարգմանութեան վերաբերեալ հարցերու ուսումնասիրութիւնը Հայ ուսումնականներու կողմէ ըլլայ մեծ մասամբ։ Այս է նաեւ ընտրելագոյն կերպը, տիպար կերպը։ Այս մասին մեր ծանօթութեան յաւելման ինպաստ Տր. Արթինեանի յօդուածներուն որոշ մէկ ծտուայութիւնը սա տպացոյցն եղաւ թէ նախնի Հայ

թարգմանիչներէն և սրբագրիչներէն ու
մանք Յունարէնէ և Ասորերէնէ զատ եր-
րայերէնի ալ տեղեակ էին։ Այս յայտնի
չեր առաջ Այս դիւտը ո՛րքան կենդանի
կերպով մեր առջեւ պատկերացուց այն
մեծ մարդիկը, որոնք Աստուծոյ ամբողջ
Խօսքը իրենց իսկ լեզուով ազգին ընծա-
յելու ազնիւ տեհնչով վառուած էին հա-
մակ։ Մանաւանդ ո՛րքան դդոյշ կ'ուղէին
ըլլալ ուղիղ թարգմանելու համար մէն
մի բառ։ Այդ պատուական մարդոց ան-
կեղծութեան ու ձեռնհասութեան վրայ
մեր վստահութիւնն աւելյաւ և հիմա
յաւելուածական պատճառ ունինք գրա-
բար Սր. Գիրքը «թարգմանութիւններու
թագուհին» անուանելու։

Կէտ մը եւս պարտիմք յիշել։ Տր. Ար-
թինեանը կը շնորհաւորենք որ այս ու-
սումնասիրութիւններն ընելէ ետեւ յօ-
ժարեցաւ զանոնք ի դիր առնել և հրա-
տարակել։ Լաւ և շատ պիտանի օրինակ
է այս։ Մեր համոզումն է թէ կարող
շատ այլեր ու կիներ կան մեր մէջ, որ
կընային իրենց ժողովրդին շատ աւելի
օգտակար ըլլալ, եթէ միայն հարկ ե-
ղած յոդնութիւնն ստանձնէին իրենց
Աստուածատուր տաղանդները զարգացը-
նելու համար։ Մանօթութիւն չպակսիր,
ոչ ալ հետազօտելու, ի վեր հանելու և

գրելու կարողութիւն, Բնական այդ տաշանդները, ինչեւիցէ պատճառով, անդործ կը մնան ընդհանրապէս: Ումանց արգելքն է թերեւս համեստութիւն, ումանցն ալ թերեւս ուրիշ պարտականութիւններու ծանր ճնշում: Բայց մենք վստահ ենք թէ մեր կրօնական, կրթական և ճարտարական առաջնորդներէն շատեր այժմեանէն շատ աւելի ծառայութիւն կրնային մատուցանել, եթէ ժամանակ տային գրական ոճի մշակման կամ իրենց խորհուրդները պարզ ու շահագրգող լեզուով արտայայտելու կարողութեան: Այս առիթով կը փութանք այս գաղափարը ներկայացնել բոլոր անոնց ուշադրութեան որոնք այս տողերը պիտի կարդան: Ի սկզբան թերեւս գլուխար ու յուսահատեցուցիշ ըլլայ մեր թելագրութեան հետեւիլ: Սակայն յարատեւութիւն ու վարժութիւն պիտի բերեն դիւրութիւն և գելթ բանաւոր չափով յաջողութիւն: Քսելու արժանի բան մը ունեցէք և ապա արժանավայել կերպով մը ըսէք զայն:

ՎԵՐ. ՏՐ. Ֆ. ՌԵ. ՄԵԹԱԼԱՄ





ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀԱՅԵՐԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1. Առաջին տարերք բնակոն և բնապատմուկան գիտութեանց.
- Մատն Ա. Մարդի և կենդանիի, սարգ. 6,
Մատրիուսան 1893:
- Բ. Տունկեր:
2. Հ. Քաջունիի բառագրելին բնապատութիւնը.
Կ. պոլիս. «Հայրենիք», 1895:
3. Բարձրագոյն ուսուման հոսուատրիւններն ի
Ֆրանսոս, «Հայրենիք», 1894—95—96:
4. Տունկեր և անոնց Հայերէն անուններ, Փա-
րիզ 1907:
5. Դուք Զուրայիցի Հայերու տաեւուրն ժ.Զ դա-
րուց. «Անակիտ», 1907:
6. Հայ բժշկարաններու ղեղօրաց/իրատարակելի/:
7. Գաղիանոսի բառ. /իրատարակելի/:
8. Առուածառնչի անդամազննական և բնա-
խօսական բառեր /իրատարակելի/:

~~ԳԵՂԻՆԱԿԻՆ ՀԱՅԵՐԸ~~

